Վորսորդը զարմանքը դեմքին չուռ յեկավ: Ռի-
խարդը մոտենալով, հրացանի փակադակը շրխկացնե-
լով հրամայեց:

— Ֆած դրեք հրացանը...

— Ընկեր...

— Վոչ մի խոսք, ցած դրեք հրացանը:

— Ընկեր, դուք գիտեք յես ով եմ:

— Ասում եմ ցած դրեք հրացանը:

Վորսորդը ձարահատյալ ցած դրեց հրացանը:

— Այժմ առաջ անցեք:

— Ուր էք կամենում ասնել ինձ, յես ինձեներ
եմ և աշխատում եմ սղոցադործարանում:

— Առաջ անցեք, ուղեկալում կարգենք, թե ով
էք:

— Ընկեր սահմանապահ, յես կդանդատվեմ ձեր
հակաորինական վարմունքի համար:

— Կրկնում եմ, առաջ անցեք:

Վորսորդը փնթփնթալով առաջ քայլեց, հետո նա
չուռ յեկավ:

— Յեթե խոսքերիս չեք համատուժում, յես կարող
եմ ցույց տալ վկայականներս, յես սղոցադործարանի
ինձեներ եմ, համատուցեք ինձ: Ամեն որվա պես յես

աշխատանքից հետո վորսի դուրս յեկա, ինձ սահմանապահները շատ անգամ են տեսել, վոմանք ծանոթ են ինձ հետ...

— Ավելորդ չխոսել, — դուստր Ռիխարդը:

Այսպես նրանք յերկար քայլեցին: Հեռվում յեբևաց ուղեկալի շենքը: Վորսորդը դարձյալ կանգ առաւ:

— Լսիր բանակային, ստացիր հազար ուսուցի յեվ բաց թող ինձ:

— Սուաջ քայլեր...

— Ստացիր ինչքան ուզում ես, միայն բաց թող ինձ:

— Բայց իր սուանց վորեւ խոսքի:

Մոտեցան ուղեկալին: Ծեմքից դուրս յեկան յերկու բանակային և մոտեցան նրանց:

— Ռիխարդ, այդ ո՞ւմ ես բռնել: Սղոցադործարանի ինժեներ Կրասնովին, — ասաց նրանցից մեկը: Վորսորդն ուրախացած նայեց բանակայինին, ու պա վրա բերեց:

— Դուք ինձ ճանաչում եք, ընկեր, այո՛, յես ինժեներ Կրասնովին եմ: Այս ընկերոջը վորքան ասացի, չի հավատում: Կարգադրեցեք, վոր ինձ բաց թողնի:

— Ռիխարդ, բաց թող ինժեներին, անհարմար է:

— Բաց չեմ թողնի, դու դեռ չգիտես, թե դա ինչ մարդ է Պանչուկ, — ասաց Ռիխարդը և հրամայեց վորսորդին ներս մտնել:

Ռիխարդը նրան ստորալ ուղեկալի պետի սենյակը: Լեյտենանտ Սկլյարովին նա յերկու փոսքով դեկուցեց յեղելութունն, արքա թուլլատութունն ստանալով դուրս յեկալ: Բակ դուրս գալով, նա հանդիպեց Շայքին, վորն ատամների մեջ բռնել էր կիսախեղդամահ սեղ շնիկին: Նրա վզկապից բռնել էր Սամչուկը և ժպտում էր: Ռիխարդը մերցրեց սեղ շանը, հանեց նրա մզից կապած փաթեթն ու շոյեց Շայքի գլուխը:

— Վորքան խելոք ես Շայք, շնիկին խեղդելիս նույնիսկ թուղթը չես միջացրել:

Ռիխարդը մտալ ուղեկալի պետի սենյակը յեվ փաթեթը հանձնեց լեյտենանտ Սկլյարովին:

— Ո՞վ բերեց:

— Շայքը...

— Ինչ էք ասում:

Ուղեկալի պետը բացեց փաթեթը. այնտեղ խնամբալ փաթաթված էին բարակ թղթի վրա կատարած դժագրեր, վորոնց մեջ գետեղված էր մի փոքրիկ գրութուն: Գրութունն ընթերցելուց հետո պետն իր հայացքն ուղղեց «վորսորդի» վրա:

— Այժմ ինչ կասեք «ինժեներ»:

«վորսորդը» կախեց գլուխը:

Ռիխարդը դուրս յեկալ սենյակից:

Գրում նրան անհամբեր սպասում էր Շայքը:

ԱՂԶԻԿԸ

Դիվիդիոննի շտաբի պետ Չուլիդովը դուրս դալով ճամբարից՝ բռնեց քաղաք տանող ճանապարհը և մի մարտական յերգ սուրբով սկսեց քայլել:

Գիշերվա ժամը 10-ն էր. ճանապարհը վողորված էր լուսնի արծաթ լույսով: Բուրում էր ծաղկած ա-կացիները անուշ հոտը:

Չուլիդովը սիրում էր յերբեմն դիշերները քայլել մենակ, ամայի դաշտերով և զիզգազ ճանապարհներով:

Հեռվում փռվել էր քաղաքը, վոր իր բազմաթիվ լուսե թարթիչներով նման էր աստղալից յերկնքի:

Քայլում էր Չուլիդովը և նայում քաղաքին: Նա դադարեց սուլելուց: Գերեզմանատան մոտով անցնելիս, լույսի տակ վերեմ ցցված գերեզմանաքարերը նրա վրա թողին ճնշիչ սպափորութուն: Չուլիդովը հանեց գլխարկը և մազերը դեմ անելով մեղմ գեփյու-սին, քայլերն ավելի դանդաղեցրեց: Հանկարծ նա կանգ առավ ու ձեռքն ակամա տարավ դեպի ատրձա-նակը: Նրանից մի քանի քայլ հեռու՝ գերեզմանատան նածը պատից ցատկեցին յերկու մարդ և սկսեցին փախչել քաղաքի ուղղությամբ: Չուլիդովն ուղեց վազել նրանց հետվից, բայց նույն րոպեյին լսեց մի թույլ աղերսագին ձայն:

— Ոգնեցե՛ք... ք...

Չայնը դալիս էր գերեզմանատանից: Չուլիդովը վախկոտ չէր, բայց և այնպես՝ հանեց ատրձանակը և պատից ցատկեց գերեզմանատուն:

— Ոգնեցե՛ք... ք...

Նա կոխ տարով փոքրիկ գերեզմանաթմբերը, գր-նաց դեպի այն կողմը, վորտեղից լսվում էր ձայնը:

— Ո՞վ է այդ, ոգնեցե՛ք, ազաչում եմ — հան-կարձ ուղիղ նրա առաջ, մի քանի քայլ հեռվից լըս-վեց նույն ձայնը:

Չուլիդովը վազեց նրա մոտ և քարացածի պես կանգ առավ: Նա տեսավ յերեսն ի վար փռված մի կնոջ մարմին, վորի ձեռներն ու վոտներն ամուր կապված էին: Չուլիդովն իսկույն հանեց ծալովի դանակը, կտրատեց կնոջ կապանքները: Կինն իսկույն բարձրացավ և հարցրեց.

— Ո՞ւր կորան այն սրիկաները:

Նա մոտ 27 տարեկան աղջիկ էր. հեվալով նա մի անսպասելի թռիչք կատարեց դեպի գերեզմանատան պատը և ուղեց ցատկել, բայց Չուլիդովն իր ուժեղ ձեռներով հետ քաշեց նրան:

— Սպասեցե՛ք, դուք նրանց ել չեք բռնի. սպա-սեցեք, այս ի՞նչ բան է:

Աղջիկը հուսահատորեն նստեց փոքրիկ գերեզմա-նաքարի վրա յեմ գլուխն առավ ձեռների մեջ: Թը-վում էր, թե նա ապրած սարսափից քարացել էր յեմ անկարող ե լալ: Չուլիդովը պարզ տեսնում էր այ-նակարող ե լալ:

— Սրիկանե՛ր, ինձ խաբեցին... Յես Մոսկվայից եյի դալիս, դնում եյի մեր գլուզը՝ ճնողներս մոտ արձակուրդս անցկացնելու: Յես այստեղ պիտի գնաց-բըս փոխելի: Քաղաքում չունեյի վոչ մի ծանոթ: Կայարանում մոտեցա տարիքավոր, վայելուչ հաղ-նված մի մարդու և հարցրի հյուրանոցի հասցեն: Նա ասաց, վոր ինքն ել է գնում հյուրանոց և կարող ե ինձ ուղեկցել: Չեպիս կար մի փոքրիկ ճամբուկ և նոր գնված պորտֆել: Այդ մարդը վերցրեց ձեռ-քիցս ճամբուկը և հետս սիրայի գրուցելով դուրս յեկանք կայարանից: Յերբ մենք քաղաքից հեռա-ցանք, սիրոսս մի վախ ընկավ: Յես ուղեցի հեռա-գառնայ, բայց այդ ժամանակ անսպասելիորեն, չգիտեմ վորտեղից, մոտեցավ մի ուրիշ սրիկա

յեվ յերկուսով քարչ տախն ինձ ահա այստեղ :
Նրանք կողոպտեցին ինձ և կամենում էին բռնաբա-
րել, բայց լսելով ձեր քայլի ձայնը, թողեցին, փա-
խան : Յես լեզվովս մի կերպ մի կողմ թեքեցի բերա-
նրս խոթած թաշկինակը և սկսեցի դուռալ : Ահա բո-
լորը . . .

Աղջիկը լսեց :

— Մոսկվայում սովորո՞ւմ է յիք, — հարցրեց
Զուլիբովը :

— Այո, սովորում եմ բժշկական ինստիտուտում :

— Իսկ ի՞նչ վերցրին ձեզնից այդ սրիկաները :

— Նրանք տարան իմ վերջին կոպիկները և բոլոր
վկայականներս ու անցազիրս : Յես չգիտեմ, թե ինչ-
պես պիտի դուրս դամ այս դրությունից :

Աղջիկը հուսահատությունից տկոնեց ձեռքերը
արորել :

— Գնանք, յես ձեզ կողնեմ, — ասաց Զուլիբովը :

— Ծնորհակալ եմ ինձ հարկավոր է միայն զի-
չերելու տեղ և յերեք որվա ապրուստի միջոց, մինչև
ծնողներիցս փող կատանամ : Յես նրանց կհեռագրեմ :
Իսկ ձեզ, կարծում եմ, կարելի չէ վստահել, դուք
կարմիր Բանակի հրամանատար եք . . .

Նրանք դուրս յեկան պերեգմանատնից յեվ մտան
քաղաքի փողոցներից մեկը : Կանդ առան երեքարա-
քարչի կայարանում : Ելեքորական վառ լույսի տակ
Զուլիբովը մի հայացք ձգեց աղջկա վրա և ապշած
մնաց նրա անչափ պեղեցկությունից : Իսկ յերբ ելեք-
տրաքարչը կանդ առավ, նրանք յերկուսով, ինչպես
վաղուցվա մոտիկ ծանոթներ, ժպտալով բարձրացան
վազոնը : Բազմաթիվ ուղեվորների հայացքներ բե-
վեռվեցին աղջկա պեղեցիկ դեմքին և սքանչելի իրանի
վրա : Զուլիբովն իրեն մի քիչ շոյված դգաց, յերբ
տղամարդկանց նախանձոտ հայացքներն ուղղվեցին
նայելի վր վրա : Նրանք ցած խջան ուղիղ գորանոցի
դարբասի առջև : Զուլիբովը բացեց փոքրիկ դռնակը
և նրանք ներս մտան :

— Ո՞վ է դայիս, կանդ ա՛ն — հանկարծ լավից
մի ահեղ ձայն մթության մեջ :

— Ահ, — ծվված աղջիկը և վախից կալավ Զուլի-
բովին ու ամուր դրկեց նրան :

— Յես եմ, շտաբի պետը, Բուրյա՛կ : Միք վա-
խենա, դա զորամասի պահակն է, — հանդատացրեց
Զուլիբովին աղջկան :

Պահակը վառեց սյունին ամրացված ելեքորս-
րամպը և հավաստիանալով, վոք դա շտաբի պետն է,
պատիվ տալով, բաց թողեց նրան :

Զուլիբովը բացեց սենյակի դուռը, վառեց լույսը
և նրանք ներս մտան :

— Դուք յերեվի քաղցած կլինեք :

— Այո, յես բավականին քաղցած եմ :

Զուլիբովն իսկույն սկսեց ընթրիքի պատրաստու-
թյուն տեսնել : Աղջիկը ժպտաց Զուլիբովին, լուռ ար-
տահայտելով իր յերախտիքը, ապա սկսեց դիտել սեն-
յակի ներքը : Սենյակը պարզ ու հրապուրիչ էր :
Առատաղի մեջտեղից կախված էր ելեկորո-
ւամպը, վոքի տակ դրված էր մի դրասեղան,
յերկու աթոռ, պատի մոտ զինվորական ծայովի մահ-
ճակալ : Յերկու պատուհան նայում էին դեպի փո-
ղոց : Աղջիկը տեսավ յերկու հայացք, վորոնք փողո-
ցից հեռաքրքրությամբ ներս էին նայում : Նա խո-
ժոռեց դեմքը և հայացքներն իսկույն չքացան :

Սենյակի հեռավոր անկյունում հասարակ, բայց
ամուր մի սեղանի վրա դրված էր ռադիո հաղորդիչի
և ընդունիչի ապարատը : Աղջիկն իր հայացքը կանդ-
նեցրեց այդ ապարատի վրա :

— Այդ ի՞նչ մեքենա յե :

— Այդ մեքենա չէ, դա ռադիոհաղորդիչ ապա-
րատ է :

— Ռադիոհաղորդիչ, այդ ի՞նչ ապարատ է, —
գարծացավ աղջիկը :

— Ինչ է, մի՞թե չեք լսել ռադիոհաղորդիչի մա-
սին :

— Ռադիոյի մասին շատ եմ լսել, բայց հաղորդելի մինչև հիմա չեյի տեսել, ահա ել այդպիսի մի տարրընակ ապարատ, — դարձացած ասաց աղջիկը։
Չուլիդովի մեջ ցանկություն հղացավ ել ամէլի դարձացնել այդ միամիտ աղջկան և նա սկսեց բացատրել։

— Այդպիսի հաղորդիչներ դուք յերբեք չեք տեսնի, փորովհետև նրանք ուղղակի հաղորդակցություններէ համար են գործածվում։ Այս բոպէյիս յես կհայտնեմ մեր ճամբարի հետ, փորր մեզնից 18 կիլոմետր հեռախորության վրա յի գտնվում։— ասաց նա, և մոտենալով ուղիտհաղորդիչին, հազամ ահանջակալներն ու սկսեց փնտրել հարկավոր ալիքը։

Մի քանի վայրկյանից հետո Չուլիդովը միկրոֆոնը մոտեցրեց և սկսեց կանչել։

— Ռոզա՛, Ռոզա՛ յես Չարկանն եմ, յես Չարկանն եմ։

Չուլիդովը տեսավ, թէ ինչպես աղջիկը դարձանքից չսած աչքերով նայում եր իրեն։ Նա ժպտաց յեյ մեկնեց աղջկան ահանջակալներից մեկն ու ձեռքով նշան արավ, փոր մոտեցնի ահանջներին։

Քիչ հետո նրանք լսեցին պատասխանը։

— Չարկան, Չարկան, լսում ե Ռոզան, լսում ե Ռոզան։

Աղջիկը նույնիսկ ծափ տվեց դարձանքից։

— Ռոզա, Ռոզա, յես Չարկանն եմ, խոտում ե չտաբի պետը, փոխեցեք հերթափոխությունը, ժամը 12-ն ե։

Չուլիդովը ցած դրեց ահանջակալները և ժպտալով նայեց աղջկա ել ամէլի դարձացած դեմքին։

— Իսկ այդ ի՞նչ ե, — հարցրեց աղջիկը ցուրց տալով հաղորդիչի մոտ ամբայցամ մուրճիկը։

— Այդ մուրճիկով մենք ուղիտհեռագրեր ենք հաղորդում իրար, Մորզէյի այրուքների միջոցով։

Այդ բոպէյին յետացող թեյամանից թափվեց ջուրը։

— Արդեն թէյը պատրաստ ե, — ասաց Չուլիդովը, և լիկարական թեյամանը սեղանի վրա դնելով։ Նա արկղից հանեց յեփած ձվեր, յերձիկ, պանիր յեյ հաց։

— Այժմ կարող ենք ընթրել։

— Խնդրում եմ ինձ տալ դրիչ, թանաք և թուղթ։

— Ի՞նչ եք անում։

— Յես պիտի ծնողներին նամակ գրեմ, փորպեսյի փող ուղարկեն։

— Առայժմ ընթրենք, վաղը կգրեք։

Նրանք մեծ ախորժակով ընթրեցին։

Գիշերվա ժամը յերկուսն եր։ Աղջիկը հոգնել եր և քնել եր կամենում։ Հոգնել եր նայել Չուլիդովը։ Նա վեր կացավ տեղից ու, վերցնելով դիտարկը, ասաց։

— Դուք կարող եք քնել։ Մահճակալս ձեր տրամադրության տակ ե։ Յես առավոտյան կանցնեմ...

Աղջիկը յերախոտապարտությամբ ժպտաց Չուլիդովին։ Նրանց հայացքները հանդիպեցին իրար, Չուլիդովը մի ինչ վոր անհասկանալի գուրեկան հուզմունքով լեցուն, հրաժեշտ տվեց դեղեցիկ աղջկան ու դնաց։

Պարզ յերկնքում լողում եր լուսինը, իսկ բակում լուսնի լույսի տակ հրացանը ձեռին հետ ու առաջ եր քայլում պահակը։

Գիշերվա մեղմ հովը շոյեց Չուլիդովի դեմքը և ախորժեկի թարմություն հաղորդեց նրան։ Նա բարձրացավ վերևի հարկը և մտավ պահակատուն։ Պահակապետ Տարախվածն նստած եր սեղանի մոտ յեյ ինչ վոր գիր եր գրում։ Պետի ներս մոտենլուն պես նա կանգնեց, ձգվեց և, պատիվ տալով, հարցրեց։

— Ընկեր պետ, թույլ տվեք ստուգել ձեր վկայականները։

Պետը ժպտալով հանեց գրպանից վկայականը յեյ մեկնեց Տարախվածէյին։

Վիպախականը ստուգելուց հետո Տալախվածեն դե-
կուցեց պահակախմբի գլուխի մասին:

— Յես պիտի զիջեիմ այսակ, աղաս մահճա-
կալ վա՞:

— Կա ընկեր պետ:

Քանի վոր պահակատանը կողմնակի մարդկանց
չի թույլատրվում գիշերելու, նրանք յերկուսով մահ-
ճակալը պատշգամբ հանեցին: Զուլիգովը փաթաթվեց
չինելի մեջ և պատկեց քնելու: Յերկար ժամանակ
քունը չեր տանում: Նրա աչքերի առաջ շարունակ այն
աղջիկն էր պատվում իր գեղեցիկ աչքերով, իր միա-
միտ անկեղծ հայացքով:

«Իսկ անունն փ՞նչ էր. այդ սիրուն աղջկա անու-
նը» — չչնջաց նա և ապա տխուր համոզել ինքն ի-
րեն, վոր պետք չէ քնել:

Մյուս ուրն ընդհանուր հանգստյան ուր էր:

Զուլիգովն չդնաց ճամբար: Նա այդ ուրը նվիրեց
աղջկան: Նա ծանոթացրեց աղջկան քաղաքի շրջապա-
տի և հնությունների հետ: Աղջիկը հետաքրքրվում էր
ամեն ինչով և դա ավելի էր դուր գալիս Զուլիգովին:
Նրանք քաղաքի փողոցներով քայլում էին թեփան-
ցուկ և իրար հետ խոսում ելին այնպիսի քաղցր տո-
նով, վոր տեսնողը կասեր, թե նրանք շատ վաղուց-
վա մտերիմներ են:

Իսկ հաջորդ ուրն առավոտ շուտ, նույնիսկ չմտնե-
լով իր սենյակը, Զուլիգովն ուղեվորովեց դեպի ճամ-
բար: Ճանապարհին նա մտածում էր, թե ար-
դյոք, արժե՞ աղջկա մասին պատմել զինկոմին կամ
իւր ընկերներից վորեւի մեկին: Քիչ մտածելուց հետո
նա յեկավ այն յեղրակացության, վոր չարժե այդ
մասին նույնիսկ ձայն հանել, քանի, վոր աղջիկը
յերկու-յերեք ուրեց հետո գնալու յէ:

Զորամասի դաշտավայրում կանաչների մեջ մար-
տիկները կատարում էին ստավոտյան մարմնամար-
զուլիցունը:

Զուլիգովն անցավ կարմիր անկյուն յեվ, այնտեղ
հանդիպելով զինկոմին, պատիվ տվեց:

— Ընկ. Զուլիգով, ինձ Տալախվածեն հայտնեց,
վոր ձեր սենյակում ինչ վոր կին և ապրում: Ո՞վ է
նա, — հարցրեց զինկոմը:

Զուլիգովը մի պահ լուռությոն պահպանեց: Նա
մեկ ուրեց պատմել, թե ինչպես էր հանդիպել աղջ-
կան, մեկ էլ մտածեց, վոր դա ավելորդ պարծենկո-
տություն կլինի, դրա համար էլ սասաց:

— Իմ հին ծանոթն է, ընկեր զինկոմ:

— Բայց և այնպես փտանգավոր է նրան թողնել
զորամասի բակում, այն էլ ձեր առանձնատեսչակում:

— Յերկու ուրեց հետո նա վաճկիտի գլուղ, — սասաց
Զուլիգովը և գնաց իր վրանը:

Գեղեցիկ և ուղիղահան ճամբարն իրիկնադեմին:
Արեփն իր վտակեղոճ ճառագայթներով սկսում է ծու-
լորեն լսողալ ծառերի և վրանների կատարների հետ:
Ծառերի խիտ տերեփների արանքում, չորս կողմից
չրջապատված ծաղիկներով, շարքով կանոնաձև են
սպիտակ վրանները, վորոնք հեռվից նմանվում են
թեփատարած ձերմակ աղավնիների: Վրանների դե-
մաց բաց ու հարթ հրապարակի վրա ցցված էլին ի-
րարից հինգ մետր դուգահեռ հեռավորության վրա
յերկու սյուն: Սյուներից կախված էր ցանցը, վորի
մոտ բանակայինները հրամանատարներ էին վորեւ-
րով չէին խոզում: Քիչ այն կողմը, տուրնիկի վրա
«արեփ» էր պտուեցնում ամենալայլ մարմնամարդ
Արուֆասը: Տուրնիկի մոտ հավաքվել էր ախրոզների
մի մեծ խումբ, և զարմացական բացականչություն-
ներ արձակելով, հիանում էր Արուֆասի ճարպիկ
քարժուճներով: Իսկ հեռվում, կանաչ բլրակի վրա՝
նստել էր զորամասի ամենալայլ յերգիչ—կրասեր հրա-
մանատար կրիլենկոն, վորը զարմոզկան նվագելով,
յերգում ու աչքով էր անում իր սխոտների մոտ պատ-
կած բանակայիններին:

— Կրիլենկո՛ւ, Թանգազինո՛ւ, յերգիր Չապայեվի յերգը, — Կանչեց վրանից դուրս յեկող մի ուրիշ կըրտսեր հրամանատար: Դա ամենալավ չափմատեստ Չորաբն էր, վորը դեվիլիայի չափմատեստների տուրնիրում առաջնակարգ տեղն էր գրավել: Այժմ նա գընում էր մասնակցելու իրենց գործատու անկյունում տեղի ունեցող չափմատեստներին:

— Ընկեր հրամանատար, — կանչեց ճամբարի այդ որվա հերթապահ Միքաելը յեվ մտանալով ու պատիվ տալով ասաց. — ձեզ գինկոմը կանչում է:

Չորաբը թեքեց իր ճանապարհը և մտավ գինկոմի վրանը:

— Ընկեր գինկոմ, յեկել եմ ձեր հրամանով:

Չինկոմը, վոր նստած էր սեղանի մոտ և խորասուզված թղթի վրա գրված թվերի ընթերցանության մեջ, Չորաբի ներս մտնելուն պես իսկույն վոտքի կանգնեց, ասաց.

— Նստեցե՛ք, ընկեր Չորաբ:

Չորաբը նստեց գինկոմի դեմ ու դեմ:

— Յես ձեզ կանչել եմ հետեվյալ խնդրով: Այս գիշեր ուղիտ ընդունիչի մոտ հերթափոխ մեր տղաներից մեկը բռնել է հետեվյալ գաղտնագիրը: Այս գաղտնագիրը ինչպես յերեվում է, հաղորդում են մեր յերկրից ոտար յերկիր: Դուք պետք է այս գիշեր հերթափոխություն անեք յեվ գտնեք այս ուղիտհաղորդիչի ուղղությունն ու տեղը: Լսո՞ւմ եք: Վոչ մի հեռագիր բաց չթողնել:

Չինկոմը վերկացավ տեղից, պերկացավ նայել կրտսեր հրամանատար Չորաբը:

— Յեվ յերբ ձեզ կհաջողվի կատարել այդ առաջադրանքը, իսկույն վագեցեք ինձ մոտ կամ շտաբի պետի մոտ, հասկացա՞ք:

— Հասկանալի յե:

— Կարող եք դնալ:

• Չորաբը պատիվ տալով դուրս յեկավ գինկոմի վրանից: Արեմն արդեն մայր էր մտել: Մթության բարակ շղարը փռվել էր ծառերի, վրանների, դաշտերի վրա յեվ ամենուրեք:

Նա քայլում էր դեպի ռադիոկայանը և մտածում: Յեթե գինկոմն իրեն է կանչել և պատվիրել այդ գործը, ապա ինդիրը չափազանց դժվարին է ու պատասխանատու: Ամենալավ ուղիտհաղորդ ընդունողն ու ուղիտհետախույզը նա յե վողջ գործատու: Յեթե նա չկարողանա այդ գաղտնագրերի հաղորդիչի տեղը գտնել, ապա սիտի խայտառակվի բանակայինների և հրամակագրի առաջ: Այդ մտքից Չորաբը քրտնեց և գլխարկը հանեց գլխից: Ծաղկած ակացիաների թարմ բուրմունքը նրան հիշեցրեց, թե ինչպես մանյովրները ժամանակ վորքան էլ ուղիտհաղորդիչ վայաններն աշխատում էյին թաղնվել, նա չարունակ գտնում էր նրանց տեղերը, վորի համար յերկու անգամ պարգեվ ստացավ յերկրային Կարմիր բանակի հրամանատարից:

Հեռվում, փոքրիկ բարձրավանդակի վրա պզգել էր թեթեվ մի շենք, վորի յերեք պատուհանից լույսը թափանցել էր դուրս: Չորաբը բաղխեց այդ շենքի դուռը: Մեկը դուրսը դուրս հանելով պատուհանից, հարցրեց:

— Ո՞վ է:

— Յես եմ, պահակապետը:

Բացվեց դուռը և Չորաբը ներս մտավ: Ռադիոընդունիչների մոտ նստել էյին յերկու հերթափոխ բանակայիններ և վորոնումներ էյին կատարում անհուն էֆիրի մեջ: Յերբեմն լավում էր ինչ վոր մեկի բարձր բարեխոնային յերդեցողությունը, մյուսի ուրախ ծիծաղի ձայնը և հետո այդ բոլորը իլանում, կորչում էյին ու նրանց տեղը դրավում էր Մորգեյի այբուբենի տկոտիցը:

— Ընկերներ, դուք ազատ եք — ասաց պահակապետը:

Հերթափոխ բանակայինները հանեցին ականջա-
կախները և հեռացան մյուս սենյակը: Մեկը դուրս
յեկավ ծխելու: Դուրս յեկավ և պահակապետը:

Չորաբը մնաց մենակ: Տիրող լուսթյան մեջ հան-
կարծ լսվեց ինչ վոր անձանոթ ռադիոհաղորդիչի
տկտկոցը:

— Գոտո-գոտո, ժիր-ժիր:

Չորաբն իսկույն գրեց այդ յերեք սկզբնատառերը:
Նա հազավ ականջակախները, սակայն հեռավոր ու-
ղիոհաղորդիչը լռեց: Նա գրեց այլքը, վորի վրա աշ-
խատում էր հաղորդիչը և գրի առավ հաղորդման
ժամանակը:

Չորաբն սկսեց կատարել իր վորոճումները: Նա
խորացավ եֆիրի անհուն տարածությունների մեջ և
միանգամայն կլանվեց այդ աշխատանքով: Նրա ա-
կանջներին կարծես թե ծանոթ էր այդ անձանոթ հա-
ղորդիչի տկտկոցը: Նա լսել էր այդ ձայնը շատ ան-
գամ և այժմ գգում էր, վոր ձայնն անձանաչելիորեն
փոխված էր: Մի բան նա պարզ ըմբռնեց, վոր այդ
հաղորդիչն աշխատում էր քաղաքում: Դրանում վոչ
մի կասկած չկար, վորովհետև կողմնացույցը ցույց
տվեց ուղիղ քաղաքի ուղղությամբ: Չայնը չսխալմանց
բարձր էր և այդպիսի բարձր ձայնով աշխատում են
միայն քաղաքի հաղորդիչները:

Հանկարծ Չորաբը սրեց լսողությունը:

Չեւքում բռնած մատիտն ինքն իրեն սկսեց գրել:
Լսվում էր հեռավոր հաղիվ լսելի մի տկտկոց, վորը
մեծ արագությամբ հաղորդում էր տառերը:

— Ժիր, ժիր-ԳՏՏ, ԳՏՏ-5.

«Ի՞նչ է նշանակում այս, միթ՞ե նրանք պայմանա-
վորվեցին ժամը 5-ին»:

Նա նայեց ժամացույցին. արդեն ժամը 11-ն էր:
Չորաբը փոխեց բոլոր ալիքներն ու դիտարդոնները,
սակայն ել վոչինչ գտնել չկարողացավ: Նա այժմ դո-
ղում էր վողջ մարմնով: Նա չգիտեր, թե ինչ է նշա-

նակում այդ հիսոր: Արդյոք, ժամն էր ցույց տալիս,
բայե՞ն, այլե՞ք, ամասթիվը, թե մի ուրիշ բան: Նա
չօչափում էր եֆիրի բոլոր ծալքերն ու անկյունները:

Մի անգ կասազորեն մրրիկն էր վտանում, մյուս
անգ լսվում էր սավառնակի պրոպելլերի միալար
դոտոցը, մյուս անգից գեղեցիկ յերաժշտության ձայնն
էր գալիս: Չորաբը վոչ մի ձայնի վրա կանգ չէր
առնում: Նա շարունակ փոխում էր ալիքներն ու դիտ-
արդոնները և հանկարծ պարզ լսեց ծանոթ տկտկոցը:

Ռադիոհաղորդիչն արդեն փոխել էր իր անուն-
ները և այժմ հաղորդում էր յերկար մի գաղտնագիր
530 խոտքից բաղկացած: Չորաբը նայեց ժամացույցին:
Ժամը յերեք և կեսն էր: Կնշանակե ռադիոհաղորդիչը
մինչև ժամը 5-ը պիտի աշխատի: Նա գրի առավ այլքն
ու նրա ուղղությունը, կանչեց բանակայիններին և
հրամայեց գրի առնել բոլոր հաղորդած հեռագրերը,
լակ ինքը դուրս վաղեց:

Նա վազում էր միության մեջ, ծառերի արանքով
վորպես մի դիվանահար: Նա սրասատրոսի ներս վաղեց
գինկոսի վրանը և նրան կանչեց:

— Ընկեր գինկո՛ս, ընկեր գինկո՛ս:

Չինկոմն իսկույն վեր թռավ յեվ բնագործեն մի
ակնթարթում հազավ շարվարն ու բլուզը:

— Ի՞նչ է պատահել:

— Անձանոթ հաղորդիչն աշխատում է քաղաքում:
Մենք կարող ենք նրան բռնել: Հարկավոր է նստել մե-
քենա և հայնել զբարանի ռադիոկողմնացույց:

Վաղիր շտաբի պետի մոտ, և թող նա տա քեզ
զբարանի ռադիոկողմնացույցը, իսկ յես կհրամայեմ
տալ մեքենան:

Յերեք րոպեյից հետո ձամբարի խիտ ծառերի
միջից քաղաք սլացավ մի թեթեվ ավտոմեքենա: Մե-
քենայի մեջ նստած էին շտաբի պետ Չուլիդովը,
գինկոմը և Չորաբը: Չորաբը նստել էր չոֆերի մոտ
և նրան հրամայում էր քշել մերթ այս ուղղությամբ,

մերթ այն: Նա հաղել էր դրոպանի ուղղիտիոզմո-
ցույցի ականջակալները: Վորքան վոր մոտենում ժյին
քաղաքին, այնքան անձանոթ ուղղիտիոզիչի ձայնն
ուժեղանում էր: Մեքենան այժմ սլանում էր քաղաքի
դատարկ փողոցներով: Հանկարծ Ձորաբը հրամայեց
չոֆերին քշել այն փողոցով, փոքի վրա դառնում էր
դորամասի շինությունը: Հասնելով շենքին, նա հրա-
մայեց չոֆերին կանգ առնել: Ձորաբն խիղույն ցած
թուով մեքենայից:

— Ընկեր զինկոմ, ել կասկած չկա: Աշխատում ե
չտաբի պետի ուղղիտիոզիչը:

Այդ լսելուն պես, շտաբի պետն իսկույն բացեց
դռնակը և ուշադրություն չդարձնելով պահակի գո-
ռոցին՝ «կանգ առ», նեափեց իր սենյակը: Նրան հե-
տեվեցին զինկոմն ու Ձորաբը: Շտաբի պետն իր լայն
ուսերով կրնկահան արավ դուռը և ներս մտավ:

Մթության մեջ լսվեց ատրճանակի կրտկոց յեյ-
մեկի ծանր տնջոցը:

Չինկոմն ու Ձորաբը ներս վազեցին:

Մոմի աղոտ լույսի տակ նրանք տեսան անձանոթ
մարդու մարմինն անշունչ փոված հատակին, իսկ հա-
ղորդիչի մոտ Ձուլիղովը ամուր բռնել էր ծանոթ ազ-
լըկան:

Աղջիկը չոն էր աչքերը և բերանը լայն բացել:
Նա մի հայացք դեց քիչ առաջ գնդակահարված իր
ընկերոջ վրա և ավելի դունատվեց:

— Դա ձեր ծանոթ կլինն, ե, ընկեր Ձուլիղով —
հարցրեց զինկոմը:

— Դրա հետ յես ծանոթացա պատահամբ, այն
եւ տարրինակի հանգամանքներում:

— Իսկ աղջիկն էլ պատահամբ թե՞ ծանոթացել
քեզ հետ... կասկածում եմ:

— Այդ մասին յես հետո կպատմեմ, — իր հան-
ցանքի ծանրությունն ավելի խորն զգալով, ասաց
Ձուլիղովը և սկսեց հավաքել գեանին թափթփված

թղթերը. նրան ոգնում էր Ձորաբը, իսկ զինկոմն ինչ
վոր բան էր գրում իր բլոկնոտում:

Հանկարծ աղջիկը վեր թռավ տեղից և նեափեց
հաղորդիչի վրա: Նա իր ձեռքը վերցրեց մուրճիկը և
կամեցավ հաղորդել մի քանի խոսք յեյմ: Բայց Ձու-
լիղովն այնքան արագորեն և այնպիսի ուժով բռնեց
նրա թեփից, վոր նա ցավից ճչաց: Ապա ինքն ի-
րեն արերով նա սեփեռելով հայացքն ուղղակի Ձու-
լիղովի վրա, ասաց.

— Ախտո՛ս, միայն յերկու բառ մնաց, վորը
չհաղորդեցի...

— Յերկու բա՛ռ — ջղայնորեն արտասանեց Ձու-
լիղովը:

— Այս, յերկու բառ, ատանց այդ բառերի իմ
հաղորդումը, նրանց համար անհասկանալի կմնա...
Իսկ այժմ ամեն ինչ կորավ, կորա և յես...

— Ձեք սխալվում — հանդիսա հաստատեց զին-
կոմը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աշուն եր:

Մենք դուրս յերանք գրոսներու:

Ընկերս Ն. քաղաքի № գործատարի մայր Վահան Մարկելիչը քառասունին մոտ, սակայն յերիտասարդական ատող մարմնով մի մարդ եր: Նրա հետ ծանոթացել էյի 1920 թվականին, յերթ թշնամին ողակել եր Մ. քաղաքը և սպանում եր գրովել այն: Վահան Մարկելիչն այն ժամանակ վաչախ հրամանատար եր, իսկ յես նրա շարքային, առաջավոր բանակայիններինցն էյի: Նրա հմուտ հրամանատարութեան տակ, մենք կարողացանք ղեկավարել թշնամու գրոհին տասներ հինգ որ, մինչև վրա հասան ողնական ուժեր և թշնամին ջարդ կրելով, ցաք ու ցրով յեղավ: Հաղթանակից հետո Վահան Մարկելիչն ինձ ուղարկեց սազմական ղեկը սովորելու: Այն սովանից անցել էյին 16 տարիներ, ինչ յես չէյի տեսել իմ նախկին հրամանատարին և ընկերոջը: Յեկ ահա յերկար տարիների անջատումից հետո մենք առաջին անգամ բախտ ունեցանք իրար ձեռք սեղմելու: Մենք դանդաղ, գրուցելով անցնում էյինք փոփոցով: Աշնան քամին մեր յերեսին եր շարժում ծառերից թափվող զեղին տերեւները:

Վահան Մարկելիչը պատմում եր ղեկըքեր իր գումարտակի կյանքից և յես մեծ հետաքրքրութեամբ լսում էյի նրան: Նա պատմում եր և միյեմնույն ժամանակ գմայլանքով նայում բարձր, նորակառույց զեղեցիկ շենքերին, վազող երկատարքարչին և այս ու այն կողմ սլացող կորհրդային գործարանների տվաններին:

— Վորքա՛ն և փոխվել քաղաքը, — ասում եր նա թողնելով կիսաա իր պատմութեանը: — Առաջ փոչուց բացի, վոչինչ չկար: Այժմ փոչի ել չկա:

— Այս նոր անկամ ծառերը և կանաչները կլանել, վերացրել են փոչին:

Մենք մոտեցանք քաղաքային այգուն:

— Ներս մտնենք այգին, — հանկարծ ձայնը փոխելով ասաց Վահան Մարկելիչը:

Այլին դատարկ եր: Չկար վոչ մի գրոսնող: Միայն մանկապարտեղի յերեխաներն էյին, վոր այս ու այնտեղ խաղում էյին միմիանց հետ:

Ընկերս, վոր մի քանի բույե առաջ ասանց դադար աննելու պատմում եր իր գումարտակի մասին, այժմ լսել եր: Լուել էյի նայել յես:

Կոխ տալով զեղին տերեւները, առաջ էյինք քայլում:

Մանկապարտեղի յերեխաներն ուբախ բացականչութեաններով այս ու այն կողմ էյին թուփում:

Դեպի մեզ եր գալիս կեղտոտ շորերի մեջ կուլոված մի ձերուկ: Մերուկը ուներ յերկար մի դավադան: Նա գողում եր ամբողջ մարմնով և անհամարձակ մեղ նայում: Ընկերս ակնապիչ հաշացքով սկսեց նայել մոտեցող ձերուկուն: Իսկ ձերուկին մոտենալով՝ դարձանից մետաքս զուլպաներ հանելով, անհամարձակ ձայնով ասաց.

— Մի գուցե անեք, յես ամաչում եմ բազար զնալուց, եժան կտամ...

Ընկերս կանգ առավ: Կանգնել եր նայել ձերուկին: Մերուկու քիթը ջարդված եր և այն խորացել եր զեմքի մեջ: Ընկերս ու ձերուկին նայում էյին իրար: Հանկարծ ընկերս ցնցվեց յեկ ձեռքով մի շարժում արավ:

— Ա՛խ, — դուրս թառվ նրա բերնից: Մերուկին չտաց թողեց հեռացավ:

Յես նայեցի ընկերոջս:

— Ի՞նչ պատահեց:

— Միթե՞ այդ նա. յի, — արտասանեց նա և նստեց նստարանի վրա ու դուրսն առավ ձեռներէ մեջ: Յես նստեցի նրա կողքին:

Նա բարձրացրեց դուռը, տխուր աչքերն ուղղեց վրաս, ապա ցածր ձայնով ասաց.

— Այդ վաղո՞ւց, շատ վաղուց եր: Հայրս մահացավ այս այդու՞մ, իմ ծնկներէ վրա: Հորս մահւոյն պատճառն այդ ծերունին եր: Յես չեմ մոռացել այդ մարդու սարսափելի դեմքը, թեպետ այն որից շատ տարիներ են անցել: Իսկ այս անսպասելի հանդիպումն իմ մեջ զարթեցրեց անցյալի սիրտ խոցող սրտակերները, վերոնց կարծես թե մոռացել էյի:

Լսիր, յես քեզ պատմեմ: . . .

* *

Չորս տարի տեւող համաշխարհային սրտերազմն իր քայրայիչ հետքերը թողեց նայել մեր գլուղի վրա: Իսկ գլուղն առանց այն ել տառապում եր դաշնակիների հրոսակային կողոպտիչ խմբերի ձեռքից. հրոսակային խմբերը խլում, տանում էյին գլուղացու վերջին ապրուստի չնչին մնացորդները և նրան սովի մատնում:

Չկար ապրուստի վոչ մի միջոց: Հողը վաղուց եր դադարել բեշք տալուց, վորովհետև այն չեր մշակվում: Գլուղացիների մեծ մասն ել հողագործի եր յեվ իրենց գոյութիւնը պահպանելու համար թողնում էյին գլուղերն ու ընտանիքներով հեռանում հեռավոր քաղաքները: Այնտեղ կարելի յեր դորձ գտնել յեվ մի կերպ ապրուստի միջոցներ հայթայթել:

Այդպես արեց նայել հայրս: Մի որ նա մեր ունեցած չունեցածը կապկապեց, ուսովը դցեց, մի կապոց ել դրեց իմ ուսին, ապա բռնելով մորս ու 13 տարեկան քրոջս ձեռքից—գլուղից դուրս յեկավ: Առաջին քաղաքը, վորտեղ կանց առանք լցված եր մեզ նման անտուն անտեր ընտանիքներով:

Քաղաքն առանց այն ել հյուձնվում եր սովից յեվ այդ եր պատճառը, վոր տեղական բնակչութիւնը մեզ նորեկներին բնուսնեց թշնամանքով:

Ապրում էյինք բաց ողբ տակ: Կերակրվում էյինք նրանով, ինչ կարելի յեր ծամել, կամ յեփել՝ հետո ծամել: Սովը և դրա հետ միասին վարակիչ հիվանդութիւններն այնքան էյին ուժեղացել, վոր ամեն որ աշխարհից տասնյակներով մարդկային զոհեր էյին խլում:

Դիակառքերն անընդհատ պտրւվում էյին փողոցներով և այս ու այն պատերի տակից հավաքում սովից սառած մարդկանց անչունչ դիերը:

Իսկ ժողովուրդը դալիս եր, հա դալիս: Գալիս էյին կանայք ցնցոտիների մեջ, փոքրիկ ծծկեր յերեխաները սեղմած կեղտոտ ու մերկ կրծքներին: Գալիս էյին ծերունիներ, կմախքի նմանվող թոռների ձեռներից բռնած: Գալիս էյին և քաղցած սկսում թափառումներ կատարել այդ ավերակին նմանվող քաղաքի փողոցներում: Նրանք քաղցած էյին և կեր էյին փնտռում: Սակայն ով կտար նրանց հաց, կամ տուք մսի փոքրիկ մի կտոր, կամ ել չե՞ վոտկորի մնացորդ: Չկար ուտելու վոչ մի բան: Ծներն ու կատուներն անգամ չքացել էյին: Պարզ եր, վոր ամբոխն յերկար մնայ այդ քաղաքում չեր կարող: Նա սկսեց բռնել դեպ հեռավոր քաղաքները տանող ճանապարհները:

Ահա քաղաքի կայարանը: Չորս կողմ հիվանդութիւնից, քաղցից հյուձնված տենդոտ աչքերով մարդիկ:

Այն ժամանակ դնացքները շափապանց ուչ էյին դալիս յեվ ուչ ել հեռանում: Բայց ամեն որ, նույնիսկ ապրանքատար գնացք, վորը դուրս եր դալիս այդ քաղաքից, լցված եր լինում կիսակենդան մարդկանցով: Յերեք շաբաթ եր ինչ մենք սպասում էյինք դրնացին: Գնացքը չեր յերեկում:

Մայրս ծանրացել եր և հապիվ հոգ եր շարժվում:

Հի լինելուց բացի նա տատապում եր նայել տեղում:

Հայրս ամեն առափսռ ինձ թողնում եր մորս ու քրոջս նայելու, իսկ ինքը դնում եր քաղաք փող վառ-տակելու և ուտելեղեն բերելու: Ամեն յերեկո նա բե-րում եր սեւ Հացի կտորտանքներ յեւ կենդանիների լյարդացած արյուն:

Մի որ հեռվում լավեց շոգեմեքենայի կարճ սուր-դըն ու քիչ հետո յերեկաց գնացքի յերկար իրանը: Կայարանի չորս կողմում պատկած մեռնող մարդիկ հանկարծակի կենդանություն առան:

Գնացքը կամաց-կամաց մոտենում եր կայարանին: Մարդիկ իրար տրորելով սկսեցին խոնջել յերկաթ-գծերի մոտ, մեքթ մի կողմ վազելով, մերթ մյուս կողմ: Լավում եր յերեսխաների վախեցած ճիչերն ու հիվանդ պառափներ ծանր անքոցները, վորոնք աշ-խատում էյին հետ չմնալ ու աչքից չկորցնել վորդի-ներին: Մեկն ասում եր, թե գնացքը պետք է կանդ աննի աչխինչ գծերի վրա և ամբոխը խելահորեն վա-զում եր գեկ պն գծերնն իր հետեվից քարչ տալով նայել մեզ: Մյուսը դեկ հակառակ գծերն եր ցույց տալիս և բորբը նորից հետ էյին վազում ու այդպես կրկնվեց մի քանի անգամ, մինչև գնացքը մարդկանց յերկու մասի բաժանելով կանդ առավ միջին գծերի վրա: Մարդիկ առանց խմանալու, թե ուր պիտի գնա գնացքը, սկսեցին իրար գլուխ ջարդոտելով բարձրա-նալ վազոնները:

Մորս ծանր քայլվածքի շնորհիվ, մենք բավակա-նին հետ էյինք մնացել: Հայրս հայհոյում եր մորս և ձեռքից քաշելով առաջ եր տանում: Ուղծ մայրս ծանր անքում եր և ազաչում, վորպեսզի իրեն թողնենք ու մենք հեռանանք: Հայրս չեք լսում նրան:

Հիշում եմ... մայրս հանկարծ կանդ առավ, քիչ սրորվեց, հետո ծամճոեց գեմքն ապա սուր ճիչ արձակելով, փռվեց գետին յերկու յերկաթագծերի սրանքում:

Յես սեղն ու սեկը քարացա:

Տեսնում էյի, թե ինչպես եր մայրս դալարումներ կատարում նայթից սեպացած գետնի վրա, լսում էյի նայել քրոջս սրտածմրիկ դողոցները, բայց վոչինչ հասկանալ չէյի կարողանում: Հիշում եմ՝ հայրս շվարած, գլխարաց ինչ վոր բան եր աղերսում մեզ մոտով վազող կանանցից, սակայն վոչ վոք նրանցից կանդ չառավ: Հետո հիշում եմ՝ հորս, չոքած մորս գլխավերեվում, նրա մեռելագուշն գեմքը բռնած իր ափերի մեջ:

Մորս գեմքը կապուշտ եր և աչքերն ամուր փակ-ված:

Հիշում եմ... հեռվում կանդ առավ սեւ դիա-կառքն, վորից ցած իջան յերկու աղամարդ և մորս ստամ գին դնելով պատարակի վրա, տարան...

* *

Ընկերս լեց: Նրա գեղեցիկ անառկան գեմքը պատել եր դառն հիշողությունների քողով: Տխուր էյին այլ հիշողությունները: Նստած էյինք այգում, բարձր բարդեհու ծառի տակ գրված նստարանի վրա: Այդու ծառուղիները դատարկ էյին: Մենք նայում էյինք ծառերից գետին թափվող գեղին տերեփներին: Մեր գլխավերեվում խշխշալով տերեփազուրկ ձու-ղերով, բարդենիներն ոքորում էյին իրենց գլուխնե-րը: Այսպես անցնում էյին րոպեներ, վորից հետո ընկերս շարունակում եր իր պատմությունը:

* *

...Գնացքը մեզ թողեց այս անձանոթ քաղա-քում: Քաղցած, պատստոված շարերով ու հիվանդ գեմքերով մենք, յերեք հողիս, պտտվում էյինք այս քաղաքի փոշոտ, տաք արեփից այրող փողոցներում: Հայրս կանդ եր անունում այս կամ այն խանութի առաջ, այս ու այն հիմնարկության առաջ և տերերից գործ խնդրում: Սակայն վոչ վոք չեր կամենում գործ տալ: Յեւ հայրս սկսեց մուրալ: Նա պարզում եր ձեռքը անյորդներին ու դողդոջուն ձայնով աղեր-սում:

— Խղճացեք սարսնայք...

Հայրս հիվանդ եր: Հիվանդ եր նաև քույրս: Հայրս գրկել եր քրոջս, հենակէ ինձ վրա և աջըպես դանդաղ քայլերով առաջ ելինք դնում ու մտրում:

Առաւոտովանից վոչինչ չեյինք կերել յեւ աստիկ քաղցից դլուխներս պտտովում եր: Բայց ահա մեր քթներին դիպաւ յեպիած հացի անուշ հոտը: Ակամայից կանդ առանք: Մենք դանմում եյինք հացի վրան բաց դռան առջեւ: Փռսի բաց դռնից պարզ յերեւում եր, թե ինչպես ներսի աշխատավորները դարակներէ վրա դարսում եյին սպիտակ հացի վափուկ բոքոնները:

Մենք մոտեցանք այդ դռանը: Ավելի շուտ դուռն իր հացի հոտով, վորպես մագնիս, մեզ քաշեց դեպի իրեն: Մենք ակնապիչ հայացքներով նայում եյինք դարակներէ վրա դարսած հացերին: Ներսի աշխատավորները դրաղված եյին իրենց գործով և մեզ վրա վոչ մի ուշադրութիւն չեյին դարձնում:

Յես գիտեյի, վոր հայրս կամենում եր հիվանդ քրոջս համար «Թաժա հաց» խնդրել: Բայց նա չեր համարձակում ձայն հանել: Վախենում եր, վոր իր խնդիրը կմերժեն յեւ մեզ կոպտարար կհետացնեն, ինչպես հեռացրել եյին շատ տեղերից:

Մեր հետևում դղրդոցով կանդ առաւ մի կառք: Մենք վախեցած շուտ յեկանք: Գեղեցիկ կառքի միջից դուրս յեկան յերկու տղամարդիկ յեւ մի փոքրիկ աղջիկ: Մեկն, վոր բռնել եր աղջկա ձեռքից, բաժականին անուղջ մարմնով, մեծ, անքնական, սարսափելի քթով, վալելուչ հագնված մի անձնախորութիւն եր: Մյուսը կապիկ արագաշարժութեամբ պրտրտում եր առաջինի չորս կողմը, պտտում ինչ վոր բան, և շարունակ ծիծաղում:

— Զափազանց սքանախոն ես Սրապիոն, — ժպտալով սոսց աղջկա ձեռքից բռնած անձնախորութեամբ:

Սրապիոնն ինչ վոր մի բան եւ սոսց և նրանք յերկուսով քահ — քահ ծիծաղեցին:

Նրանց տրամադրութիւնն ըստ յերեւոյթին չափազանց բարձր եր:

Հայրս քրոջս ամուր սեղմելով կրծքին, նրանց մոտենալով՝ քիչ խոնարհովեց, ապա խղճալի ձայնով սոսց.

— Աղա, խղճացեք անտունիս:

Աղջկա ձեռքից բռնած մարդը խոժոռեց դեմքը, ապա հարցրեց.

— Ի՞նչ ե ուզում ծերուկը:

— Քո առողջութիւնը աղա, խղճա յերեխաներիս և հացի փող տուր:

— Ամո՞թ չե, վոր հացի փող ես ուզում: Ինչի՞ չես աշխատում: Մեծ տղա ունես, դու եւ կարող ես մշակութիւն անել, գնա՛ աշխատիր:

— Գործ չկա, աղա, դործ տուր:

— Սրապիոն, — դարձաւ հաստ պարոնը դեպի մյուսը, — ասում ես մշակներից մեկը հիվանդացել ե չե՞, սրան վերցրու նրա տեղ առժամանակ, իսկ այս տղան կարող ե մեր բակի դոնապանի պաշտոնը կատարել: Ապրելու վայրն եւ ցույց կտաս. դե՛, դու գիտես:

Յեւ նա առանց ուշադրութիւն դարձնելու հորս շնորհակալութիւններին, աղջկա հետ միասին մտաւ փուռը:

Մնաց Սրապիոնը, վորն ընդունեց հպարտ իշխանի տեսք:

— Դո՛ւ, ծերուկ, վաղվանից կսկսես աշխատել այստեղ: Յերկու հոգու հետ կդարտակեք փուռը յեկած այլե մեշտիկներով լիքը սայլերը: Իսկ տղայ ա՛մեն առաւոտ կմաքրի բակը, վորտեղ ապրում ե այդ բարի պարոնը: Համաձա՞յն ես:

Հայրս խոնարհաբար համաձայնեց:

Վարձատրութեամբ մասին վոչինչ չխոսվեց:

Այդ «բարի» պարոնի տունը գտնվում էր նույն փողոցի հեռավոր ծայրամասում: Յերեք հարկանի, բարձր գմբեթով մի տուն էր դա, մեծ ու լայն բակով:

Իմ պարտականությունն էր՝ ամեն առափոտ յեկ իրիկուն մաքրել բակն ու տան յերկարության հավասար, փողոցի վրա գտնվող հայաթը: Բացի դրանից, պարտավոր էյի շուկա կամ մի վորեվիցե տեղ գնալ, յեթե այդ հրամայելին պարոնը կամ տիկինը, կամ էլ չէ՝ նրանց տնեցիներեց մեկն ու մեկը:

Մենք ապրում էյինք բակի հեռավոր անկյունում գտնվող գեանափոր նկուղներեց մեկում: Նկուղը թեպետ չափազանց խոնավ էր ու մութ յեկ բնակության համար միանգամայն անպետք, մեզ անոթեմաններին համար, վոր ամիսներ շարունակ ապրել էյինք լայց յերկնքի տակ, թվում էր հրաշալի մի սենյակ:

Հայրս նկուղի մի մասում 20 ասնտրմետր բարձրությամբ քայից ու ցեխից քառակուսի մի հարթություն պատրաստեց: Հարթության վրա չոր խոտ փռեց և խոտը ծածկեց սխաբսով: Այդ սխաբսի վրա մենք քնում էյինք:

Յեկ այսպիսով մեզ համար սկսվեց մի նոր մկանք: Առավոտ կանուխ դեռ նոր էր լուսանում, վոր հայրս վեր էր կենում, մթության մեջ հազնում շորերը, սպա ինձ զգուշությամբ դարթեցնելով դուրս էր գրնում: Հորս հեռանալուց հետո, արագորեն հագնվում էյի, վերցնում վեզրոն, ցնցուղն ու ավելը և քրոջս թողնելով քնած, դուրս գալիս: Նախ բակի մեջ տեղում գտնվող հորից ջուր էյի հանում, հետո սկսում ավել բակն ու փողոցի մայթը:

Ամեն առավոտ, յերբ ջրում էյի մայթերը, փողոց էյին դուրս գալիս գիմնադիտաների փայլուն շորեր հագած, ինձ հասակակից յերկու տղա: Նրանք արհամարհանքով անցնում էյին մոտովս, սպա մեկը

նրանցից քացով էր տալիս ջրով լիբը վեղրոյին, թափում ու հետո բացահանչում:

— Ելի՞ր ես, քրդի լամուկ, վեղրոն վտաների տակ է գրել: Յեկ անցնում էյին առանց հետ նայելու: Յես կատաղությամբ լի հայացքով նայում էյի նրանց հետեվից և չէյի համարձակվում զայրութս բարձրածան արտահայտելու:

Նրանցից մեկը, Սերժիկը, մեր «բարի» պարոնի վորդին, իսկ մյուսը, Միշիկը նրա յեղբոր վորդին էր: Սերժը տասնըվեց տարեկան էր, իսկ Միշիկը տասնըյոթ: Չնայած այդքան յերիտասարդ, մատաղ հասակներին, նրանք արդեն բարոյապես փչացել էյին: Քանի՞ անգամ էյի տեսել նրանց վատ վարքի տեր կանանց հետ զիշերները մութ անկյուններում գրկախառնվելիս: Հայրը նույնպես գիտեր վորդու յեվ յեղբոր վորդու վատ արարքերի մասին, բայց և այնպես՝ նրանց չէր սաստում: Վորդուց բացի մեր տերն ուներ տասը տարեկան փոքրիկ մի աղջիկ, վորը ման էր գալիս դանդաղ, մեծ դուռնությամբ, կարծես թե գտնվում վում մեր ստուռցի վրա: Այդ աղջիկը գրավում էր իմ ուշադրությունը և շարունակ նրան տեսնելիս, զաղտազոզի հետեյում էյի նրան, թե ո՞ւր կգնա և ում հետ կխոսի: Աղջիկը վոչ վոքի հետ չէր խոսում, չուներ նայել խաղընկեր: Լուռ ու մունջ ման գալուց հետո բարձրանում էր վերեվի հարկը, մտնում սենյակին ու այնպիս դուրս չէր գալիս: Այլ էյին նրա յեղբայրն ու հորյեղբորվորդին: Սրանք վոչ մի աղջկա բաց չէյին թողնի, մինչև ձեռք չտային նրան ու մի քանի անպարկեշտ խոսքեր չասեյին: Սերժիկի լրկատիւթյունը հասնում էր նույնիսկ մինչեվ այնտեղ, վոր նա որը ցերեկով հանկարծակի գրկում էր մի վորյեվե աղջկա և համբույրներ դրոշմում նրա յերեսին: Այդ դրոծողությունը նա կատարում էր ամեն տեղ — փողոցում, յեվ բակում յեվ այգում: Այդպիսի դեպքերում վիրավորված աղջիկը լալով վազում էր տուն, գանգատվում մորը, իսկ մայրը գնում էր մեր տիրոջ

մտտ յեւ խնդրում, յիսր նա հանդիմանի իր վորդին-
րին: Հայրը լսելով վորդու և յեղբոր վորդու «կա-
տակները», խնդարով ասում էր.

— Վորձ յերեխեք են, թող անեն, դրանից աղջը-
կանդ մաղից չի պահասի:

* * *

Մի անգամ, վերադառնալով ինչ վոր մի տեղից, յես տեսա թե ինչպես Սերժիկն ու Միշիկը, դարպասի միջանցքի մուտք անկյունում սեղմել էյին պատին մի աղջկա և կոպտաբար արորում էյին նրա մարմինը:

Յերեկո յեր և արդեն մուտք: Մի թուռցիք հայացք նետելով նրանց վրա, յես անցա: Բայց յերկու քայլ ել չէյի արել, վոր լսեցի իմ անունը: Չայնը հարպաս էր և չախազանց նվազ ու աղերսագին: Մագերս փշաքաղվեցին: Ամբողջ մարմինս դողդողաց:

— Մո՛ւս, — սաստեց Սերժիկը և ինձ թվաց, թե նա համբուրով ծածկեց քրոջս բերանը: Ինչպես վի-
րավորված կատաղի վաղը, արյունով լի աչքերով, յես հետ դառա: Հասնելուն պես յերկու աջակիւնի ուժեղ հարված հասցրի նրանց թիմքերին, վոր նրանք վայր ընկան:

— Հոխիսիկ, այդ դո՞ւն ես...

Քույրս վոչինչ չասաց: Նա լուռ հեկեկոցով սեղմ-
վեց կրծքիս և յես զգացի, թե ինչպես էր նա ամբողջ մարմնով դողդողում:

— Ծներ, յեթե դուք մեկ ել համարձակվեք, յես ձեզ շան նման կսատկացնեմ, — ասացի յես յեմ քրոջս ապրա մեր գետնափոր նկուղը: Քույրս դեռ դողում էր և լալիս: Յես պառկեցրի նրան, ծածկեցի վերմա-
կով ու նստելով նրա գլխավերելում, գլուխս առա ձեռներեմ մեջ: Սիրտս ճմլվում էր: Կամենում էյի լալ, գոռալ, ճանկուել գետինն ու նկուղի պատերը:

— Նրանք ինձ ամեն որ են այդպես անում, — լացի միջլից ասում էր քույրս:

Պայթվածի պես վեր էյի թռչում տեղիցս, կամե-
նում էյի դուրս վազել, պատժել այդ լալերը արիկանե-

րին: Բայց քույրս բռնում էր ձեռներիցս և խնդրում, վոր մնամ, իրեն մենակ չթողնեմ:

Առավոտ վաղ մայթերը ջրելիս դարձյալ դեմս դուրս յեկան Սերժիկն ու Միշիկը: Բնագլաբար ցած դրի ցնցուղն ու յերկու քայլ առաջ յեկա: Նրանք կանդ ստան, վախեցած բացականչեցին:

— Չհամարձակվես, թե չե Սողոյին կկանչենք:

Սողոն նրանց տան ծառան էր, մի դուեհիկ, արջի ուժ ունեցող, վորին նոր էյին գյուղից բերել: Նրանք հեռացան ու 20 քայլից հետո հետ դառնալով սպառ-
նացին:

— Սպասիր, քրդի լամուկ, մենք վհիչեցնենք քս հարվածները:

Յեվ հիշեցրին... հիշեցրին այնպես խորը, վոր նրանց հասցրած վիրախորանքի հետքերը մինչեմ հիմա յել դեռ մնում են կրծքիս խորքերում:

...Ս.յդ որը յես սովորականից շատ յերկար մնա-
ցի հացի փոխ պահեստում, վորտեղ աշխատում էր հայրս: Կեսորից բավականին անցել էր, յերբ յես վե-
րադարձա տուն, թեմիս տակ ունենալով սպիտակ, վապուկ հացի մի վտոր: Դա հայրս էր տվել քրոջս համար: Գիտեյի, վոր քույրս տանն անհամբեր ինձ էր սպասում: Գիտեյի՝ վոր նա սպիտակ հացը տեսնելիս անչափ կուրախանա:

Յերբ ներս մտա դարպասով, բաղի հեռավոր ան-
կյունից, վորտեղ մեր նկուղն էր դառնում, դուրս յե-
կան Սերժիկն ու Միշիկը: Ինձ տեսնելիս, նրանք շը-
փոթվեցին, ապա գիվական ժպտը դեմքերին խաղաց-
նելով, անցան մոտովս:

Սիրտս ինչ վոր մի վատ բան նախադրաց: Կայծա-
կի արագուժյամբ ներս վազեցի նկուղը:

Նկուղում սիրող իրավարի մեջ առաջին պահ վո-
չինչ ջոկել չէյի կարողանում:

— Հոխիսիկ, — կանչեցի յես:

Վորպես պատասխան իմ կանչին, լսեցի քրոջս ծանր անքոցները: Դողդողալով սկսեցի շոշափել խոտի

վրա փռված փալատը: Իմ ձեռքը ղրկայի քրոջս մեքի սողբերին: Կայծակի արագութեամբ ձեռքս հետ քաշեցի:

— Հոխտիկ, — սարսափահար բղավեցի յես:

Նա դարձյալ չպատասխանեց և ելի ծանր տնքաց: Հետո նա ջուր խնդրեց ինձնից:

Յերբ աչքերս վարժվեցին մթութեանը նոր միայն նկատեցի, թե վորպիսի սոսկալի գրութեան էլին հասցըրել քրոջս: Նրա սողբերը արյունոտ էլին, իսկ վերի շորերը պատռոտված:

Յես ամեն ինչ հասկացա: Սոսկալի յեր գրութեանըս:

Յես չգիտեի թե ինչ անել: Մեկ կամենում էի վազել այն արկանների հետեվից, բռնել նրանց բարակ կոկորդաներից, սզմել այնքան մինչև վոր լեզուները դուրս հանեյին, փրկալէին ստոամները միջից, դեմքերը սեվանային, իսկ աչքերը դուրս թռչեյին բներից: Մեկ եր կամենում էի՝ քրոջս գրկել, գնել անդաշորի վրա, փարզի բերել շորերը և սանրել ցրիվ յեկած մադերը:

Վոչ այս էի կարողանում անել յեվ վոչ էլ այն:

Յես սպուշ էի վորեւէ, յես մոտ էի ցնորվելուն:

— Հայրեկին չասես, — ստաց քույրս ու լաց յեղավ: Ինչո՞ւ աղջիկ, նա գիտեր, վոր հայրս իրեն չատ էր սիրում և չէր կարող զխմանալ այդ մեծ անպատվութեանը:

— Կուրի չանես, նրանք քեզ կսպանեն:

— Կուրի չանել սուս ու փուս տանել այդ անպատվութեանը, միթե՞ վարող եմ յես այդ անել, քույրե՛կ: Յես սեզմեցի կրծքիս անպատված քրոջս և դասն հեկեկացի: Լաց յեղավ նայել քույրս:

Արցունքոտ աչքերով յես դուրս յեկա նկողից: Ինչպես գինուց հարբած, որորվելով քայլեցի անմարդաբնակ լայն բակի միջով:

Յես դուրս յելա փողոցը:

Յես հանդիպեցի նրանց:

Նրանք մեջքով կանգնած էլին դեպի ինձ: Ինձ չէին տեսնում:

— Բայց լավ արեցինք, հը՞...:

— Հիմա եղ քուրդը մեզ լավ կհիշի...:

Յես մինչև հիմա յել չեմ կարողանում հիշել, թե ինչպիսի արտողութեամբ այդ բարակ իրանով շնորին դեռին տասպալեցի: Հիշում եմ միայն, վոր նրանք թափալվելով դեռնին, բոռում էլին մորթված յեղների պես, իսկ յես հարվածում էի նրանց, հարվածում էի փոսներով, ձեռներով, քարերով, փայտով, այն ամենով, ինչ կարողութեանս բոսկեներին ձեռքս եր ընկնում: Հիշում եմ, վոր չորս կողմից վրաս թափվեցին անձանոթ մարդիկ, բռնեցին ինձ, բայց յես նորից ու նորից դուրս պրծա նրանց ձեռներից ու ելի սկսեցի հարվածել:

Հիշում եմ նայել թե ինչպես արջի չափ ուժ ունեցող մի մարդ գրկեց ինձ և յերկու ուժեղ հարված հասցրեց գլխիս: Այդ հարվածներից աչքերս մթնեցին և յես ուշաթափ վայր ընկա...:

Յերբ ուշքի յեկա, հայրս եր կողքիս նստած, իսկ այլ կողքիս քույրս եր շարունակ տենդի մեջ գառանցում:

Յես բարձրացա և նկուղի բաց դռնակից տեսա լուսինը, վորը լողում եր յերկնակամարում:

Հայրս ինձ քնքարար նորից պառկեցրեց:

Մյուս առափոտ յես ուշ դարթնեցի:

Յերբ աչքերս բացի՝ դարձյալ հորս տեսա: Նա նստել եր նույն տեղում, գլուխն առել եր ձեռների մեջ և հենց այդպես էլ քնել եր:

— Հայրե՛կ, — թափահարեցի նրան:

Նա հանկարծակի գալով, վախեցած աչքերը սևևուսեց դեմքիս:

— Հայրե՛կ, դորձից ուշացար:

Յես չգիտեի, վոր յերկու որ տենդի մեջ էի և անընդհատ գառանցում էի:

Այս անգամ ել հայրս կարծեց, թե ելի գառանցում
եմ: Նա քնքշաբար ասաց:

— Քնիր բալաս, քնիր...

Յես վեր հացա յեմ սկսեցի հազելել:

Հայրս կամենում էր ինձ նորից պառկեցնել:

— Հարկավոր ե բազր մաքրել հայրիկ:

— Յես արդեն մաքրել եմ, Վահան, պառկիր:

Մեր ձայներից զարթնեց քույրս և ջուր խնդրեց.
Հայրս նրան ջուր տվեց յեմ յես առիթից ոգավելով
չտապ հազելեցի ու գուրս յեյա: Բակում ինձ կանդ-
նեցրեց Սողոն և ասաց.

— Հը, լավացա՞ր... հերդ խի չի ես յերկու որ
դործի գալիս: Աղեն ասաց, վոր եզուց ել գործի չգա
գուրս կգցեմ, ուրիշին կվերցնեմ: Գնա հորդ եղպես
ել ասա, յես են խաբարեն մտնելու հասա չունեմ:

Նա հեռացավ:

Յես հետ դատա և այլ մասին հայտնեցի հորս:
Հայրս ինձ վրչինչ չպատասխանեց: Նա լուռ եր յեմ
ձայն չեր հանում: Յես դարձացա: Հայրս ծնկներին եր
դրել քրոջս գլուխը, ամբերով ծածկել նրա գեմքը և
գլուխը խոնարհել:

— Հայրիկ...

Հայրս բարձրացրեց գլուխը, մոլոր աչքերով նա-
յեց վրաս, ապա մատը դնելով շրթունքներին շնչաց:

— Սո՛ւս, Վահան քույրդ քնել է:

Հանկարծ նա սկսեց դառնորեն հեկեկալ:

Քույրս մահացել էր:

... Հայրս կուպիս տախտակներից մի դազալ
պատրաստեց: Դազալի մեջ դրեց քրոջս յեմ, յերե-
կոյան դեմ, յերբ արեվը մայր եր մտնում դազալը
գրկեց ու տանից դուրս յեյով: Հեկեկոցը զսպելով
յես հետեվեցի հորս:

Հայրս քայլում եր լուռ, գլխարաց, դազալն
ամուր սեղմած կրծքին:

Նա քայլում եր դեպի գերեզմանատուն:

Նա դազալն այնպես գրկած պահեց մինչև դե-
րեզմանախորերը փորեցին փսսը, հետո գլուխը թյամբ
վերցնելով հորեցս դազալը՝ դանդաղորեն իջեցրին
նրա մեջ:

Յերբ դազալը ծածկվեց հողով ու գոյացավ մի
թումբ, հայրս ամբողջ մարմնով թրմիաց գետին և
գրկելով հողաթումբը, սկսեց լալ: Նա հեկեկում եր
այնպես ուժգին, վոր սիրտս մաս-մաս եր լինում:
Լալիս եր հայրս, լալիս էլի և յես: Յեմ այդպես ժա-
մեր էլին անցնում, իսկ հայրս շարունակում եր լալ:
Գիչերն արդեն գրկել եր յերկինքն ու գետինը յեմ յես
վախից կպել էլի, հորս, վորը դեռ շարունակում եր
լալ, քրոջս գերեզմանաթումբը ամուր գրկած:

* * *

Հայրս հիվանդացավ:

Նա չկարողացավ մյուս որը մեր տիրոջ հրամանով
դործի գնալ: Նրա տեղն ընդունեցին մեկ ուրիշի:

Այան կատաղել եր մեզ վրա: Նրա տղան, Սերժի-
կըն իմ աված ծեծից հետո Յ որ հիվանդացել եր: Նա
դարձյալ ուղարկեց Սողոյին մեզ մոտ: Տիրոջ անունից
Սողոն ասաց, վոր մենք պետք է այսօր ադատենք
նկուղը: Հիվանդ հայրս վրչինչ չեր կարողանում
ասել: Իսկ Սողոն պատասխանի յեր սպասում:

— Հեռացիր, — ասացի յես նրան:

Յերեվի դեմքս այլ բոպեյին շատ եր սարսափելի:
Սողոն վախեցավ ինձնից: Նա շտապ հեռացավ:

Ամբողջ դիչերը հայրս տառապեց տաքության
մեջ: Նա անընդհատ լալիս եր, դառանցում, կանչում
քրոջս և հետո մաղերը վետում: Յես ամեն կերպ
հանգստացնում էլի նրան:

Վաղ առավոտյան Սողոն դարձյալ յեկավ և տի-
րոջ անունից հրամայեց մեզ ադատել նկուղը:

Հորս դառանցանքն անցել եր: Նա կամենում եր
վեր կենալ, սակայն յես խնդրեցի նրան պառկել:

— Գնանք Վահան, դեանք, դրանք խիղճ չունեն,
— ասաց հայրս և մեծ դժվարութեամբ սկսեց շորերը
հագնել: Նա ծանր տնջում էր, որորվում և հաղիվ
հազ էր կարողանում աչքերը բանալ, յիտրոնք շարու-
նակ փակվում էին: Յես չկարողացա սառնասրտու-
թեամբ նայել հորս տանջանքներին:

— Դուրս կորիր աշտեղից, — հանկարծ գոռացի
Սողոյի վրա և մի փայտ վերցրի ձեռս:

— Վահան, — բղավեց հայրս և վայր ընկավ:

— Դուրս կորիր շուն, — գոռացի ավելի բարձր և
փայտով զարկեցի Սողոյի գլխին: Նա դուրս վաղեց
նկուղից: Յես բարձրացրի հորս:

— Ի՞նչ արիր դու, վորդիս, — անբաց նա:

Չանցած 5 րոպե՝ լսվեց տիրոջ կատաղած ձայնը:

— Դուրս գցել այդ լակոտին իր հոր հետ:

Յերեք ափշահա ներս մտան մեր նկուղը: Նրանք
մեր փալատները դուրս նետեցին և մեզ ել վերել
հրեցին: Մի ձեռքով պահելով հիվանդ հորս, մյուսով
յես սկսեցի հափաքել դետնին թափթփված փայտանե-
րը: Պատշգամբում կանգնած էր մեր գիրուկ տերը:
Նա դեռ չէր հանգստացել: Նա կատաղաբար գոռո-
ւում էր:

— Այդ շներին գործ տուր, տուն տուր, կերակ-
րիր և նրանք դեռ համարձակվեն ծեծել քո վորդուն,
ծառայիդ գլուխը փայտով ջարդել, դո՛ւրս, դո՛ւրս
վանդել դրանց:

Մենք առանց այն ել դուրս էինք դնում:

Հայրս հաղիվ-հազ էր քայլում:

Ո՞ւր պիտի գնայինք:

Յես հորս բերի այս այգին: Յես նրան պառկեցրի
այս հեռավոր անկյունում:

Սչուն էր և որերը ցրտում էին: Դեղին տերեւի-
ները, թոչկոտում էին մեր չորս կողմը:

Հայրս կորցրեց գիտակցութունը: Յես նրան
յերկու անգամ կանչեցի: Նա ձայն չհանեց: Բարձ-
րացրի գլուխը, մոտեցրի աչքերիս: Նրա աչքերն ա-
մուր փակված էին, խիչ-չնչաուութունն արդեն կանգ
էր առել:

Շանթահարվածի նման վեր թռա և այդուց դուրս
վազեցի: Վազում էյի փողոցներով, վազում էյի ու
դրո՞ւմ խելագարի պես: Մարդիկ կանգ էյին առնում
և նայում վրաս:

Յես վազում էյի դեպի տիրոջ տունը:

Տան դարպասի առաջ հանդիպեցի նրան:

Նա պատրաստվում էր կառք նստել:

— Ա՛, հրե՛չ, — գոռացի յես և մի մեծ բարի կը-
տոր վերցնելով յուղի դարկեցի նրա դեմքի մեջտե-
ղը: Նա ուշաթափ վայր ընկավ: Սելագարի նման վրա
պրծա և սկսեցի անխնա հարվածներ հասցնել հաստ
պարարտ մարմնին:

Հետո լսեցի չվիցներ: Հավաքվեցին ինչ-վոր
մարդիկ, թափվեցին վրաս ու սկսեցին հարվածներ
հասցնել ինձ: Յես կամաց-կամաց կորցրի գիտակ-
ցութունս: Ձգացի միայն, վոր ինձ շարժեցին կառքի
մեջ և արագորեն տարան...

* * *

Ընկերս վեր կացավ տեղից:

Ձղային շարժումով հանեց գլխարկը և շփեց մա-
զերը:

Վեր կացա նաև յես:

— Հետո՞, — հարցրի յես:

Նա ուղղեց դոտուն կապած ատրճանակը, գըլ-
խարկը դրեց գլխին ու ասաց:

— Հետո մի առ ժամանակ անցկացրի բանտում:

Այնտեղ ծանոթացա մի շարք խելոք ընկերների հետ,
վորոնք ինձ սովորեցրին այլ հայացքներով նայել
կյանքի գլխավոր շարիքների վրա: Յես յերդվեցի
կռվել հարստահարիչների դեմ և այդ կովում լուծեի

հորս, մորս, անպատիւած քրոջն ու նրանց նման հազարավորների վրեժը: Յես մասնակցեցի քաղաքացիական կռիւներին: 1921 թվականի հոկտեմբերին մի կտուճը կարմիր պլարուէրականներէ հետ յես կռոււմ ելի Մ. քաղաքի տակ սպիտակներէ դեմ: Մնացածը քեզ հայտնի չէ: Կռվելով հարուստներէ դեմ և անխնայ վռնէպացներով այդ պարագիտ արյունախումբներին յես լուծում ելի իմ հարազատներէս միեժմանը: Յես չկարողացա այդ պայքարի յետուն տարիներին դալ այս կողմերը և ճակատ առ ճակատ հանդիպել իմ «բարի» պարոնին և նրա վորդու ու յեղբորդու հետ: Յերկար տարիներից հետո, վերջապես, յես հնարագորութիւն ունեցա անցնել այս կողմերը: Յես մտա այս նույն այգին, վորտեղ տարիներ առաջ մահացաւ հայրըս: Այդին փոխվել է, փարթամացել և յես նույնիսկ չեյի ճանաչի յեթե հորս մահը խորը չաղբեր վրաս:

Յես մտա այս այգին և այտտեղ ել յերես առ յերես հանդիպեցի իմ նախկին «բարի» տիրոջը:

Ընկերս դարձյալ ուղղեց գոտուն կապած ասորւ՝ ճանակը, ապա ասաց.

— Գնանք, յես կամենում եմ մեկ անգամ ել նայել նրա դեմքին և տեսնել իմ հարվածի հետքը:

Մենք քայլեցինք:

Այդու մի անկյունում նստել եր անձտնի փոս դնացած քիթով ծերուկը: Նա անատամ բերնով ծամում էր չոր հացի մի կտոր: Ընկերս կանգնեց նրա դիմաց և չեչտակի նայելով դեմքին ասաց.

— Այո՛, հարվածի հետքը չափազանց ուժեղ եր:

Ծերունին դարձացած նայեց նրան:

— Ո՞վ ես դու ծերուկ, — հարցրեց ընկերս.

— Մարդ եմ ելի, ժամանակս անց կացրած մարդ...:

— Իսկ ո՞վ է այդպես քիթդ ջարդել:

Ծերունին դողդողալով վերկացաւ և վախեցած շնչաց:

— Փոքր հասակից...:

Ըստ յերևույթին հազար անգամ անիծելով իր այդ որով ճախորդութիւնները, նա մըթմըթալով հեռացաւ: Իսկ ընկերս քահ-քահ ծիծաղելով ասաց.

— Ինչ լավ գլուխ պահող ե... հիմա յեղ յերևի դողացած ապրանք և տեղափորում...:

Ծերունին այլևս հետ չնայեց, հեռացաւ գլուխը քաշ: Աչնան քամին շարունակում եր սվսվալ ու լսողալ դեղին տերեւների հետ:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԼԵՌՈՐ

... Յերբ հիվանդը դըաց, վոյ արդեն կարող է քայլել, ինդրեց բժշկից.

— Թույլ ավեք ինձ բակ դուրս դալ:

— Արդեն ժամանակն է, սիրելիս, — ժպտալով ասաց ծերունի բժիշկը և ողնեց հիվանդին տեղից բարձրանալու:

Մի ամսից ավելի էր, ինչ նրան անդգա դուրս թյամբ բերել էլին հիվանդանոց: Նա սահմանապահ բանակային էր, կրտսեր հրամանատար: Մենակ կովի յեր բռնվել 17 սահման խախտողները հետ, յոթին սպանել, յերեքին վիրավորել, ինքն էլ մի քանի տեղից վիրավորված, այնքան էր պահել մնացած թշնամիներին, մինչև ողնութուն էլին հասել ուղեկալի բանակայինները:

Ծեր բժիշկը լսել էր կրտսեր հրամանատարի կատարած սխրագործութունը: Նա առաջին որը մեծ գոռուլթյամբ յերկու գնդակ հանեց սահմանապահի մարմնից: Այդ ծանր ոսկերացիան սահմանապահը տարավ առանց փոքրիկ տրտունջի: Այնուհետև նա որական յերկու անգամ անձամբ փոխում էր հիվանդի վերականգնողը և խոսիվ հետեւում նրան: Յերբ հիվանդը յերբեմն բացում էր աչքերը և թեթեմ տրնքում, բժիշկը շփում էր նրա ճակատը և ասում:

— Վոչինչ տղաս, ամեն ինչ դեպի լավն և դրնում:

Այդ խոսքերի վրա հիվանդը ժպտում էր:

— Այ, դու արդեն ժպտում ես, իսկ յերկու որից հետո ման կդաս այգում:

Հիվանդը չափազանց զգացված էր բժշկի այդչափ հոգատար խոսքերից: Բժիշկը պալատի հիվանդներին

նայելուց հետո, հաճախ յերկար նստում էր սահմանապահ հիվանդի մոտ և ուղղում նրա վրայի շորերն ու վիրակապերը: Հիվանդը բացում էր կոպերը յեվ շնջում:

— Բժիշկ, յես ինձ լավ եմ զգում, գնացեք... Բժիշկը բարձրանում էր տեղից և մատը դնելով բերանին, ասում:

— Սուս, խոսել չի կարելի, դուք պետք է լիովին հանդիստ պահեք ձեզ:

Յեմ նա ինամքով հիվանդի ձեռքը գնում էր վերմակի տակ: Այսոր բժիշկը նրան թույլ ավեց վեր կենալ և փոքրիկ չրջապալուցումներ կատարել: Հիվանդը հապալ սպիտակ անդրապարտիկը. խալաթն տանրին դեցեց և ձեռնափայտի ողնությամբ պալատից դուրս յեկավ:

Յերեկոյանում էր: Հեռու հորիցոնը վտակեղոճվել էր մայր մտնող արեւի ճառագայթներից:

Ողում բզղալով այս ու այն կողմ էլին պանում բղեղները: Ծառերի ճյուղերի վրայից, ճնճողկների ծլվուցը տարածվում էր ամենուրեք:

Հիվանդը դանդաղորեն քայլում էր ծառուղիով և ազահորեն շնչում: Նա կանգ առավ մի նստարանի մոտ և հետ նայեց: Քսան քայլ հեռու կանդած էր բժիշկը և իրեն էր նայում: Նա յերբեք չէր նստեց: Այդ վարկյանին անսպասելի արագությամբ մոտ գնացեց բժիշկը:

— Ի՞նչ պատահեց ձեզ, — հարցրեց նա:

Նա նայեց բժշկին և ասաց.

— Վոչինչ...

Բժիշկը բռնեց նրա դարկերակը և այն նորմալ գտնելով, հանգստացավ:

Մի շաբաթիա ընթացքում հիվանդը տեսել էր, թե ինչախիս մեծ ինամքով, հողացողությամբ, առանց հանդիստ առնելու, բժիշկը խնամում և հետեւում է հիվանդ մարտիկներին: Այժմ յերբ բժիշկը նստել էր նրա կողքին, նա կամենում էր խոսել, հարցեր տալ

նրան: Սակայն հիվանդին համակել եր դուրալի մի ծուլութուն և նա խորասուզվեց եր իր մաքերի մեջ:

— Այնտեղ սահմանը հաճախակի՞ յեն խախտում, — հարցրեց բժիշկը:

Հիվանդը ուշադրութեամբ նայեց բժիշկին և ասաց:

— Այո, բայց նրանցից և վոչ մեկը չի անցնի մեր յերկրի խորքը, բժիշկ:

— Յես այդ դիտեմ: Դուք ձեր սրբազան պարտականութիւնը կատարում եք չափազանց բարեխիղճ: Յես ձեզ նախանձում եմ... ամոսոսում եմ, վոր իմ տարիքը թույլ չի տալիս լինել մարտական դիրքերում...

Բժիշկը դրկեց սահմանապահին ու լուռ խանդավատանքով նայեց նրա աչքերին:

Հիվանդանոցի այգում, սողալթախիտ ծառի տակ, իրար կողքի նստել էյին հզիվանդանոցի բժիշկին ու հիվանդ սահմանապահը: Հետևում, նրանց վտանքի տակ փոփել եր նորակառույց սիրուն քաղաքը, վորի մեջտեղով հոսում եր վոլորասպտույտ գետը:

Բժիշկը հայացքը հռոեց քաղաքին և թերթեց իր հուշերը:

— 1920 թվականի դարնան վերջին ամիսն եր: Թշնամին ջարդ կրելով փախչում եր, թողնելով իր հետեւից ավերված քաղաքներ և դուռեր: Կարմիր բանակի զորամասերն առանց կանգ ստնելու անխնա հարածում էյին թշնամուն:

Անկատելի կերպով որ-որի նստրանում եր մեր գումարտակը: Այդ մենք առանձնապես զգացինք մի անգամ, յերբ անտառից բացատ դուրս դալիս թշնամու գնդացիքը մեզ նեղելով, նորից հետ քաշեց անտառը: Ահա այդ ժամանակ եր, վոր ամեն մի բանակային նկատեց մեր ընկերների շատերի բացակայութիւնը: Նրանք ընկել էյին անցած հեռավոր դաշտերում, ճահճուտներում: Գումարտակի հրամանատար Պախրոմենկոն նայեց հոգնած, վոտքից գլուխ ցեխոտ-

ված բանակայիններին և ասաց իր մոտ կանոնած զինկոմ Շչուրովին:

— Տղերքը հոգնել են:

Ձինկոմ Շչուրովը մի հայացք նետեց հրամանատարի նիհար, փոշոտված դեմքին և ասաց:

— Անհրաժեշտ ե դադար առնել...

Հրամանատարը բարձրացավ սիռքովի թմբի վրա և ղրնդույն ձայնով կանչեց:

— Ընկեր Շչեկանով, փնձ մոտ:

Գումարտակի հրամանատարի ողնական Շչեկանովը մոտ վազելով, արատիվ ավեց:

— Ընկեր Շչեկանով, պահակներ դրեք: Բանակայինները թող իրենց կարգի բերեն, հանգստանան և պատրաստ լինեն...

Կես ժամից հետո գումարտակի մարտիկները սեղավորվելով ծառերի տակ, մաքրում էյին հրացանները, կարգի բերում փամփուռները և կարկատում պատռոտված շորերն ու կոշիկները:

Անտառի յեզրերին, վորից դենը սկսվում եր բացատը, հրացաններն ամուր սեղմած, շրջում էյին մեր պահակները:

Գիշերը վրա հասավ: Յերկնքում պսպղացին բազմաթիվ աստղեր:

Յես ու ընկերս — Սավելյին, մեջքի վրա պսուկել էյինք հաստարուն ծառի տակ: Մենք դռնովում էյինք գումարտակից բաժականին հետո: Հրամանատարի ողնական Շչեկանովը հրամայել եր:

— Աչալուրջ յեղեք, անտառը մեծ ե, վայրն անծանոթ:

Մեզից դենն անտառը քանի գնում՝ խորանում եր: Մթութեան մեջ, բացի մոտիկ ծառերի սեվ ըստ-վերներից վոչինչ չեր յերեվում:

Փչում եր մեղմ, դուրալի քամին: Սակայն քունք չեր իջնում իմ աչքերին: Մեր գլխավերելում, փոսերի մեջ, իրենց մխալաղաղ յերգն էյին սկսել ճոթիկները:

— Այս անիրավները կարծես հարսանիք են տնում, — դժգոհ մրթմրթում էր Սափեյլին և անդադար չուզ դալիս: Ըստ յերեվույթին նրա աչքերին յեկն քուն չէր իջնում: Սափեյլին քիչ բարձրացավ, աչքերը կկոցելով նայեց անթափանց հեռուն:

— Լսիր, չճնջաց նա, — դու քնած ես:

— Վոչ, քնած չեմ, — ի՞նչ կա:

— Լսիր, այս արդեն ճուրղները չեն ճուռում, յես մարդկանց ձայն լսեցի:

Մի քանի վարկյան շնչառություններս պահած, մենք ականջ էյինք դնում, սակայն շուրջն ամեն ինչ լսադադ էր:

— Քնիր, ասացի յես, — քեզ թվացել է: Յեվ նորեց փաթաթվելով շինելի մեջ պառկեցի:

Չանցած կես րոպե, Սափեյլին բոթեց կողքս և հրացանը վերցնելով բարձրացավ տեղից:

— Վեր կաց, այտակ ինչ վոր բան է կատարվում:

Նրա հաստատուն ձայնն ու մճուռական պահանջն ստիպեցին ինձ լսկույն վեր ցատկել: Մենք կրկին լարեցինք մեր լսողությունը: Այս անդամ լսեցինք ինչ վոր անքոց ու մեկի խրախուսական խոսքերը:

Մենք փորձող տալով շարժվեցինք դեպի ձայնը: Վոչինչ չեյինք տեսնում, սակայն վորքան հեռանում էյինք պտուկած տեղից, այնքան տնքոցը մոտիկից էր լսվում: Քիչ հեռո պարզորեն լսեցինք հետևյալ խոսքերը.

— Քիչ ել դիմացիր Ավազ, հասանք հա՛... .

Յես ու Սափեյլին պարզեցինք տերեխախտ մի ծառի յետևով:

Մի անձեվ ստվեր դանդաղորեն մեր կողմն էր գալիս: Յերբ նա բավականին մոտեցավ, մենք հանկարծակի բարձրանալով և հրացաններն ուղղելով մեր բերան դռնեցինք:

— Կանոջ առ, ո՞վ էս:

— Մենք, մենք — կմկմաց անձանոթն ու ձեռքերը վայր դրեց:

— Ձեռներդ վեր, — դոտաց Սափեյլին և յերբ անձանոթը ձեռները վեր բարձրացրեց, նա փոսեցավ ընդհուպ և հարցրեց:

— Ո՞վքեր եք, ո՞ւր եք գնում:

— Մենք գնում ենք... — կոտրատված ուռուրենով ասաց անձանոթ յերիտասարդը: — Դու կարմիր զինվոր, դու բալչեվիկ... Ավազ, կարմիրներ են... ուրախացած բացականչեց յերիտասարդը յեվ կամեցավ բարձրացնել պարկածին: — Ավազ, — ծրվվաց նա և կրծքին սեղմելով անչնչացածի գլուխը, սկսեց դառնորեն հեկեկալ:

— Ավազ, Ավազ — անդադար կրկնում էր անձանոթը և համբուրում մեռածին:

Ծառերի արանքից նայող լուսինը լուսավորում էր մեռածի դեղնած դեմքը:

Մենք մի վարկյան մնացել էյինք շվարված, չլիտեյինք ինչ անել: Հաճախ է պատահել, յերբ թշնամու բանակից մեր կողմն են անցել մեռակ ու խմբերով մարդիկ: Նրանք միացել են մեզ հետ և կովել սպիտակների դեմ: Բայց յերբեք չէր պատահել, վոր փախչողն իր հետ բերեր նայել մեռած մարդու:

Յես ու Սափեյլին կանգնել էյինք գլխիկոր:

Մեր դիտարկերվում ծառերն էյին սոսափում: Յերիտասարդը գրկել էր մեռելին ու դառնազին հեկեկում էր: Հանկարծ նա բարձրացավ տեղից, հայացրն հատեց յետն հետևվում սրսլացող լույսերին, ձեռքը թափահարելով սղում, բացականչեց.

— Նրանք մարդիկ չեն, հրեաներ են: Նրանք սպանեցին Ավազին: Ավազը չկարողացավ տանել խմբապետի յլախությունը: Խմբապետը կամեցավ բռնարարել Ավազի կնոջը: Ավազը խիեց նրան և անա կատաղած խմբապետը հրամայեց ծեծել Ավազին, սվիներով ծակոտել նրա մարմինը: Տեսեք, տեսեք, Ավազի մարմինն ամբողջովին ծակոտված է... Հեռո խմբապետը

նորեց յեկալ և կամեցալ իր գրվելի դործը կրատարել անպաշտպան կնոջ հետ: Սակայն յես դաշուչնը խրեցի խմբակաւ սիրտը: Ավաղին փայցրի... Կարծում էյի նրա կյանքը կիրկեմ, բայց նա մեռաւ... Նա կուսցալ, նորեց համբուրեց մեռածին, ապա բարձրանալով՝ ասաց:

— Տարեք ինձ ձեր հրամանատարի մոտ... Թող նա ինձ յեմս գենք տա...

Նա իր գլխին առաւ մեռածին և սկսեց քայլել: Հրամանատարի վրանի մոտ կանդնած եր պահակը: Յերբ մենք մոտեցանք, նա հրացանը պարզելով, կանդնեցրեց մեզ: Սալելին մոտեցաւ և գեկուցեց յեղելութունը: Նա մտաւ վրանը, խկ քիչ հետո հրամանատար Պախրոմենկոն գինկոմի հետ դուրս յեկան:

Յերիտասարդը մեռելին զգուշութեամբ գեանին դնելով հրամանատարին պատմեց:

— Տանջում են մեզ, մեր կանանց բռնարարում, յերեխաների ուտելու վերջին պաշարը խրում: Յերկուս մասից ալել է, ինչ դաշնակցականների խմբերը թաւանում են մեր գյուղերը: Անդեն ժողովրդին ծեծում, գլխատում են... Տվեք, ինձ գենք տվեք ձեզ հետ միասին յես ել նրանց դեմ դուրս կգամ:

Զինկոմը յերիտասարդին տարաւ իր վրանը: Հրամանատար Պախրոմենկոն աչքերը փայլեցնելով ասաց բանակայիններին:

— Վազն ինչ գնով ել լինի, պետք է գյուղը գրավել:

Արեւը դեռ նոր եր բարձրանում գլխացի լեռան հեռավից յերբ բանակայինները կազմ ու պատրաստ շարժվեցին:

Գյուղը գրավելու համար, մենք պետք է անցնեյինք բացատը, ապա գրոհեյինք լեռան ստորոտով:

Այս արգեն 2-րդ անգամն եր, ինչ արտարանովում էյինք գրոհի: Առաջին անգամ թշնամու գնդացիքը մեզ խանգարել եր: Լեռան գագաթին գրված թշնա-

մու գնդացիքն առաջին անգամ շատ զոհեր խլեց մեզնից: Ա՛խ, յեթե թնդանոթ ունենայինք, այդ անկոծ յլան գագաթն ուղը կցնդեցնեյինք: Բայց մենք թնդանոթ չունեյինք:

Այս անգամ ել լավեց հրամանատարի ձայնը...

— Սուսը, ընկերներ... .

Միահամուռ ձայնով, ուռուս գոռալով, հրացաններն ողում ճոճելով առաջ նետվեցինք:

Թփից-թուփ, թմբից-թումբ ցատկոտելով, ընկնելով ու վեր կենալով առաջ էյինք սլանում:

Գնդացիքը լուռ եր: Այդ ալելի յեր սիրտ տալիս մեզ:

Բայց յերբ բավականին խորացանք դեպ բացատը, գնդացիքն սկսեց կապարե կարկուտ մաղել վերելից: Մի ակնթարթում բոլորս ել պառկեցինք:

Կրակեն անատութուն եր: Մենք դեռ թշնամուն չեյինք տեսնում: Մեր գլխափոր թշնամին առայժմ գնդացիքն եր: Հրացանների կրակով նրան լռեցնել անհնարին եր: Մենք նորեց հետ սողացինք դեպի անտառ:

Հրամանատար Պախրոմենկոն ձախ թեվից վերբ եր ստացել: Նա զայրացած եր նայել անհաջող գրոհից: Մերթ ընդ մերթ վաղում եր անտառի պուռնկը, յերկար նայում լեռան գագաթին ու հետո բացականում:

— Եխ, անիծված լեռ:

Զինկոմ Շչուրովը քաղզկեի հետ միասին հաստարուն ծառի տակ ուշադրութեամբ տուպոզրաֆիկական բարտեզներն էյին ուսումնասիրում:

Քիչ անց, գինկոմը բարձրացաւ տեղից, կանչեց հրամանատար Պախրոմենկոյին:

— Մեր գրոհումներն անողուտ են: Գյուղը վերջընելու համար, պետք է դիմենք այլ միջոցի:

Հրամանատարը խեթ նայեց գինկոմին, ապա հարցրեց:

— Ի՞նչ եք առաջարկում:

— Նախ, լսեցեք ինձ: Աշխարհադրական գիրքով
դժուրն անառիկ է: Նայեցեք այստեղ: Ահա ձեզ հյու-
սիսային մասը: Հոսում է լաշն ու վարար գետը: Լո-
ղալով անցնել գետը նույնպիսի՞ սխալ կլինի, ինչպես
բացատրով գրոհելը: Հարավային մասը չըջապատված
է լեռներով: Արևմտյան մասը գտնվում է դյուղի հա-
կառակ կողմը: Մեծ է արեվելյան մասը, մորով
անցնել զնդացիքը թույլ չի տալիս:

Զինկոմը մի պահ լռեց և նայեց հրամանատարին:
Քաղղեկը ծոծրակը քորելով ասաց:

— Այո, դրուժյունը չափազանց կրիտիքական է:
Հրամանատարը լուռ եր: Նա չըթուներներն եր
կրծոտում:

— Ընկեր հրամանատար, կարծում եմ այժմ հաս-
կանալի յե, թե մորն է մեր սխալը:

Հրամանատարը բարձրացավ տեղից:

— Այս դրուժյունից փրկվելու միակ յեղը ընկեր
հրամանատար, յեռան գաղաթին դրված զնդացիքը
վերցնելն է:

Հրամանատարը մի շարժում գործեց, իսկ հետո
բացահանեց:

— Այո, դուք ճիշտ եք ասում, մինչև զնդացիքը
չվերցնենք, դյուղը չենք կարող գրավել: Յես կգնամ
զնդացիքը վերցնելու:

Զինկոմը ծալեց քարտեզը, դրեց պայտուակում,
ապա ավելացրեց:

— Դուք, իհարկե, կատակ եք անում:

— Ամենավին:

Զինկոմը ծիծաղեց:

— Հրամայեցեք հավաքել գումարտակի մարտիկ-
ներին: Նրանք պետք է իմանան մեր դրուժյունը:

Քիչ անց գումարտակի մարտիկները մեծ ուշա-
դրուժյամբ լսում էին զինկոմին:

— Ընկերներ, վերջացրեց նա իր խոսքը, մեզ
մտնում է իսկ զնդացիքը և այն ուղղել թշնամու կող-

մը: Դրանումն է մեր բոլորիս փրկությունը: Ձեզնից
ո՞վ հանձն կտանի լուծել այդ խնդիրը: Այդ խոսքերի
վրա բոլոր մարտիկներն ինչպես մեկ հույի բարձրա-
նայով տեղերից, բացահանեցին:

— Յես...

— Յես, յես...

— Յես, ընկեր զինկոմ:

— Սպասեցեք ընկերներ, տեսնում եմ ցանկացող-
ներ շատ կան: Այն ժամանակ թույլ ավելք ինձ ընտ-
րություն կատարելու:

Ուղղիկները հանդարտվեցին: Ամեն մեկն անհամ-
բեր, սրտաբախ սպասում եր, թե ում անունը կտա
զինկոմը:

— Սավելիյ և Ոստապչուկ, ինձ մոտ, մնացած-
ները կարող են ցրվել:

Յես ու Սավելիյն մոտեցանք զինկոմին: Այդ ժա-
մանակ վաղելով զինկոմին մոտեցավ Սավաղը—գիշե-
րով դյուղից մեզ մոտ փախած յերխտասարդը:

— Ընկեր հրամանատար, թույլ ավելք ինձ յեխ
դնալ զնդացիքը վերցնելու: Այս յետը իմ հինգ մատ-
ների պես եմ ճանաչում: Ընկերներին կտանեմ ամենա-
կարճ և անվտանգ ճանապարհներով:

Զինկոմը նայեց յերխտասարդին, ապա մեզ, հետո
ասաց:

— Շատ լավ:

Մենք մտանք նրա վրանը համարստախան
ցուցմունքներ տտանալու:

* * *

Մութ գիշեր եր: Անձրեվախան քամի յեր փչում:
Առջևից փոքրոց եր տալիս Սավաղը: Նրա հետե-
վից սողում եր Սավելիյն:
Սավելիյու հետևից սողում էյի յես:

Չորս ժամից ավել կլինեք, ինչ մենք մեծ զգու-
շությամբ սողում էյինք դեպի յետը: Լեռան գաղա-
թից լուսարձակը մերթ ընդ մերթ ստիպում եր մեզ

կուչ գալ փորկեցե բարի, թփի, թմրի հետև: Յերբ լուսարձակն իր փորձումները շարունակում էր մեկ-եից հետև, մենք կամաց-կամաց շարժվում էինք, ստաջ ստգում: Յերբեմն Սափաղը կանդ էր ասնում: Յես ու Սափելլին մոտենում էինք նրան և նա շշմուշում էր:

— Զգուշ, ալստեղ փոսեր կան:

Վերջապես հասանք լեռան ստորտը: Նապաստակի արագաշարժությամբ ու մեծ ճարակությամբ իրեն հայտնի արահետով Սափաղը վեր էր բարձրանում: Լարելով մեր ուժեերը, յես ու Սափելլին աշխատում էինք հետ չմնալ նրանից:

Բարձր յերկնքում դորշ ամպերն աստիճանորար սպիտակում էին: Ծուռով բացվելու յե լույսը:

Մենք լարեցինք մեր ուժեերը:

Փշտ թփերն ու ծառերի ճյուղերը գարկվում էին մեր յերեսներին, արլունտում, պատռոտում չորերը: Սակայն մենք աստնց ուշադրութուն դարձնելու բարձրանում էինք:

Հանկարծ Սափաղը կանգ առավ: Հետո նա կատարեց փոքրիկ մի թոխչք: Քիչ հետո լավեց ծանր անքոց ու մեկն անձայն թպրտալով ընկավ մեր վտաների տակ:

Դա թշնամու զնդացրի մոտերքում գրված պահան էր:

— Մենք մոտենում ենք զնդացրին, — ասաց Սափաղը և առաջ անցավ:

Յես ու Սափելլին ստորճանակները պատրաստ բռնած՝ հետեվում էինք նրան: Մենք արդեն բարձրացել էինք լեռան գագաթը: Քիչ հետև վառվում էր մի փոքրիկ խարուկ: Սարուկի շուրջը պտակել էին մի քանի հողի:

— Աշխատեցեք նրանց անաղմուկ սատկեցնել, — շշմուշ Սափելլին:

Մեծ դրուշությամբ մոտենալով, թաղնվեցինք նրանցից շատ մոտիկ, թմբերի հետև: Նրանց դրնդացիրի խողովակն ուղղված էր անտառի կողմը:

Մենք ազահությամբ նայում էինք զնդացրին և նրա մոտ պատկած մարդկանց: Ահա նրանք, վարայնքան դորք խլեցին մեզից:

Յես, Սափելլին ու Սափաղն իրար նայեցինք ու անձայն հասկացանք միմյանց:

Թշնամիներից մեկը տեղից վեր կացավ, փայտի մի կտոր դրեց խարուկը: Հետո նստելով, հարցրեց ընկերոջը:

— Հետաքրքիր է, քանի՞ հողուց է բաղկացած նրանց բանակը: Հինգ ուր է, ինչ հնձում ենք, ելի մորեխների պես անտառից դուրս են պրծնում:

— Ինչքան շատ դուրս պրծնեն մեր հունձն սուսա կլինի, — ասաց մյուսը: Նա կամեցավ ինչ վոր բան էլ ասել, բայց կիսախավարի մեջ փայլեց դանակը. վորը մինչև դաստակը խրվեց նրա կոկորդը: Մյուսը սարսափահար բարձրանալով, ասորճանակն ուղղեց հարձակվող Սափելլու վրա: Սակայն դանակը խրվեց նրա մեջքը և նա խոռացնելով դեպի տապալկեց:

— Գնդացրի փողն ուղղել դեպի թշնամին, — հրամայեց Սափելլին խուլոտ ձայնով և յերերալով բարձրացավ տեղից:

Նա բարձրացրեց հրացանը և յերեք անգամ կրակեց: Դա մեր պայմանական նշանն էր, վորով իմացավինք, թե զնդացրը մեր ձեռքումն է:

Արելը դեռ չէր ծագել, յերբ մերոնք դրոհի դեմեցին:

Լեռան կատարից մենք տեսանք, թե ինչպես դյուղից դուրս — խրամատներում պտուկած թշնամին տեղից անդամ չարժվեց: Նրանք յերեմի իրենց հույսը դրել էին զնդացրի վրա: Յերբ մերոնք կրակելով բավականին մոտեցան, թշնամու բանակում նոր միայն խուճապ առաջացավ:

— Կրակ բացել թշնամու վրա, — թույլ ձայնով կարգադրեց Սափելլին:

Սավաղը նախեց նրա դունաթափ դեմքին ու ճչաց :

— Դու վերաժողոված ես :

Բոպեն վճռական էր :

Սեղմեղով առամներս, յես կրակ բացի թչնամու վրա :

— Հաղթությունը մերն է, — բացականչեց Սավաղը և բարձրացավ սեղից :

— Այո, մերն է հաղթանակը, — լսեցինք մի թույլ ձայն :

Յես ու Սավաղը հետ նախեցինք : Ձեռքը կրծքին սեղմած, ժպտը դեմքին, մեզ էր նայում Սավելյին : Նրա շարերն ամբողջովին ներկված էին արյունով, դեմքը բոլորովին կապույտ էր :

— Սավելի, — ճչաց Սավաղը :

Յես նետովեցի դեպի ընկերս : Պատուհանի շարիկս : Սավաղի ողնոթյամբ հանեցի Սավելյու վերնաշապիկը : Գնդակը դիպել էր ձախ կրծքին : Յես կապեցի նրա վերքը : Բայց արդեն ուշ էր : Նա արյունաքամ էր լինում :

— Սավելի, ընկեր Սավելի, ի՞նչ պատահեց քեզ, — դառնորեն լսելիս էր Սավաղը :

Սավելին բացեց աչքերը և նախեց ինձ :

— Ռատապ, Անետային նամակ կգրես, կասես թող լավ պահի Այսուզկային, — ասաց նա և աչքերը փակեց :

Յես նրան սեղմեցի իմ կրծքին :

Նա արդեն մեռած էր...

Մենք Սավելյուն թաղեցինք այդ լեռան գաղաթի վրա : Յեզի պատիվ նրան, այդ լեռը կոչեցինք «Հաղթանակի լեռ»...

Բժիշկը ընեց : Մահամեղապահ բանակայինը նրա աչքերում արցունքի կաթիլներ տեսավ :

— Ահա արբաբես, մեր լայնածավալ յերկրի ամեն ամեն մի թումբը, սարը, յեռը, տափաստանը, դետը, յիճը, ծովն ու ուփկիանը, ձեռք է բերվել համասկոխվներում, մեր դժբախտագի լայնագուն մարդ-

կանց թափած արյան դնով : Այդ թափած արյունը դուր չի անցել, նա տվել է իր արդյունքները և ահա այդ պատճառով մեր ամեն մի վերջուկը թանդ է մեզ համար : Ահա թե ինչու մենք մեր աչքի յույսի պես պետք է հսկենք ու պահպանենք այդ հողի ամեն մի վերջուկը :



ՅԵՐԵՒԻ ՄԱՀՐ

Ողբ խաղաղ եր: Ձեյին շարժվում վոչ ծառերը,
վոչ գորգաման դալար խոտը, վոչ ել բազմապիսի
սիրուն ծաղիկները:

Լուսինը դեմ եր սունը քնքույշ, բարակ, սպիտակ
ամպի կտորին և ուշի-ուշով ականջ եր գնում յերեք
խիզախ ընկերների մահվան վողբերգական պատմու-
թյանը: Ծառերն ի պատիվ ընկած ընկերներ, կախել
եյին իրենց տերեվախիտ ճյուղերը: Ծաղիկները, վո-
րոնց թարմ կոկոններ Վրա վորպես արցունքի կա-
թիլներ փայլում եր ցողը, նույնպես թեքել եյին ի-
րենց գլխիկները:

Կարմիր մարտիկները խորին ուշադրությամբ յեվ
լարված ությամբ ուկնդրում եյին դադանային վոճրա-
գործության պատմությանը: Նրանք լսում են Գեր-
մանիայից յեկած քաղեմի գրանտին: Նրա նիհար դեմ-
քը, վախտ մարմինն ու չոր հազը հետեվանք են կրած
հալածանքների ու զժվարին պաշարի: Գերմանական
կոմունիստ ընկերները ժողովրդի ազատության հա-
մար տարվող պաշարում չեն խնայում նույնիսկ
կյանքերը:

Ձիմեղը մեծ սառնասրտությամբ եր պատմում
կարմիր մարտիկներին իր ընկերների մահվան մա-
սին: Նա կենդանի վկա յե յեղել այդ յեղեռնադո-
ծությանը:

* * *

Բեռլինը համարյա չորս կողմից շրջապատված և
բանվորական սեվ ու մրոտ թաղամասերով: Գիշերնե-
րն այդ թաղամասերում մութ խավարն և տիրում,

իսկ տներում քաղցից հյուծված յերեխաները, հիվանդ
թոքախտավոր ծնողներից հաց են աղերսում:

Հա՛ց, հա՛ց, մի կտոր սեվ հա՛ց, ահա ինչի կա-
րիք են զգում Նեկսելի, Լիխտենբերգի, Մոսբիտի,
Վեդդինգի, Տեդսելի և այլ աշխատավոր թաղամասի
ընակիչները:

Յեվ այն ժամանակ, յերբ քաղաքի կենտրոնում,
Փոկստրոտների, տանգոների յերաժշտության տակ,
հզիպցած կապիտալիստներն իրենց պոռնիկ կանանց
և սիրուհիներ ճետ գիշերներն անց են կացնում
չվայտ քեֆերի մեջ, այդ նույն ժամանակ խեղճերի
թաղամասերում, շա՛տ բանվորներ ամուր փակում են
սենյակների դռներն ու պատուհանները, բացում դա-
գի խողովակները յեվ... հալիտենական քուն մտնում:
Առավոտյան դեմ, ժանդարմերիան հրացանների կո-
թերով վիջարդի այդ դռները և սենյակներից դուրս
կրերի խեղդամահ յերեխաներին, կանանց ու տղա-
մարդկանց: Տղամարդիկ ել որվա ծանր վարիքը չեն
զգա, յերեխաներն արցունքոտ աչքերով ծնողներից
ուտելու բան չեն աղերսի... Պատրաստի, նոր փոր-
ված գերեզմանները նրանց կընդունեն իրենց մեջ:

Ստեֆան ել Ի⁶նչ գործ ունեն Փաշիտ վոստիկան-
ներն այդ քաղցից մեռնողների թաղամասերում: Ի⁶նչ
են փնտրում նրանք ամեն գիշեր չորս-ութ հարկանի
մահվան նման մոռյլ տներում:

Ամեն գիշեր այդ թաղամասերով սողում են գին-
ված ժանդարմներով ավտոմեքենաները: Ահա սեվ
ավտոմեքենան սողում և Լիխտենբերգի թաղամասի
ամենամութ փողոցով: Մեքենայի առջևի յերկու
աչքերից արձակած լույսը, պարզ կերպով ցույց և
տալիս կեդոտ, ցեխոտ փողոցն իր անմաքուր մայ-
թերով, վորոնց վրա վոչ մի անցորդ չի յերեվում:

Մեքենան սողում և չափազանց դանդաղ, մերթ
ընդ մերթ կանդ անելով: Այդ բուպիյին ցած են ցա-
կում սաղարտավոր ժանդարմներ և պոկում պատերից

կայրած թուուցիկները: Թուուցիկները թարմ են յեւ
նրանց վրայի սոսինձը դեռ չի չորացել:

Հետո մեքենան շարունակում էր առաջ սողալ:

Հանկարծ մեքենայի լուսը հայտնաբերեց յերեք
մարդկանց սիւլուեաները, վորոնք արագութեամբ թա-
ղւնովեցին մտաիկ նրբանցքներում:

Մեքենան արագացրեց ընթացքը յեւ թիչ հետո
կանգ առաւ այնտեղ, վորտեղ յերեացին յերեք կա-
կածելի մարդիկ:

Մեքենայից կախակի արագութեամբ ցած թռան
ժանդարմներ և վազեցին յերեք հողու հետեւից:

Յերեք հողի վազում ելին փողոցի յերկարու-
թեամբ: Ֆակերի յերկաթե դարպասները կողտրված են
և ներս մտնելու հնարավորութիւն չկա:

Առջևից վազող յերկարահասակը կանգ առաւ և
չնչաց իր յերկու ընկերներին:

— Թուուցիկները ձեզ մո՞տ են:

— Վոչ եմիլ, մենք դեն նետեցինք, — պատաս-
խանեց ջրան տարեկան կոմյերիս Ֆելիքսը:

Նրանք առաջ վազեցին: Նրանք չուսով պետք է
թեքվէին... Հանկարծ խաչածելով փողոցից դուրս
սողաց մի ուրիշ մեքենա և իր ուժեղ լուսը նետեց
փախստականներին: Նրանք սառել կանգնել էլին յեւ
այդ բախական եր, վորպետի հետեւից վազող ժան-
դարմները հտոնեցին և բռնեցին նրանց: Առանց աղ-
մուկի, քաջքշելով և հարվածելով յերեք հողուն
նտեցրին մոտեցող մեքենայի մեջ և քեցին հակառակ
ուղղութեամբ:

Ո՞ր եր սլանում այդպես արագ մեքենան: Վոր-
տեղ էլին տանում նրանց, բռնված ընկերները դադա-
փար կազմել չեն կարողանում: Գիշատիչ աչքերով
էլին նայում նրանց վրա ժանդարմները: Գայլերի նը-
ման էլին չըջապատել և մի փոքրիկ շարժում նրանց
կողմից բախական եր, վորպետի կատաղի հարվածներ
տեղային:

— Ծներ, ո՞ւր են թուուցիկները, — արցրեց ժան-
դարմներից մեկը Կուրտին և պատասխան չստանա-
լով, մի ուժեղ արցի հասցրեց նրա մեջքին:

Նրանց ձեռքերը կապված էլին բարակ շղթանե-
րով: Նրանց վայր էլին դցել մեքենայի հատակին և
թուլլ չէլին տալիս վեր կենալ:

Մի առ ժամանակ ժանդարմներն ուշադրութեամբ
դարձրին փողոցի մի անկյունում դանձող ինչ-վոր
հարայ-հրոցին: Նրանք ողավեցին առիթից և մի քա-
նի խոսք փոխանակեցին միմյանց հետ:

Կայնաթիկունք, միանուտ մարմնով Կուրտը շըն-
ջաց իր ընկերներին:

— Հիմարաբար ընկանք սրանց ձեռքը: Սրանք մեկ
կտանջեն: Սակայն ինչ ել անեն տպագրական մեքե-
նայի տեղը չասեք:

Յերկարահասակ եմիլն առանց այն ել դիտեր,
վոր այն որվանից, ինչ կոմիւնան անցել է ընդհատա-
կյա աշխատանքի, ժանդարմերիան ճգնում է գտնել
տպագրական մեքենայի հետքերը: Այդ մասին դիտե-
նակ կոմյերիս Ֆելիքսը: Նրանք չեն հայտնի մեքե-
նայի տեղը:

Այստեքենան կանգ առաւ: Նրանց վտոքի բարձ-
րացրին ու մեքենայից դուրս բերին: Թարմ քամին
դարկեց արյունոտ դեմքերին և դուրալի հովն անցաւ
վողջ մարմնով:

Մտաիկից լսվում էր Ծպրե գետի վշշոցը: Գնաի
վշշոցից կոահեցին, վոր իրենք գտնվում են քաղաքից
դուրս:

Մեքենան կանգ էր առել մի մեծ շինութեան առ-
ջև: Ի՞նչ շինութիւն էր այդ, մթութեան մեջ չէր
կարելի վորոշել: Նրանց ներս տարան, լիֆտով
բարձրացրին վերելի հարկը և դցեցին կտոր, լուսա-
փորված մի սենյակ:

Սենյակի մեջ տեղում դրված էր կոպիտ, ամուր
մի սեղան: Սեղանն ուներ չորս անցք, վորոնց միջով

անց եր կացված բաժակահանին հաստութիւնն ունեցող շլթաներ:

Այդ տունն անվանվում եր «գեղին տնակ»: Այդտեղ էլ ին տանջում կոմունիստ ընկերներին:

Փանդարմերիայի վարչության պետը արկղից հանեց մի ավրամ, մասը մեկնեց հենց առաջին եջում կոցրած նկարին, դառնալով դեպի պատանի Ֆելիքսն ասաց.

— Ո՞վ է այս մարդը. դու ճանաչո՞ւմ ես սրան:

Ֆելիքսը նայեց Թեյմանի բարությամբ ժպտացող լուսանկարին, ապա նայեց պետի դազանային մոտո դեմքին, ատամներն ամուր սեղմեց ու վռչինչ շատաց: Նա գիտեր, վոր իր սրտասխանը պետք է արժանանար նրա հեղնական ծիծաղին:

— Ա՛, լակոտ, դու լո՞ւմ ես, քեզ մանուկ ձեվացնում,— այս ասելով պետն իր ծանր թաթով դարկեց Ֆելիքսի դեմքին: Ֆելիքսն ամուր հարվածից դեպի պատին, իսկ հետո վողջ հասակով փռվեց դեպին: Արյունը դուրս ցայտեց քթածակերից և հոսեց դեպի բերանը:

— Գազա՛ն, — մոնչաց բարձրահասակ եմիլը և նետվեց դեպի վոստիկանապետը: Սակայն չորս ուժեղ ժանդարմներ հարձակվեցին նրա վրա և քաջջելով տարան կանգնեցրին սեղանի մոտ:

— Մերկացնել և կապել սեղանին, — հրամայեց ամբողջովին կասկարմիր կարած Փաշխտապետը:

Եմիլը համատորեն զիմադրեց: Սակայն ուժերն անհավասար էլին: Փանդարմների հարվածների տակ, նա թուլացավ և ուժասպառ դրության մեջ նրան փորի վրա կապեցին սեղանին, վոստներն ու ձեռներն անցկացնելով շլթաների մեջ:

Վոստիկանապետը մոտեցավ սեղանին, բռնեց եմիլի սեղ մազերից, բարձրացրեց նրա գլուխը, ապա ասաց.

— Լսի՛ր, այս սենյակը կարծեմ ձեզ լավ հայտնի է: Այստեղ ընկնողն յեթե ամեն ինչ պարզ խոսու-

վանի, կստանա կատարյալ աղատութիւն. իսկ յեթե համտուեց, վռչինչ շատաց, նա յերբեք վենդանի հեռ չի դառնա: Յեղիբ խոհեմ, ընտրիբ կամ մահ, կամ աղատութիւն: Ասա, կպատասխանե՞ս իմ բոլոր հարցերին:

— Յես վռչինչ չեմ ասի:

— Մենք կստիպենք քեզ ասել, — հանդարտ պատասխանեց Փաշխտապետը, ապա վերցնելով իր մոտ կանգնած ժանդարմի ձեռքից ուտինե հաստ մահազը, նրանով ուժեղ հարված հասցրեց եմիլի մերկ մեջքին:

Եմիլը թեթևի ճշաց, ապա կրծելով շրթունքները, աչքերն ամուր փակեց: Մեջքի կաշվից դուրս ցայտեց արյունը, վորք վրա ժանդարմներից մեկը մանրացրած աղ ցանեց: Մարմինը սկսեց սարսափելի կերպով մոմոալ: Այս անգամ արդեն եմիլը չէր կարողանում իրեն դապել, շտնքալ ցափերից:

— Ասա, վորտե՞ղ է թողցրած տպագրական մեքենան:

Եմիլը մեծ դժվարությամբ բարձրացրեց գլուխը, կառադուլթյամբ լի հայացքը հտուեց Փաշխտապետի դեմքին, հետո թքեց նրա մոտ յերեսին:

— Ա՛, — մոնչաց Փաշխտապետը և ինքն իրեն կորցնելով սկսեց հարվածներ իջեցնել կապվածի մեջքին: Նա այն ժամանակ դադարեց հարվածելուց, յերբ տեսավ, վոր կապվածն էլ չի շարժվում ու նրա հարվածները պատռելով ողջ, նոր-նոր արյունոտ յերկրներ են թողնում եմիլի մեջքին:

— Սառը ջու՛ր, — գոռաց վոստիկանապետը: Յերկու ժանդարմ բերին սառը ջուրը յեղ լցրին կապվածի վրա:

Մի քանի րոպեից հետո եմիլն ուշքի յեկավ:

— Ասա, վորտե՞ղ է տպագրական մեքենան:

— Չեմ ասի:

— Հարվածե՛լ...

Գարձյալ իջան ուժեղ հարվածներ եմիլի մեջքին:

նա կորցրեց զխաղցուլթյունը:

— Բախտահան ե, տանել ներքնահարկը, ուչքի բե-
րել:

Չորս դադաններ անչնչացած մարմինը քարշ տա-
լով դուրս տարան սենյակից:

— Այժմ դառնանք այս յերկուսին:

Վոստրիկանապետը հրամայեց սեղանին կապել Ֆե-
լիքսին: Ֆելիքսին մերկացրին և նույնպես փորել վրա
կապեցին սեղանին: Սեղանն արյունոտ եր. մահվան
դուղն անցավ կոմյերիտի մարմնով, յերբ մերկ մար-
մինը թաթախվեց ընկերոջ արյունով:

— Պատանի, դու տեսա՞ր թե ինչի արժանացավ
մեծ ընկերը. յես քեզ խղճում եմ. կտամ քեզ ազա-
տություն, միայն սաս՝ տպագրիչ մեքենայի տեղը:

Ֆելիքսը կայուն կոմյերիտ եր. նա շատ անգամ
եր այդ սպացուցել էր ավագ ընկերների մոտ: Նրանք
հավատացել էյին նրան, տվել էյին ամենապատու-
խանատու գործը և հայտնել բոլոր դադանիքները:
Այժմ ընկել է այդ հրեշներին ձեռքը: Սրանք կենդանի
բաց չեն թողնի: Իսկ տանն իրեն են սպասում ձեռք,
մայրը և 18 տարեկան սիրելի քույրը: Հիմա մայրն իր
թույլ փոսներով ընկել է փողոցները, հարցնում է,
ծանոթներին, չե՞ն տեսել, արդյոք, իր միևնույնը դա-
վակին: Գուցե դուռում անձրեվ է դալիս, գուցե փո-
նացող քամին պրկում է սան կոտորները, ու դուղի
ձեռք մայրն ընկել է ցեխի մեջ և մեծ գծավորությամբ
բարձրանալով շարունակում է իր անողուտ փնորում-
ները: Այս ճարպակարգած բորենու դեմքով մարդը
խոստանում է բաց թողնել իրեն, յեթե ասի տպագրու-
կան մեքենայի տեղը: Մի խոսք և արդատ է: Բայց
ի՞նչ կատեն ընկերներն իրեն: «Դավաճան, թուլա-
մորթ», — կրտի նա ամեն անկյունից:

Ֆելիքսը բարձրացրեց դուռը: Նրա հայացքը դեմ
առավ Կուրտի սեվեռուն աչքերին: Այդ աչքերը կար-

ձեռ նրան չնջացին. «Ամուր պահիր քեզ Ֆելիքս,
Եմիլի պես ամուր»:

Եմիլը: Չե՞ վոր նա քաջությամբ տարավ իր պա-
տիժն ու փոչինչ չատաց, չե՞ վոր նա տանն ունի թու-
րախտավար մի կին և չորս փոքրիկ մանկիկներ: Վո՞չ,
Ֆելիքսը փոչինչ չէ ասի այդ դադաններին: Նա չի դա-
վաճանի իր ընկերներին:

— Յես ձեզ փոչինչ չեմ ասի, — ասաց նա և դու-
րը կախելով, աչքերը վաակեց:

— Ա՛, դո՛ւ ել չես ասի: Շատ բարի, մենք քեզ
չեա այլ կերպ կվարվենք:

Փաշխտապետը մոտեցավ Կուրտին: Արձակեց նրա
ձեռքի շղթաները, ապա մտրակը մեկնելով ասաց.

— Աս, հարվածիր ընկերոջդ, դուցե դու նրան
խելքի կրերես:

Հարվածել սիրելի Ֆելիքսին, վորի համար նա
չատ անգամ է նետվել Փաշխտաների մեջ ու տուր ու
դմբոցով պատանուս ազատել ձեծից, այն Ֆելիքսին,
վորին ինքն է քաշել կոմյերիտության շարքերը,
վորին ինքն է դատարակել հեղափոխական փողով
ու մտցրել նրա մեջ դատարարային պայքարի շուկը:

Կուրտը շուտ տվեց դեմքը: Թող հասկանան այդ
դադանները, վոր կոմունիստները վախկոտ չեն, վոր
նրանք չեն կատարի նման ստորություն:

— Չե՞ն ուղում, յես կհարվածեմ, հաշիվը մեկ
չե՞:

Վոստրիկանապետը բարձրացրեց մտրակը, սակայն
Կուրտը շուտ դալով ասաց.

— Սպասեցեք... յես... յես կհարվածեմ:

— Ա՛, այդ արդեն այլ բան է:

Կուրտը վերցրեց մտրակը: Այդ մտրակն անչը-
չացրեց Եմիլին, այժմ էլ պիտի անչնչացնի Ֆելիքսին
չետո իրեն:

Կուրտը բարձրացրեց ձեռքը: Ֆելիքսն անթարթ
նայում էր նրա աչքերին: Հանկարծ մտրակը փոռալեն
ճեղքեց ողբ և ամբողջ թափով իջավ վոստրիկանապե-

ւի ղեմքին: Անսպասելի հարվածից հետ գնաց. սարստացալ յերկրորդ, յերրորդ հարվածը և անշունչ փովեց գետին: Յերբ ժանդարմների պետն անոգափովեց գետին և Կոշտը կատաղի ինքնամոռացման մեջ շարունակում էր հարվածել, այլ օսամանակ ժանդարմներն ուշքի յեկան: Սարսափելի մանչոցներ արձակելով, նրանք հասնեցին ատրճանակները յեվ նրանց կոթերով ջարդ ու փշուր արին Կուրտի գլուխը:

Ընկալ Կուրտը ջարդված դանգով:

— Կո՛ւրտ, — գոռաց Ֆելիքսը և ուշքը կորցրեց:

* * *

Այդպես տանջեցին յերեք ընկերներին առաջին գիշերը: Փաշխտ ժանդարմները չկարողացան իմանալ սպագորիչ մեքենայի տեղը: Մակայն յերկրորդ գիշերն ավելի դաժան էր, քան առաջին գիշերը:

Փաշխտական ժանդարմների այ վարչության պետը, վորի ղեմքն ամբողջովին փաթաթված էր սպիտակ փաթաթանով, նման էր մարմնացած հրեշի: Նա նստած էր փափուկ աթոռի մեջ. նրա դեմը կանգնած էին տանջված ղեմքերով, պատուոտած շորերով Եմիլըն ու Ֆելիքսը: Չկար միայն Կուրտը: Ո՞վ գիտե, թե վորտեղ էր չարտեղ նրա մարմինը Շպրե գետի հոսանքը:

Կլոր սենյակի բարձր առաստաղի միջեց կախված էլեքարեղամպի լույսը կուրացնում էր մութ նկուղեց հարցաքննության հանած կայանավորներին. Փաշխտապետը գիմում էր վերջին ամենաբարբարոս միջոցին:

— Վերջապես, կատե՞ք սպագորիչ մեքենայի տեղը:

Նա չատացալ իր գոռոցի պատասխանը: Կալանավորները նույնիսկ նրա վրա չնայեցին:

— Դուք լո՞ւմ եք, այժմ ինքներդ կբռնաք: Բեբել այն կանանց:

Եմիլն ու Ֆելիքսը ցնցվեցին:

Ներս բերին մի պառալ ու յերկու յերիտասարդ կանանց:

Եմիլն ու Ֆելիքսն ավելի սեղմվեցին սկառին, սպա... .

— Մամա՛, Եմմա՛:

— Լյուսի՛. — ճշարով նրանք առաջ նետվեցին:

Գլղղղղված մազերով կանայք, տեսնելով իրենց սիրելիներին այլ վողողմելի դրուժյան մեջ, նույնպես վայնասուն բարձրացրին: Նրանք դեպ միմյանց նետվեցին: Սակայն ժանդարմների ամուր ձեռքերը թույլ չսովին նրանց իրար գրկելու:

Վոստիկանապետը բարձրացալ տեղից: Մի բոպի կլոր սենյակում տիրեց խորհրդավոր լուռություն:

— Այս պառալը քո մա՞յրն է, պատանի, — դիմեց վոստիկանապետը կալանավորներին — այս 18 տարեկան աղջիկն էլ քո՞ւյրդ է, իսկ այս դեղեցիկ կինը ձեր կե՞նն է, հարգելի Եմիլ: Նրանք բոլորը կենթարկվեն սարսափելի տանջանքների և բռնաբարության, յեթե դուք չասեք սպագորիչ մեքենայի տեղը:

Նա նստեց, սենյակում դարձյալ տիրեց խորը ձնշիչ լուռությունը:

Ամեն ինչ, ամեն ինչ կարելի յեր սպասել Փաշխտաներից: Սակայն այդպիսի մի բարբարոսության դեռ չէր գիմել վոչ մի վայրենի, մարդկության պատմության մեջ: Սարսափելի կոշմարային ծանր բոպներ: Ինչպիսի քարե սիրտ է հարկավոր ունենալ, վորպեսզի տեսնել սիրելի կնոջը, հարագատ ջրոջն ու թանկազին ծեր մորը տանջվելիս և չասել հարկավոր խոսքը նրանց փրկելու համար:

— Ֆելի՛քս, վոչինչ չասես, վոչինչ չասես այդ հրեշներին: Թող անեն ինչ կթելադրե նրանց հրեշաշին ուղեղը: Այսոր ուժը նրանց ձեռքին է, իսկ վաղը, յին յերբ Գերմանիայի պրոլետարիատը վոտքի կելնի, այն յերբ ժամանակ հալոտացած յեղիք, վոր սրանք անպատիժ

չեն մնա. — դողողացող ձայնով շնչում էր ավազ
ընկերը հեղեղեղ թուլացող կոմյերտին:

— Սպասում եմ ձեր պատասխանին, — ասաց վա-
սիկանապետը:

— Արեք ինչ կամենում եք. դուք վոչինչ չեք իմա-
նա, չնե՛ր, — գոռաց Եմիլը և դեմքը շրջելով դեպի
պատն առուր սեղմեց պատանու դլուխն իր թեյերի
մեջ, փակեց նրա ախանջներն ու աչքերը, փորպեղի
նա վոչինչ չլսի ու չտեսնի:

— Հե՛յ, Պիեյ, Ժան, կատարեցեք ձեր գործը.
այս պատավը բանի պետք չէ, դուրս տարեք սրան,
իսկ մնացածներին հարևան սենյակը տարեք...

Յերկու ժանդարմներ դիվական ժպիտներով,
զաղրելի, մոլի, կրքոտ հայացքներով վրա պրծան,
դեպ իրենց քաշեցին յերիտասարդ կանանց, պատուե-
ցին նրանց շորերը և դետին տապալեցին: Ծեր մայրը
ճշալով հետ դառավ ու նետվեց փրկելու իր անմեղ
աղջկան հրեշների ձեռքից, սակայն ստանալով ուժեղ
մի աքացի ուշաթափ փոխեց դետին: Յեվ նա չլսեց,
թե ինչպես վերջին անգամ թույլ ճչաց իր անմեղ
աղջիկը...

Լյուսին, Եմիլի վիենը, յերկար դիմադրում էր:
Նա մի քանի անգամ գետին տապալեց իր վրա հար-
ձակող ժանդարմին, վորը մեծ քրքիջ աղաջացրեց
մնացածների մեջ:

— Ե՛ի, Ժան, մի կնոջ ել չկարողացար թեյ յե-
թարկել:

Յուրի մարմին ունեցող Ժանը, բարձրացավ տե-
ղից, ապա ամբողջ թափով հարձակվեց կնոջ վրա,
սղմեց նրա մեջքը, թուլացրեց մարմինը մինչև Լյու-
սին կորցրեց իր վերջին ուժը: Նա կամաց-կամաց
ընկավ գետին:

Հետո, մի քանի րոպե անընդհատ հարևան սեն-
յակից լսվում էին հեվոցներ և ծանր տնքոցներ...

Եմիլն առուր փակել էր աչքերը, իսկ Ֆելիքսը
կորցրել գիտակցութունը:

Յերբ ուշաթափ կանանց դուրս տարան, վաստի-
կանապետը կարգադրեց, փորպեղի յերկու կալանա-
փորներին կանգնեցնեն դեմքերով դեպի պատը:

Ֆելիքսն ու չքի գալով հաղիվ էր իրեն պահում
փողբերի վրա: Նա հենվել էր Եմիլի ուսին և յեթե
չլինեք Եմիլը՝ նա պետք է վայր ընկներ:

— Տղերք, — ասաց վոստիկանապետը — հանեցեք
ատրճանակներդ:

Տասը ժանդարմներ հանեցին ատրճանակները:

— Կրակեցեք ախպես, փորպեղի գնդակները յեր-
կու միլիոնար բարձր թուչեն ու ծակեն պատը: Ով
այդ խնդիրը կատարի դերազանցորեն, նա պարզել
կստանա: Իսկ դուք, — դարձավ նա կալանավորնե-
րին. — կանգնեցեք ուղիղ և անշարժ, յեթե գնդակները
ձեր դուրսները չծակեն, ապա ազատութուն կստա-
նաք:

Նրանց համար քիչեմնույն էր մահ, կամ ազատու-
թյուն: Նրանց ջղերը տանջանքներից ու սարսափե-
լի պատկերներից դառել էին անտարբեր, թվում էր,
թե նրանք ել վոչինչ չէին զգում, վոչինչ չէին տես-
նում:

Գնդակները մըզալով թուչում էլին նրանց գլխա-
վերևում յեվ ծակում պատը:

Ինչպես յերեվում էր, առաջին անգամը չէր, վոր
Փաշիտաները կատարում էլին այդպիսի վարժու-
թյուն:

Յերբ Փաշիտապետին ճանճրացրեց այդ խաղը,
նա հրամայեց կալանավորներին ձեռքերն ազատել
չլթաներից: Նրա հրամանն իսկույն կատարեցին: Բա-
ցին սենյակի միակ պատուհանը: Չոյ հոյը ներս մը-
տավ և կալանավորներին հանեց անտարբերությու-
նից: Նրանք նույնիսկ լսեցին Շպրե գետի ծանր
վշտոց: Ինչո՞ւ արձակեցին չլթաները:

— Ներքեմում հոսում է գետը, նա չափազանց
խորն է. րաց պատուհանից ցած թուք և յողալով ար-
հասեք:

Հեղինակն եր հնչում դահճապետի ճայնի մէջ,
Քե լըջաւթյունը: Նրանք վորոշել չկարողացան: Նը-
բանց զատուցութունը չէր աշխատում: Նրանք միայն
մի բան հատկացան «կարող եք լողալով ափ հասնել»: Իրա համար բացին պատուհանը, դրա համար ար-
ձակեցին շիթաները: Մտում է միայն ցած ցատկել,
լողալ և ափ դուրս գալ:

Նրանք նայեցին միմյանց: Յերկուսն էլ հրաշայի
լողալ գիտէին: Նրանք իրար ձեռքերից բռնած բար-
ձրացան պատուհանը և այն է պատրաստվում էլին
ցած նետվել, յերբ... լավեց գնդակների համազարկ
և յերկու մարմին անշունչ ներքեվ ընկան:

Վըջաց Շպրե գետը և իր ստոր գիբին ընդունեց
յերկու մեռած մարմին:

* * *

Զիմմելը լոեց:

Նա կախեց գլուխը:

Վերեջում դեռ ստոած կանգնել եր լուսինը: Զե-
յին շարժվում վոչ ծառերը, վոչ էլ ծաղիկները:

Լուռ էլին նայել կարմիր բանակայինները:

Հետո Զիմմելը հանգիստ ձայնով շարունակեց.

— Յերբ հեռանում էլի Գերմանիայից, մեզ ճամ-
պա գցող խորին տարիքին հասած մի բանվոր ստաց.

— Զիմմել, յերբ կգնաս Խորհուրդների յերկիրը,
կասես նրանց, մեր յեղբայրներին, վոր թող պառ-
րաստվեն գալիք պատերազմին: Մենք կվերցնենք
հրացաններն ու կովի կզնանք: Իսկ յերբ կհասնենք
խորհրդային սահմանին, յերբ կաեսնենք կարմիր գին-
վորների կամուսնարկաներն ու նրանց վրա ամբարձրած
հնդաթեղ աստղը՝ այն ժամանակ մեր հրացանների
այինները կուղղենք դեպի առելի Փաշխտները:

Զիմմելը դարձյալ լոեց:

Կարմիր բանակայինները վեր կացան տեղերից,
մոտեցան նրան և ամեն մեկն ամուր, շատ ամուր
սեղմեց Զիմմելի ձեռքը: Նրանք լցված էլին վրեժ-
խնդրության անսահման ցատումով:

Թեթեւի քամին շարժեց ծառերը, ծաղիկները,
շարժեց յերկնքում բարակ ու սպիտակ ամպերը, յե՛վ
լուսինը կարծես նույնպես սեղմելով Զիմմելի ձեռքը
սկսեց շարունակել իր ճանապարհը, լողալ յերկրակա-
մարով: Նա յե՛վ ամբողջ աշխարհին կպատմի Փա-
շխտական Գերմանիայում կատարվող այդ սոսկալի
վրճարկործությունների մասին...



ԳԱՐՄՈՆ

Գյուղը թառել է սարի լանջին, իսկ սարը վտր-
բան գնում՝ այնքան բարձրանում է: Յեթե փլվի սա-
րի գագաթը՝ անշուշտ փոքրիկ գյուղը հիմնովին կը-
ծածկվի հողի տակ:

Գյուղից ձգվում էր մի լայն ճանապարհ, վտրն
ահագին տարածութեամբ դեպի ներքեվ է գնում, ա-
պա հեռզհեռ բարձրանալով վեր, հարթվում է: Ահա
այդ հարթութեան վրա յեն գտնվում գյուղի կոլտնո-
տեսութեան արտերը: Այդտեղ են կոլտնտեսականները
ցանում ցանքը, այդտեղ հնձում, այդտեղ էլ կալ-
սում:

* * *

Ամեն անգամ, յերբ գիշերն իր սե թեվերով գլր-
կում է աշխարհը յեվ գյուղի խրճիթներում սկսում են
վառվել լույսերը, ճանապարհի յեզրին գտնվող ահում-
բը լցվում է կոլտնտեսականներով: Ամենից առաջ
գալիս է կոլտնտեսութեան նախագահ՝ Վազգենը՝ յեվ
կոլտնտեսականները համախմբվելով նրա շուրջը՝
պատմում են որվա կատարած աշխատանքների մա-
սին, հարցեր են տալիս, յերբեմն էլ վիճում են այս
կամ այն խնդրի մասին: Յեվ յերբ վերջանում են
կոլտնտեսութեան արտադրութեան վերաբերվող հար-
ցերը, նրանք խոսում են քաղաքական և միջազգային
գրությունից:

Այդպիսի յերեկոներից է վոչ մեկը բաց չի թող-
նում Հանեսը: Նա շարունակ լինում է վիճողների մեջ,
մեծ ուշադրութեամբ լսում նրանց, ինքը վոչինչ չի

ասում, միայն յերբեմն զարմանքից բացահանչու-
թյուններ է արձակում:

Վաղո՛ւց, դեռ վաղ մանկությունից քաշում է իր
ջլուտ ուսին դրած չքափորութեան ծանր լուծն ու այդ
յերկար տարիների ընթացքում չգտնվեց մեկը, վոր իր
սլնող ձեռքը մեկներ Հանեսին, թեթեվացներ նրա ու-
սին դրած ծանրությունը: Չէ, չգտնվեց: Վորքան ար-
ցունքներ է թափել ծածուկ, կնոջից, յերեխաներից և
մարդկանցից, անիծել իր բախտը, աղաչել աստծուն,
յերբեմն էլ թունդ հայհոյել նրան և այդ բոլորն ան-
ցել են զուր, չեն թեթեվացրել նրա ծանր գրությու-
նը: Տարիներ շարունակ նա յերադել է գալիք լավ որ-
վա մասին, յերբ ինքն այլևս սողած չի մնա, յերե-
խաները չեն հագնի կարկասաններով ճղճղված շո-
րեր ու կինը ձմեռները վտտաբոբիկ չի վազի գետից
ջուր բերելու: Այժմ յեկել է այդ յերադած որը: Նրա
պես հարյուրավոր գյուղացիներ էլ հացի կարիքը չեն
գլում, նրանց ընտանիքները կարկաստաններով շորեր
չեն հագնում ու վտտաբոբիկ չեն մնում:

Ո՞վ լավացրեց նրանց գրությունը:

Կոլտնտեսութեան:

Բայց Հանեսը կոլտնտեսութեան անդամ չէ: Կոլ-
տնտեսականները նրան շատ են համոզել, վոր թող-
նի իր խեղճ մենակյաց ապրուստն ու մտնի կոլտնտե-
սութեան մեջ: Բայց նա շարունակ լռել է, կամ թո-
ղել հեռացել:

— Հանես, դու խի՞ չես կոլխող մտնում, վախե-
նում ես կովերը խլե՞նք, — հարցնում է Վազգենը յեվ
աչքով անում Ժպտաջուկ կոլտնտեսականներին:

Ինչպես միշտ, այս անգամ էլ Հանեսը կարմրում
է, ձեռքից վայր դնում հաստ ծխախոտը և չնթված
այս ու այն կողմը նայում: Նա շատ լավ է հասկա-
նում, վոր կոլտնտեսութեան նախագահը ծիծաղում է
իր վրա, վոր ինքը յերկու բոստ հավերից բացի վո-
չինչ չունի տանը:

— Թե՞ վախենում ես հարստանալ, հը՛, Հանես, սաա ի՞նչու չես մտնում մեր շարքերը, — ավելացնում է մի ուրիշ կողմնատեսական:

— Տեսնեմ, հալա դուք վրոնց եք յուր գնում, իսկ հետո... հետո յես ել կմտնեմ. — կըմկմաց Հանեսը:

— Ես ա յերկու տարի ա, ինչ մենք մտել ենք կողմնատեսության մեջ ու ալք ժամանակամեծոցում վոչ մի կոլտոյնիկ այս կամ այն պահատեսությունը չի գգացել ու քեզ պես չի վազել կուլակ Ավետենց Ավետից ոգնություն խնդրել: Յերկու տարիա ընթացքում դու չկարողացա՞ր տեսնել, թե մենք վրոնց ենք յուր գնում:

Հանեսը լուռ է: Մարդկանց միջից նա նայում է դուրս:

— Բանի ուչ չէ, մտիր կոլխոզ Հանես, — շարունակում է Վաղդենը. — կոլխոզը քեզ մարդ կբարձնի, կոլխոզը չի թողնի, վոր քո յերեխան մերկ ու սոված մնա: Տալարած Դարմոյին խոմ լա՞վ էս ճանաչում, միասին եք մեծացել, իրար հարեվաններ եք: Ի՞նչ հալի մեջ եր նա մինչ կոլխոզ մտնելը, և ի՞նչ հալի մեջ է նա հիմա: Նրա կինը տուֆլիներ հագած, քեֆը քյոք որոր-չորոր ա անում, իսկ ինքը սեփական ձիռ վրա՛ յե ման գալիս: Նա ել քեզ պես չեք ուղում մտնել կոլխոզ: Իսկ հիմա անհնար է նրան կոլխոզից դուրս հանել: Յեռանդուն ու աղնիս աշխատում է, կարծես ինքն է կոլխոզի տերը:

Վաղդենը կամաց-կամաց դուրս է գնում ու կանչնում դռան մոտ:

— Եհե՛, տղերք, Դարմոն կրակ է արել, — բացականչեց 60 ամյա ծերուկ Սահակը նայելով հեռվում յերեվացող աղոտ խարույկին:

— Չե ջանըմ, Դարմոն կրակ անողը չի, նա ենքան գգույշ է, վոր կվախենա կրակ անի, չլինի՞ թե հանկարծ արտերը վառվեն: Են որը պատկերոսը իսկ ձեռքիցս ու հանգցրեց: Ասում ա, մի ծխի հասած

արտի մեջ, արալ կվառվի: — Առարկեց Սահակին մի ուրիշ ծերուկ:



Յերբ վրում է ամառային թեթեև մեղմ քամին՝ ցորենի բարձր հասած հասկերը, դեղեցիկ կերպով են շարժում իրենց սիրունիկ վրակեզունյն գլխիկները: Չկա մի մարդ, վոր նայի իշխաչացող հասկերին ու նրա սիրտը հուզմունքից ավելի արագ չբարախի:

Շատ անգամ է հուզվել Դարմոն, շատ անգամ է համբուրել ցորենի հասկերը, յերբ փչեց է դեփյունն ու սրորել նրանց գլխիկները: Սիրում է Դարմոն բարձր հասուն հասկերը: Գիչեր ու ցերեկ հրացանն ուսով: զցած, սև ձին տակին՝ պահապան հրեշտակի պես անդադար պտտվում է ահագին տարածությամբ ձգված հասուն արտերի շուրջը: Պտտվում է ինչպես արծիվի իր ձագերի շուրջն ու թույլ չի տալիս, վոր հավքն իր թևով անցնի արտերի մոտով: Նույնիսկ ցերեկները Դարմոն տուն չի կամենում գնալ: Կինն արդեն սկսել է տրանջալ, թե չի կարող ինքն ամեն ոք չորս - հինգ վերստ ճանապարհ կտրի, նրա համար ուտելիք բերի:

— Մի քիչ էլ դիմացիր կնիկ ջան, շուտով արտերը կհնձենք: Արտերն անտեր չեմ կարող թողնել, վրանան էլ ամենքիս ա:

— Այ մարդ, դու հո պարտական չե՞ս ցերեկն էլ նայելու:

- Բա ցերեկն ո՞վ հսկի:
- Բա գյուղում էլ ուրիշ մարդ չկա՞:
- Ե՛, ասում ես ելի...

Են որվանից, յերբ կողմնատեսության արտերի պահակի դերը ստանձնեց Դարմոն, կողմնատեսականներից վոչ վոք չի տեսել նրան քնած, կամ արտերից հեռացած: Դրա փոխարեն ամեն մի կողմնատեսական ուրախությամբ կպատմի այն բոլոր մարդկանց մասին, վորոնց բռնել է Դարմոն և ստաջը զցած բերել կոլխոզի

գրասենյակը: Մոտակա գյուղերի բնակիչներն ակնա-
ձանքով էլին անցնում կոլտնտեսութեան արտերի մո-
տով: Չիխնի՞ Դարմոն ընդունի նրանց «չար մարդկանց»
անդ ու քարչ տա դեպի գյուղը, իսկ «չար մարդկանց»
անդ Դարմոն ընդունում էր նրանց, վորոնք շատ էլին
մոտենում արտերին: Այդպիսինին նկատելով քշում էր
սև ձին ամբողջ թափով հարցնում.

— Ե՛լ, ի՞նչ մարդ ես, ո՞ւր ես գնում:

— Յես եմ Դարմո, Հանեսը, գյուղ եմ գնում,
վազալից եմ գալիս:

— Բա խի՞ ես արտերի մոտով գնում, ճանապարհ-
հը հեն հա՞:

— Պա քո տունը չձակվի՞, հենց ես հետս խոտում,
կարծես իրար առաջին անգամն ենք հանդիպել: Ճանա-
պարհն ետեղով ա անց կենում, ետեղով ել գնում
եմ. քո տունը շինվի, արտերը բարութի պահեստ ա՞:

— Մի նեղանա, Հանես ջան, բան ա ելի, հարց-
նում եմ... զատում ի՞նչ խաբար կա,—խորամանկու-
թեամբ խոսքը փոխեց նա, գրուցելով հետը գետնի
մինչև արտի ծայրը: Դարմոն բոլորի հետ էր այդպես
վարվում:

* * *

Մանուկ հասակից մինչև կոլտնտեսութուն մտնե-
լը, Դարմոն յեղել է գյուղի տավարածը: Ամեն առա-
վոտ գեղացիք գյուղամեջ են քշել իրենց անասուննե-
րը: Ճղճղված շորերը հագին, մոթալե մեծ փափախը
գլխին, յերկար փայտը ձեռին գյուղամիջում կանգնած՝
Դարմոն համբերատար ու գլխիկոր սպասել է ապրան-
քին: Տխուր ունքերի տակից խեղճ — խեղճ նայել է,
թե ինչպիսի հողացողութեամբ են քշել տերերն. իրենց
անասուններին ու խառնել հետոհետ մեծացող նախ-
րին: Հետո ասել են նրան.

— Լավ նայի, չկորչի, չվնասվի, թե չէ՝ կոչիլ
քերթելով անասունի գինը կհանենք:

Ամբողջ սրերով նա իր աչքի լույսի պես վայրի
գաղաններից, գողերից պահել ու պահպանել է ու-
րիչների սեփականութունը: Յե՛լ վորպես վարձատր-
լուծյուն՝ տարվա վերջերին տերերը նրան ավել են
ով կես փութ ալյուր, ով մի քանի տասնյակ ձու, ով
հավի մի ձուռ, ով վոչինչ չի ավել: Լուռ, վերցրել է
Դարմոն այդ բոլորն, առանց բողբոջի, առանց տրտու-
ջի: Եղպես են անցել կլոր տարիներ, անգութ տարի-
ներ Դարմոյի համար:

Գիշերը յուր սև թևերը փոխեց նաև կոլտնտեսու-
թեան արտերի վրա: Գիշերն ամպամած է, մութ ու
սեղ ամպերով: Չկա լուսին: Այդպիսի գիշերներին
Դարմոն ավելի աչալուրջ է լինում. իր սև ձին, ինչ-
պես սև գիշեր, անդադար քշում է արտերի շուրջը,
սրտես աչքերով խուղարկում ամենակատկածելի տե-
ղամասերը: Վոչ մի շարժում, վոչ մի իր Դարմոյին
խորել չի կարող: Գողը վորքան էլ խորամանկ ու
զգուշ լինի, դարձյալ խույս տալ Դարմոյից չի կա-
րող: Դա անհնարին բան է: Այդ գիտեն կոլտնտեսա-
կանները, այդ գիտեն մոտակա գյուղերի բնակիչները,
այդ գիտեն նաև իրանք գողերը: Դարմոն միշտ էլ յե-
ղել է աչալուրջ ու վոչ մի սարսափեցի գիշեր չի
փախեցել: Ինչո՞ւ այն գիշեր Դարմոն անհանգիստ է:
Հրացանն ուսին, ինքն էլ ամուր կզած ձիու թամ-
բին, դուրսը կախ, մտածում է. յերբեմն բազմաք-
նում է գլուխը և նայում գյուղի պլպլացող լույսե-
րին:

Չին արոտ անելով, դանդաղորեն սրտովում է ար-
տերի շուրջը:

... Այնտեղ, հետվում, օարի լանջին կզած գյուղի
աներից ամենաբարձր տեղումն է գտնվում փոքրիկ
անակը, վորի դռան սջ և ձախ կողմերին բուսել ու
մեծացել են յերկու բարդենիներ: Ինքն է տնկել այդ
բարդենիները մանուկ հասակում, յերբ տնակի տերն
ինքը չէր, այլ ծերացած հայրը: Ո՞ւր, ինչպես էր նա
խնամում այդ ջուխտ մասաղ ծառերը: Տարիների ըն-

Թացքում նրանք մեծացել են ու հսկայական բոյ բա-
շել: Յերեկները նրանց միջոցով Դարձոն ճանաչում է
իր անակը: Այժմ սև գիշեր է, տեսնել նրանց Դարձոն
չի կարող:

...Ու այն փոքրիկ տնակում իր աղոտ լույսն է
տիտել իրերի վրա փոքրիկ ճրագը: Ճրագի լույսի տակ
կինը կար է անում: Կնոջ կողքին պառկած փոքրիկ
անջիկը գլուխը հանում է վերձայն տակից, յուր սե-
վուկ ու խոչոր աչիկները հասում մոր դեմքին, ապա
հարցնում.

— Մայրիկ, ինչո՞ւ հայրիկը գիշերները տուն չի
գալիս:

— Կոլտոզի արտերն է սրահում, բարիկս:

— Ինչո՞ւ, մայրիկ...

— Վորպեսզի չար մարդիկ չայրեն:

— Իսկ ինչո՞ւ յեն այլում:

— Դե՛, քնիր, բարիկս, եղպես բաներ մի հարցնի:

Հետո այդ փոքրիկ, հարցասեր գլուխը իջնում է
բարձի վրա ու ջուն մտնում: Ծաբաթ ու կես է, ինչ
Դարձոն չի տեսել իր փոքրիկ աղջկան: Կինն անցյալ
անգամ ասաց, վոր աղջիկը հիվանդ է: Յե՛վ նա այսօր
առաջին անգամ աղջկա կարտան ալգպես ուժդին դդաց:
Փչող քամին խփում է Դարձոյի դեմքին ու հանու-
նրան մտածմունքներից: Ձին արձակուրդ է թեթև մի
իրխինջ ու ասած մտալում: Յորենի հասկերն իրար են
քալում ու հանում միապաղաղ, դուրեկան խշխշոց:
Նայելով մթուժթան մեջ խշխշացող հասկերին, Դար-
ձոն մտածնում է ամեն ինչ:

Վորքա՞ն շատ են, վորքա՞ն լավ են...

Հանկարծ, դարձուրանքը դեմքին՝ Դարձոն կանգ-
նեցնում է վաղող ձիուն:

Մարի դուշին կպած գլուխի ամենաբարձր մասում,
նա կրակե լեզվակներ տեսավ:

— Ի՞նչ խարույկ է դա:

Նա անթարթ նայում է դեպի գլուխը, դեպի յերե-
վացող կրակե լեզուները: Վո՛չ, դա խարույկ չէ, այլ

տուն է այրվում: Բայց ո՞ւմ տունն է այդ: Ահա այժ
հարցի պատասխանն էր, վոր Դարձոյին դցել էր զար-
հարանքի մեջ: Բայց ահա կրակե լեզուները մեծա-
ցան, առաա լույսը սփռվեց չորս կողմը, ու այդ լույ-
սը հանդես բերեց յերկու բարձր բարդենիների սիլու-
ետներ:

Դարձոն սարտեց: Այրվում է իր տունը: Դրանում
վոչ մի կասկած չկար: Նա կտտաղաբար ասպանդակեց
ձիուն: Ձին խելազարի պես սկսեց առաջ վազել:

Յորենի հասած հասկերն ավելի բարձր խշխա-
ցին:

— Բա մեկ ո՞ւր էս թողնում...

— Դարձո, արտերը հասել են հա՞, լավ նայիր,
կասապած թշնամին ամեն միջոցի վրեժի նրանց վոչըն-
չացնելու, — կատեր յերբեմն ընկեր Վաղդենը:

— Արխային կաց, ընկեր նախագահ, վոչ վոք չի
համարձակվի նրանց ձեռք տալ, — կպատասխանե-
ր Դարձոն:

Այժմ Դարձոն անտեր է թողնում արտերն ու դեպի
գլուխ սլանում: Բայց չէ՞ վոր գլուխում այրվում է իր
տունը: Այդ տնակում քնած են կինն ու հիվանդ յերե-
խան: Գուցե տան հետ միասին այրվում է նաև իր
ընտանիքը: Մի՞թե ինքն իրավունք չունի նրանց ող-
նության հասնելու:

Նա անընդհատ վոտքերով հարվածում է ձիու կող-
բերին: Ձին ամբողջովին կորել է փրփուրի մեջ:

Հանկարծ Դարձոն դդաց, վոր ինքը հեռացել է
արտերից, վոր շուտով ճանապարհը պետք է թեքվի
նեղքի:

— Բա արտե՞րը, — դուռաց նա ու ձին կանդնեցրեց:

Այնտեղ, գլուխում, իր տան դիմաց ասրում է
հարեան Հանեսը: Նա ողնության կհասնի իր ընտանի-
քի անդամներին: Անընչա ողնության կվաղեն նաև
Վաղդենն ու մնացած կոլտտեստիանները: Իսկ այս-
տեղ նա արտերն է թողնում անպաշտպան...

Նա չըջեց ձևու գլուխը և մեծ արողությամբ հետ
բչեց: Այդ առաջին անգամն էր, վոր նա ալքքան հե-
տացալ արտերից: Մի չար նախազգուշացում սկսեց
տանջել Դարձոյին: Նա կսահեց, վոր ալստեղ մի սա-
տանայություն կա:

Ահա արտերը:

Նա կատաղարար այս ու այն կողմն է նայում:
Մթության մեջ նրա աչքերը փայլելում են դայլի աչ-
քերի պես: Յեթե կա մի կասկածելի բան, ապա այդ
իրենից չի խուսափի:

Սրբնթաց գնալիս իրենից քիչ հեռու, նա տեսալ
մի լույս, վորն իսկույն հանգալ. յերեկ քամին հանդ-
բեց:

Հրացանն ուսից հանելոյ, Դարձոն կատաղարար
դուսայ:

— Ե՛յ, կանգնիր, թե չե՛ կխիւեմ:

Ի՞նչ, — վորպէս պատասխան պայթեց ատրճանա-
կի կրակոցը, վորն զնդակն անցալ Դարձոյի ականջ-
ներն մտալ:

— Ա՛, դու, դեռ կրակում ես, շուն, — դուսայ նա
ու առանց նշան բոնելու կրակեց: Լսից մարդկային
մի ճիչ:

— Աման, Դարձո, յես եմ, ել չկրակես:

Դարձոն հաղթի կարողացալ գոյել տարացած ճի-
ւան:

— Մոտ յեկ, շուն, ո՞վ էս դու:

— Յես եմ, Դարձո ջան, ձեռքիցս արշուն և գնում,
չկրակես:

— Մոտ յեկ ասում եմ:

Ինչ-վոր մի էքակ, դողողալոյ մոտեցալ նը-
բան:

— Ո՞վ էս:

— Հանեսը. բա չե՞ս ճանաչում:

— Հանե՞սը:

Տար քրտինքը սրտեց Դարձոյի մարմինը: Նա
եւմ վրա իր ընտանիքի աղատման հույսն էր դրել,
դանդում էր այստեղ, բաց դաշտում:

Դարձոն սկսեալ հետ նայեց:

— Ինձ դու ներիր, յես Ավետի խրատանքոյ էս
բանն արի: Դարձո, աղաչում եմ, ներիր...

Ի՞նչ դժոխային դեպքեր են կատարվում իր հետ,
Դարձոն միանգամից դժվարացալ հոսկանալ: Եվո-
թության մեջ, նա մարծում էր, թե իրեն ամեն կող-
մից շրջապատել են և ահա, ուր վոր է, պետք է կրա-
կեն: Յեղալ մի բոպե, յերբ մշուշից նրա գիտակ-
ցությունը և նա կարծես չէր հասկանում, թե ինչ է
կատարվում իր շուրջը: Այնտեղ — դժուրում այրվող
տունը, այստեղ ստրճանակի կրակոցը... Ի՞նչ է սա,
յերազ չե՞: Բայց Հանեսի ձայնը նրան սթափեցրեց:

— Դարձո, մենք միասին ենք մեծացել, միմյանց
չատ ենք ողնել, յերկար տարիների հարեաններ ենք,
այժմ ի սեր այդ բոլորին, աղաչում եմ, բաց թող ինձ:
Թող զեղը չիմանա, թե ինչ էլի ուզում անել յես,
ամոթ է, կին, յերեխա ունեմ, կկորչեմ, մեղք են:
Բայց թող, Դարձո, կուզես վրտներդ պաչեմ, միայն
բաց թող ինձ:

— Թեքլ եմ քեզ պես հարեանի վրա: Յես պետք է
բեղ տանեմ զեղը, ցույց տամ բոլորին և ասեմ, թե
տեսեր, խեղճ ու կրակ Հանեսը, վորին ուզում էլեր
ոյնել, մարդ գարձնել՝ կուլակ Ավետի տխած մի քա-
նի տանայակ մանեթի համար ուզեց վատել մեր ար-
տերը, սովի մատնել սաղ դժուրը:

— Դարձո՞...

— Ձենդ, շուն...

Դարձոյի տունը հիմնովին այրվեց:

Նրա կինը ժամանակին կարողացալ աղատել ըրեն
և յերեխային կրակի անխնա բոցերից: Նրանց իրենց
հարկի տակ վերցրեց ծերուկ կողտնոտեսական Սահակը:

Առաջնորդան զեմ, յերբ Դարձոն վերապար Հանն-
սին առջևը պցած բերեց «կոլլոզի կանցելյարը» — յե-
րկխաներից մինչև ամենամեծերն այդտեղ վազեցին:

— Դուրս քշել կուլակ Ավետին դեղից:

— Ավետի տունը տալ Դարձոյին:

— Դատի հանձնել Հանետին:

Կսվում էր ամեն կողմից այգւղիսի բացականը: —
թյուններ:

Գյուղացիք կուլակ Ավետին արտաքսեցին գյուղից:
Յէրբ նա միլիցիոնների առաջն ընկած գնում էր հրնձ-
վող արտերի մոտով, հնձվորներից մեկն սասայ:

— Գնալու անդարձ լինի:

Իսկ մյուսը գրնդուն ձայնով պատասխանեց.

— Նրա գնալն անվերադարձ է, Սահակ գայի, եզ
կողմից դու արխեյին կաց:

Իսկ յերեկոյան զեմ կոլանտեսության մանկա-
պարտեզի յերեխաները խմբով յերգում էին.

Գևաա լալով,

Չգաա դարով,

Այ Ավետ կուլակ:

ՔԱՐԱՎԱՆԸ

Գյուղում բոլորը ճանաչում էյին Թոփալ Հասան
անունով հարուստ վաճառականին: Այդ վաճառականը
տեք էր հարյուր հիսուն ուղտից բաղկացած մի յերկար
քարափանի: Նրա քարափանը շատ քաղաքների միջով
էր անցնում և ամեն մի քաղաքում ավերացնում էր
իր բնուր զանազան տեսակի կոտորեղենով, բաղձապիտի
անուշահոտ թեյի, չաքարի կապոցներով, նավթի,
մաղութի տակառներով և գյուղական միջավայրում
սպառվող անհրաժեշտ սպրանքներով: Այդ գործերում
Թոփալ Հասան վաճառականը մեծ փորձառություն էր
ձեռք բերել: Նա շատ լավ գիտեր, թե վոր գյուղում,
ով ինչպիսի սպրանք կարող է առնել: Յեւ ջաղաք-
ներում գնած մթերքներն այնպես էր դասավորում,
վոր առաջին հանդիպած գյուղում, առանց գնորդների
հարցմունքի, բացում էր հակերի բերանները ու մին-
չև բարձրահասակ ուղտերն արոճ անելով հանդիսա-
կոտային իրենց յերկար, հոգնած վոտներին, Թոփալ
Հասանն սպրանքների մեծ մասը ծախում էր և նրանց
փոխարեն գնում յուզ, պանիր, ձու, մածուն, կաշի,
բուրբ և այլ գյուղատնտեսական մթերքներ՝ քաղաք
փոխադրելու համար:

Կային գյուղեր, վորոնք ամբողջովին կախում ունե-
յին Թոփալ Հասան վաճառականից: Այդ գյուղերը նա
վոտք էր գնում մեկ դարնան սկզբներին, յերբ նոր էր
սկսվում ցանքը, բերում էր իր հեռ հարկավոր սպ-
րանքներ, սպառիկ տալիս անձար, անուցնական գյու-

ղացիներին, մեկ էլ աշնան վերջերին, յերբ վերջանում էր բերքահավաքը դաշտերում ու այգիներում: Գյուղացիք փող չունեյին, վորպեսզի իրենց պարտքերը վճարեյին: Այդ ձեռնտու յեր և Թոփալ Հասանին: Նա սոված պարտքի դիմաց նրանցից վերցնում էր գյուղատնտեսական մթերքներ: Բայց խեղճ գյուղացիք, վորքան էլ առատորեն էյին իրենց բերքերից բաժին հանում ագահ վաճառականին, դարձյալ պարտքերի տակից դուրս գալու վոչ մի յեղք չէյին գտնում: Ե՛ր, քանի տարիներ են գլորվել հա՛, ինչ Թոփալ Հասանի քարավանը յեղք ու մուտք էր դորձում այդ գյուղերը, բայց նրանցից վոչ մեկը չէր կարողացել իր պարտքը լրիվ վճարել: Դեռ ընդհատակում:

Գյուղերն էլ ավելի էյին խճճվել պարտքերի ցանցի մեջ ու նրանց սարսափն էր Թոփալ Հասանի յերեվալը: Յերբ գյուղացիներցի մեկն ու մեկը հանդուժում աշխատելիս, հանկարծ նկատում էր հեռվից մոտեցող քարավանի դանդաղ ընթացքը, լեղապատառ վազում էր գյուղը և առաջին հանդիպած մարդուն հայտնում.

— Թոփալ Հասանը գալիս է...

Այս յերեք բառը բավական էր, վորպեսզի ամբողջ գյուղը սարսափի մեջ ընկներ: Վայ այն խեղճ ու աղքատ գյուղացուն, վորը միջոց չունենալով, չէր կարողանում ժամանակին վճարել իր պարտքը: Այդպիսիների կաշին քերթելով, կովը, այծը, սուկը կծախեր, ցնցոտիները վրաներից կհաներ յեվ դեռ ելի «մի բան» կգրեր նրա հաշիին իր պարտքերի դավթարում:

Եստ աներ քանդակեցին նրա ձեռքով, շատ անմեղ յերիտասարդներ ուղարկվեցին աքսոր նրա պահանջով, շատ աղջիկներ առեվանդվեցին և շատ ու շատ վոսկիներ դիզեց նա: Բայց վորքան շատանում էր վոսկիները սոսորակների թիվը, այնքան վախն ու յրատու-թյունն որ որի վրա մեծանում էր նրա մեջ: Յերիու հավատարիմ ծառա ուներ, վորոնք նրա կոչիկների տակի փոշին անգամ կլիզեյին, յեթե այդ հրամայեր

նա: Յեվ ամեն ժամնուակ, վորտեղ էլ նա գնար, այդ յերկու ծառաները՝ Մուխտարն ու Մեհտին, անբաժան հետևում էյին իրենց տիրոջը: Նույնիսկ դիչերները, յերբ Թոփալ Հասանը քնում էր, կամ անապատում վրանի մեջ, կամ էլ իր շենքում, դարձյալ այդ յերկու ծառաները պահապան հրեշտակի պես հսկում էյին նրան: Մեհտու և Մուխտարից բացի նա պահում էր քսան, ինչպես ինքն էր կարծում, քաջ ու անվախ ուղտապաններ չվորոնք խնամում ու քշում էյին նրա քարավանը: Նրանք բոլորը զինված էյին ու շատ անգամ էյին կովի բռնվում հարձակվող ավազակների հետ: Ուղտապաններից ամենից հանդուգն ու քաջը յերիտասարդ Կիրբալայն էր, վորը շատ անգամ էր իր անվեհերության շնորհիվ վերկեր բոլորին ավազակներից մեկը, վոր վաճառականը սիրում էր այդ ուղտապահին և նստեցնում նրան յերկրորդ ուղտի վրա, առաջից գնացող իր ուղտից անմիջապես հետո:

Տարիներ առաջ Կիրբալայն հայրը, աղքատ Ռահիմը, վորոչ սոկոսով փոքրիկ դումար էր պարտք վերցրել Թոփալ Հասանից ձի գնելու համար: Մտկայն յերաշտի պատճառով բերքահավաքին նա չկարողացավ վերադարձնել իր պարտքը: Տարիներ անցան, այդ փոքրիկ դումարը սոկոսների հետ մեծացավ, դասավ մի մեծ դումար ու էլ յերեք Ռահիմը պարտքերի տակից դուրս գալու միջոցը չգտավ: Թոփալ Հասանը ծախեց նրա ունեցած-չունեցածը, նրան էլ նստեցրեց բանտում, բայց պարտքի մեկ տասներորդ մասն էլ չկարողացավ հետ ստանալ: Ել վոչինչ չուներ Ռահիմը: Մի յերեխա ուներ նա, տասներկու տարեկան, վորին վերցրեց Թոփալ Հասանն իր մոտ ծառայեցնելու: Յեվ ահա տասը տարի յե, ինչ Կիրբալայն աշխատում է վաճառականի մոտ, բայց մինչև հիմա յեվ հոր պարտքը չի թոթափել իր ուսերից: Հայրը մեռել էր վաղուց, իսկ խորհմանիկ վաճառականն

տրտվելով Կիրբալայի միամտությունից, մուրճաշնորը նրա անունով էր դարձրել:

Յերեկոյան դեմ էր:

Արևը դեռ խաղում էր բարդիների կատարների հետ, իր ճառագայթները մեղմորեն զարկելով նրանց ամենաբարձր տերեփներին: Ուզն այնքան նոսր էր ու հըստակ, վոր պարզ կերպով յերեկում էր հեռվում լեռան տակով դանդաղ ընթացող քարավանը: Մարդ, յեթե մի վայրկյան չունչն իրեն սրահի և լսողությունը սրի, ապա նա կլսի նաև ուղտերի վզերից կախված զանգակների մեղմ զողանջը: Բայց ահա ամառային թեթև վեփյուռը քշեց բերեց մեղամաղձոտ յերգի կտորներ ու նրանց զարկելով սեպածեփ ժայռերին, արձագանքեց հեռու, շատ հեռու: Իսկ ուղտերը յերգի ու զանգակների զողանջների ներդաշնակության տակ, նեղ արահետով դանդաղորեն բարձրանում են լեռը:

— Կիրբալայ, ինչո՞ւ այդքան տխուր ե յերգը, — հարցրեց Թովալ Հասանը յերգող գեղեցկագեմ յերիտասարդին:

— Աղքատությունն է խոսում յերգիս մեջ, ապա — պատասխանեց ուղտուպահ Կիրբալայը:

— Ամեն անգամ յերբ մոտենում ենք դյուղին, դու շարունակ այդ նույն յերգն ես յերգում, ինչո՞ւ:

Յերիտասարդ Կիրբալայը լուռ է:

— Գուցե մի վեշտ ունես, ասա Կիրբալայ, յես հարուստ եմ և կարող եմ ողնել քեզ:

— Շնորհակալ եմ ապա:

«Միթե աղքատի վեշտը կարող է հատկանալ աղքատության դատնությունները չճաշակող ու վոսկիներ դիզող այդ մարդը», — անցավ Կիրբալայի մտքով:

Իսկ Կիրբալայն աղքատ է և ունի մեծ վեշտ: Յերկու ուժեղ և սուղջ բազուկներից բացի, ել վոջ մի հարբատություն չունի: Իսկ այնտեղ, հեռվում հաղիվ հաղ նշմարվող դյուղի խրճիթներից մեկում, ապրում է

վայելչահասակ գեղեցիկ Գյուլարան, վորի ձեռքը մերժել են նրան: Միրում է Գյուլարան Կիրբալային, բայց Կիրբալայն աղքատ է, չի կարող դնել ազնկան նրա ծնողներին:

Վեշտը մեծ է Կիրբալայի, վեշտը չափ չունի:

— Ել չնրգես այդ տխուր յերգը, Կիրբալայ, լուսում ես:

Կիրբալայը բարձրացրեց դյուղը, շեշտակի նայեց Թովալ Հասանի գեմքին, ապա հաղիվ թափցնելով կատաղությունը, ասաց դապված ձայնով:

— Իմ սիրտն այդ յերգն է թեկադրում, ապա:

Թովալ Հասանը, վոր նատած էր առաջին ուղտին գեմքով գեղի Կիրբալայը յեմ ամբողջ խոսակցության ժամանակ աչքը չէր հեռացնում նրա հայացքից, նկատեց նրա թափցրած կատաղությունը:

— Գու թե ծառան ես, Կիրբալայ յեմ պետք է կատարես, ինչ յես եմ ցանկանում և վոջ թե այն, ինչ վոր քո սիրտն է ուղում: Հակառակ դեպքում կարող ես վճարել պարտքը և հեռանալ ինձնից:

Պա՛րտքը: Ահա թե ինչն էր կատարած Կիրբալային: ասա թե ինչն էր գարձրել նրան ծառա ու զրկել սեփական կամքից:

Կիրբալայն այս անգամ վոջինչ չասաց: Նա իր մտայն գեմքը մի կողմ ուղղեց յեմ ընկալ մտածմունքների գիլիկը:

— Յես այսոք պատրաստվում եմ նշանվելու յեմ դու հանկարծ յերգում ես մի այդպիսի տխուր յերգ... Ուրախ յերգ յերգիր Կիրբալայ, ուրախ յերգ: Քո տերը բախտավորվում է, նա սուրախ է, ուրախ պետք է լինես նայելով դու, յսո՞ւմ ես:

Սթախից Կիրբալայը մտածմունքներից: Նա դիտեր արդեն, վոր Թովալ Հասանը թանկագին նվերներ է ասում իր հետ, գիտեր նաև, թե ում համար են դնվել այդ նվերները, դիտեր, բայց և այնպես հարցրեց:

— Իսկ ո՞ւմ հետ ես պատրաստվում ամուսնանալու, չե՞ս վոր դու արդեն կին և յերեխաներ ունես, այդ :

— Կինն ու յերեխաները չեն խանդարի ինձ չքնայ Գյուլարայի հետ ամուսնանալու : Այլ—Սանը խոստացել է ինձ տալ աղջկան հինգ հարյուր ոտորով : Միայն աղջիկը մի քիչ համառուս է, բայց հայրը խոստացել է համողել նրան մինչև մեր վերադարձը : Այժմ ուղիղ նրա տունը պետք է գնամ :

Հեռվում պարզորեն յերեվացին դուղի իրճիթները : Թուխլ—Հասանը մեջքը թեքեց դեպի Կիրբալայը, ուղղեց վրայի շորերը և իրեն յուրճ տեսք տարյով, սկսեց ինչ վոր արթթներ շնչալ :

Իսկ ուղտերը, վոր ընթանում են հարթ ու փոշոտ ճանապարհով, բնադդարտը զգալով հանդատության վայրի մոտիկությունը, կամաց—կամաց արագացնում են իրենց սովորական դանդաղ ընթացքը :

Արևը մայր մտավ և ամառային դով գիշերը պատեց գյուղը : Յերկնքում փայլեցին աստղերը յեմ աստղերի արանքներով սկսեց յողալ լուսինը : Այս ու այն տեղից յերգեցին ծղրիղները և նրանց ձայներն ախա՛սքուն և հուցնածություն են ներշնչում յոտղին :

Նստոտած ուղտերը, աչքերը փակելով, դուրսի կերպով արոճ են անում : Իսկ նրանց կողքերին, թե՛ ժացրած խարույկի շուրջը բոլորը ծալապատիկ նստել են ուղտապահները և հերթով հեքյաթներ են հյուսում մեկը—մյուսից հետաքրքիր, մեկը—մյուսից հրաշալի :

— ...Ու ծեր թագավորն ասաց այդ աղբատ աղջկան, — «Կտամ քեզ իմ ամբողջ գանձերը, կկատարեմքս բոլոր պահանջները, միայն թե յեղիր իմ կինը : Ու պատասխանեց աղջիկը թագավորին . . .

Ու գառասխանից մեկը վերկացավ տեղից և սկսեց հեռանալ :

- Կիրբալայ, եզ սուր, — կանչեց հեքյաթ պատմողը
- Ես կգամ :
- Պատմիր, պտտմիր ջանքով :

— Ու պատասխանեց աղջիկը թագավորին . . .

Թե ի՞նչ պատասխանեց աղջիկը թագավորին, այդ մասին չկարողացավ լսել Կիրբալայը : Նա իր ճանապարհը ծռելով սկսեց քայլել մի մութ ու բավակալին նեղ փողոցով, վորը նրան դուրս բերեց մի այլ լայն փողոց : Այդ փողոցի յերկու կողմերով ձգվում են զանկապատներով իրարից բաժանված ալբիները : Այգիների ծառերի արանքներում թաղնվել են փոքրիկ սնակները, վորանց նեղ պատուհաններից նայլթի ճրագները աղոտ լույսերն են թափանցել դուրս :

Քայլում է ուղտապահ Կիրբալայը լուռ, դրխահակ, առանց այս ու այն կողմը նայելու, առանց ճանապարհը տեսնելու : Այնքան էր խորացել իր մտաածմունքների մեջ, վոր բնավ չզգաց, թե ինչպես մի քանի մութ անկյուններից շները հաջողներով հարձակվեցին վրան, սպա դիմադրության չհանդուրժելով, նորից ձայները կարելով հետ քաշվեցին :

«Ի՞նչ պատասխանեց աղջիկը ծեր թագավորին : Միթե՞ նա ի սեր թանկագին գանձերի կհամաձայնի իր ջահել կյանքը կապել քալթառ ու մաշված թագավորի հետ, վորի մի վտոր դերեգման է գնում» — մտածում էր Կիրբալայը առաջ քայլելով :

«Իսկ իր Գյուլարան, միթե՞ նա կցանկանա Թուփայ Հասանի կինը դառնալ» — այս հարցը տարով ինքն իրեն Կիրբալայը բարձրացրեց գլուխը և նայեց չորս կողմը :

— Ե՛հ, սատանա, յես անցա նրանց բակը : Նա սկսեց հետ դառնալ : Ապա հասնելով մի ծառախիտ ու մութ այգու, կանոջ առաջ : Մեկ անգամ ել չորս կողմը զխտելուց հետո, նա ցածր զանկապատից ցատկեց այգին ու ծառերի արանքներով սկսեց առաջ գնալ :

Տեսկը, վորի յերկու պատուհաններից այդ դիշեր յույն ատատորեն թափանցել էր մոտ դանվոց ծառերի տերեխների վրա, նրան ասելի թվաց : Տեսկի բաց պատուհաններից նա լսեց նվաղի ձայներ :

Նա կանգ առավ ու սկսեց մտածել :

Արժե՞ առաջ գնալ :

Յեթե տնակում նվազում են յերաժխաները, ուրեմն այնտեղ և թոփալ — Հասանը, այնտեղ և նայել այն գեղեցիկ արարածը, վորը համար վտար և կոխել ու յերաժխաներ բերել այդ սուներ հարուստ վաճառահանը: Անշուշտ այդ քաղթառը բերել և իր հետ նայել քաղաքում դնամ թանկագին նվերներ: Իսկ ինքըն ի՞նչ և տանում, ի՞նչ: Նրա դատարկ ձեռներում միայն դաշույնի կոթն և պատվում: Ներս և մաել ինչպես գիշերային մի գուլ: Մի՞թե իրեն կսպասի Գյուլարան բարդենու ծառի մոտ:

Արժե՞ արդյոք առաջ գնալ:

Բայց նա այնուամենայնիվ առաջ գնաց:

Լուսինը լողում էր յերկնքում դանդաղ, շատ դանդաղ և նրա արծաթագույն լույսը, վորը գրկել էր միայն բարձր կատարները, թափանցել այդ ծառերի տակ չէր կարող: Յեվ Կիրբալայն առաջին պահ չկարողացավ նշմարել այն կնոջը, վորը սպասել էր ժամեր, գուցե րոպեներն են թվացել ժամեր և վերը կորցնելով վերջին հույսը՝ գլուխն առել էր ձեռների մեջ և մեղմորեն արտասովում էր: Գյուլարան նույնպես չզգաց, թե վոնց մեկը մոտեցավ նրան ու հարկիվ դասկնով սրտի բաբախումը — յերկա՛ր դժայրվեց նրա խիտ ու յերկար սեվ մազերով սրտած սքանչելի գլխով: Նա ուշքի յեկավ այն ժամանակ, յերբ Կիրբալայը մեղմորեն կանչեց:

— Գյուլարա՛...

Գյուլարան վեր թռավ նստած տեղից:

— Կիրբալայ, իմ Կիրբալայ:

Յեվ ջինջ յերկնքում լողացող լուսինը չկարողացավ տեսնել, թե ինչպես նրանց շրթունքներն իրար հպվեցին ու յերկար չեյին բաժանվում միմեյանցից:

— Ի՞նչու ուշացար Կիրբալայ, յես յերկար սպասեցի:

— Չեյի կարծում, թե գու ալստեղ կլինես հող-

յախս, կարծում եյի թոփալ Հասանն արդեն գերել էր: քեղ իր թանկագին նվերներով:

— Տար ինձ ալստեղից, Կիրբալայ, յես չեմ ուզում տեսնել թոփալ Հասանի լպիրչ դեմքը, վոչ էլ նրա թանկագին նվերները: Յես ուզում եմ միշտ քեղ հետ լինել, յես քեղ եմ սիրում, յես քոնն եմ, տար ինձ ալստեղից Կիրբալայ:

— Կտանեմ Գյուլարա, կտանեմ, միայն զիչ էլ սպասիր:

— Չեմ կարող, Կիրբալայ, հասկանո՞ւմ ես, չեմ կարող սպրել յես ալստեղ այնտեղ, վորտեղ հարազատ հայրն աղջկան ծախում և վոսկով: Ատում եմ այս յերկիրը, ատում եմ այս կարգերն ու աղաթները, վորտեղ կինն ստրուկ և համարվում, իսկ աղամարդը նրա տերը: Հայրս, Կիրբալայ, վոր մինչև հիմա ինձ թվացել էր ամենասիրելի, ամենաթանկագին և յակն աշխարհի յերեսին, այժմ դատել և ինձ համար ամենազգվելի արարածը, վորը յերեսին մեծ հաճույքով կթքեմ ու յերբեք չեմ սխտոսա արածիս համար: Դու զո՞ւմ ես, դու հասկանո՞ւմ ես, թե ինչ և կատարվում իմ կրճքում Կիրբալայ: Տարիներ շարունակ ամեն ստավոտ, իրիկուն կատարել եմ հորս ամենաչընչին հրամանները սրբությամբ, լվացել եմ նրա վոտները, ջուր եմ լցրել ձեռներին, կարկատել եմ նրա շորերը, փափկացրել վերմակները յեվ այդ բոլորն այն բանի համար, վոր նա իմ հայրն և: Կարծում ես լցված դեպի ինձ: Յեվ հանկարծ նա ատում և, թե «դու, Գյուլարա, շուտով թոփալ Հասանի կինը պիտի դառնաս: Նա հարուստ և յեվ վոսկիներով կուղարդարե քո այդ գեղեցիկ ճակատը»: Գլուխս պտրովեց, քիչ մնաց, վոր ուշաթափվեյի: Հարցնում եմ, իսկ դու, հայր, հարցրե՞լ ես ինձանից, համաճա՞հեմ եմ արդյոք կին դառնալ այն մարդուն, վորը ձեռ հասակակցն է: Նա դարմացավ, Կիրբալայ, հասկանո՞ւմ ես, գործացավ: Իսկ հետո կատարած գոտաց, «Դու

ապրանք ես իմ տանը, աղջիկ, և ով թանկ կվճարե, նրան ել կծախեմ քեզ, առանց քո ցանկությանը հարցնելու: Իսկ թո՛ւփալ Հասանը հարուստ է, նա մեծ գումար է նշանակել քեզ համար... Շուտով նա կգն յեղ կղնաս նրա հարուստ սենյակինքի թաղու-հին կղանոսա»:

Այնուհետև վոչ մի աղաչանք, վոչ մի պարասանք չաղբեցին հորս վրա: Իմ թախած առատ արցունքները, վո՛ր դադանի սիրան անդամ կշարժեյին, նրա վրա նույնպես չաղբեցին: Խեղճ մայրս ձայն ու ծրու-տուն չեք կարողանում հանել: Նա յեղ չի ցանկանում, վոր իր աղջիկը կին դառնա մի ծեր մարդու, վորը կին ու յերեխաներ ունի, բայց արտահայտել իր բու-ղոքը, բացարձակապես չի համարձակվում: Այլապես նրա զլխին ու մեջքին բուռնցքների և աքացիների տարափ կանգա:

Գյուլլարան սրբեց աչքերից հոսող արցունքները, իսկ հետո լացաճայն առաց.

— Ել չեմ կարող աղբել յես այտեղ, Կիրբա-լայ, տա՛ր ինձ այտեղից, հեռացրու այս յերկրից:

— Կտանեմ, Գյուլլարա, կտանեմ: Մյուս վերտ-գարձիս յես կծախեմ իմ ունեցած — չունեցածը, վոչ ձեռք կրերեմ և քեզ կփախցնեմ այտեղից:

— Միայն չո՛ւտ, չո՛ւտ, աղաչում եմ:

Բարզենին որորեց իր խիտ տերեփները յեղ լուս-նի լույսը մի վայրկյան կարողացավ զրկել այդ յերկու մարդկային դուխները: Իսկ հետո մի կանացի բարակ ձայն հասավ նրանց ականջներին.

— Գյուլլարա՛...:

Նրանք ցնցվեցին ու ամուր սեղմեցին միմեյանց:

— Մայրս է, Կիրբալայ:

— Գյուլլարա, աղջիկ, ո՞ւր ես:

— Յես գնում եմ Կիրբալայ յեղ հայտն քեզ վրա գնում:

— Ապասիր, նախ յերգվիր, վոր կին լես դառնա, այն մարդուն, վոր կարդասես ինձ:

— Յերգվում եմ...

— Յես ել յերգվում եմ այս ջինջ ու անողաղարդ յերկնքով:

Նրանք համբուրվեցին, իսկ հետո աղջիկը հաղիվ դադելով հեկեկանքը, թողեց ու հեռացավ: Կիրբալա-յը յերկար կանգնած մնաց իր տեղում: Յերկար իր հայացքը սրահեց այն փոքրիկ տնակի դռանը, մինչև վոր այնտեղից կատաղած դուրս յեկավ մեկը՝ դուռը հետեվից ամուր շրխկացնելով: Նրա հետեվից վո-ղեց մյուսը և սկսեց հասնել առաջինին:

Ճանաչեց Կիրբալայը նրանց: Մի թեթևիվ Ժպիտ անցավ նրա դեմքով: Յեղ նա սատանայի սրես աննկա-տելիորեն ցատկեց ցանկապատից դեպ վոտոցը, կո-րով գիչերային խավարի մեջ:

Կատաղել եր թո՛ւփալ — Հասան խանը, կատաղել ինչպես վիրավորված դադան: Կյանքը, վոր նրան մի քանի ժամ առաջ թվում եր սիրելի ու յերջանկու-թյամբ լի, այժմ դառավ ատելի ու խարդախ: Ինչպի-սի՛ մեծ հախտանքով ու ինքնախտահուլթյամբ եր նեքս մտել այդ տնակը և ինչպի՛սի՛ հուսախաբու-թյամբ ու ստորությամբ եր նա փախչում այդ նույն տնակից: Գոհարն ու վոսկին, վորոնց նա պաշտել եր այնպես ջերմ, ինչպես չեք սրահակ վոչ մի սրբի, այտեղ կորցրին նրա աչքում իրենց նշանակութունը:

Տարիներ շարունակ նա գիղել եր վոսկի ու դո-հար, զերել եր նրանցով, սարկացրել, ստորացրել ու գվարձության առարկա դարձրել վոչ միայն տղա-մարդկանց, այլև քաղաքի շատ ու շատ հայտնի գե-ղեցիկ կանանց, այտեղ պաղպական մի փոքրիկ կեղ-տտա խրճիթում նրանք գրուչի արժեք չունեցան մի հատարակ աղչկա համար: Ել վո՛նց շիտաղեք ու չփրփրեր փաճատականը, յերբ նրա ստալամ — դո-հարն ու վոսկին կորցրին իրենց գորությունը: Ու փախչում եր թո՛ւփալ Հասանը փողոցով և չեք դղում,

չէր լսում, թե վոնց և մեկը քծնող շան պես վազում էր հետեւից :

— Ախր արժե՞ անջկա մի քանի խոսքերից այդպես բարեկանալ թոփալ Հասան խան, — ասում էր հետեւից վազողը — չե՞ վոր աղջիկն ատոց, վոր դու ծեր ես, յես քո կինը չեմ դառնա, թե յես ուրիշին եմ սիրում : Աւրիշը յե սիրում, լսո՞ւմ ես, ուրիշի : Ահա գրեալուր պատճառը, վոր աղջիկը մերժեց քեզ : Դու հարուստ ես, թոփալ Հասան խան, դու կարող ես ասպարեղից վերացնել նրա սիրածին յե՛վ ա՛յն ժամանակ՝ հար հալիտյան քոնը կլինի Գյուլլարան :

Այս խոսքերը կամաց — կամաց ուշքի բերին թոփալ Հասան խանին : Նա կանդ ասավ :

Լուսինը թաղնիկ էր մուտք ամպի տակ : Անվ գիղիչերն անտեսանելի յեր դարձրել ամենամոտիկ ասորկան : Շուրջն անդորր էր : Իսկ նրանք կանդնել էլին դեմ աս դեմ ու նայում էլին միմեյանց վայլերով աչքերին : Մեկը կատաղութն ատամներն էր միմյանց սեղմել ու ձեռքերը բուռնք շինել, մյուսի դեմքին դիպահան ժպիտն էր փայլում :

— Իսկ ո՞վ է նրա սիրածը, — արտասանեց ցածր ձայնով թոփալ Հասանը :

— Կիրբալայը, ձեր ծառան . . .

— Կիրբալայը՞ . . .

— Այո, Կիրբալայը : Դուք միայն նրան այստեղից հեռացրեք, իսկ յես աղջկան այնպես կհամոզեմ, վոր նա ինքն իր սեփական վտարելով ձեր տունը գա :

— Շատ լավ, Ալի խան, յես կվիջնացնեմ Կիրբալային ինչպես մեկդի, բայց վա՛յ քեզ, յեթե դու յե՛լ խոստումդ չկատարես :

Թոփալ Հասանն ասանց սեղմելու Ալիխանի ձեռքը, չըմկեց ու արագ քայլերով հեռացավ :

Այնտեղ, վորտեղ հանդիստ էր ասել քարավանը, այդպե՛ս էր խորուշկը, վորի չուրջը թոփալ Հասանը համախմբումք տեսա՛յ իր մարդկանց, նրանցից

վամանք կրակի տաքության տակ վախուկ քուրքերի վրա հանդիստ խոմիացնում էլին, իսկ վամանք էլ մեծ ուշադրությամբ լսում էլին հեքայթ պատմողին :

Թոփալ Հասանն արագ — արագ մոտեցավ, բայց լսելով հեքայթ պատմողի վերջին խոսքերը, քարայածի պես կանդ ասավ :

— . . . Ու փախալ աղջիկը ծեր թագավորի ճոխ ապարանքից, հանեց իր վրայի թանդազինը չորերը, հագավ հասարակ պատուոված ցնցոտիներ և գնաց մտավ յերկատասարդ ձկնորսի գետնափոր խրճիթը : Ու ապրեցին նրանք միասին յերջանիկ, մինչև իրենց ծերության օրերը :

— Աֆարիմ աղջիկ, — բացականչեց ուղտապահներից մեկը :

— Շատ ել լավ արեց, — ավերացրեց մյուսը :

— Կիրբալայ, — հանկարծ վրորոաց կատաղի մի ձայն խավարի մեջ, վորից բոլորի մարմնով թեթեյ սարսուռ անցավ :

— Այստեղ եմ աղա :

— Հը՛մ, այստե՞ղ ես, ճանապարհովե՛լ, լսո՞ւմ ես ճանապարհովե՛լ :

— Հիմա՞, կեսգիշերո՞վ, աղա :

— Այո, հենց հիմա : Զարթնեցնել քնածներին, կնպել ապրանքներն ուղտերի մեջքերին և ճամբա ընկնել : Լսո՞ւմ ես, դե շո՛ւտ :

Ուղտապահները դարձացած, ասանց ձայն ու ծպտուն հանելու սկսեցին պատրաստություն տեսնել ճանապարհ ընկնելու :

Մենակ հսկա մարմնով Հեյդարը տրանջաց :

— Յնուրիկ է ծերունին, — ասաց նա :

Իսկ յերբ արևելքում հագլիվ հազ սկսեցին սպիտակին տալ ամպի մի քանի բարակ կտորներ, քարավանն արդեն վտար էր դրել անապատի ավազների մեջ :

Կես օր էր :

Արևն ինչպէս շիկացած մի դունդ, այլոց կայծեր
էր թափում: Երկանում էր ափազը և դառնում ապելի
փխրուն, ալիւի մանր: Կուս էր անապատը: Այդ
լուսեթյան մեջ հազիվ — հազ լսվում էր միայն գան-
գախներէի մեղմ դողանջը: Չանդակներէի գողանջներէի
տակտի համաձայն սրբում էլին իրենց կար մեջքե-
րն ուղտերը և փափուկ սմբակները թաղելով փրի-
րուն աղաղի մեջ, առաջ էլին ընթանում դանդաղ,
չառ դանդաղ: Նրանց մեջքերին կապած բեռները վը-
րա նստել էլին մարդիկ ու հանդիստ նիրճ մտել: Յեր-
բեմն ահամա ցնցումից նրանք դարձուրած աչքերը
բանալով նայում էլին դեպի յերկինք ու չտեսնելով
նրա սլաքը գեմքին փոթորիկ կնճիռներ, հանդատա-
ցած սրտով դարձյալ փակում էլին աչքերը: Ու վոչ
մի մարդկային ձայն, վոչ մի մարդկային բացական-
չութիւն չէր լսվում անապատում:

Անցնում էր քարափանն անապատով:

Մեղմ դողանջում էլին ուղտերի վզերից կապած
գանգակները և նրանց ձայները լիզելով ափսոսի հըս-
տակ յերեսը, չվում էլին հեռո՛ւ հեռո՛ւ:

Թվում էր թե անապատը հսկայական, խորհրդա-
վոր մի դերեզմանատուն է, իսկ քարափանը մեռելնե-
րին այցի յեկող պառավ, վորը վողբալով անցնում էր
դանդաղ, առանց հետ նայելու: Դանդա՛ղ ո՛ր, վոր-
քան դանդաղ են ընթանում այդ յերկարահասակ ուղ-
տերը. յե՛վ տասը տարիներէի ընթացքում Կիրբալայն
առաջին անգամ էր զգում քարափանի մեռելային
գանդաղ ընթացքը:

«Շո՛ւտ, չո՛ւտ միայն Կիրբալայր», — հիշում էր
նա Գյուլլարայի խոսքերը և աչքերը փակում:

Յեթե չլինէր չորս կողմը տարածված մանր ու
փխրուն ափաղը, յեթե արևն այդպէս խիստ չայրեր,
նա վաղուց կիջներ ուղտի մեջքից ու միայնակ կբայ-
լեր դեպի քաղաք: Նա այդպէս ալիւի արագ կհասա-

ներ, իրձախեր իր ունեցած-չունեցածը և յետ կդառ-
նար Գյուլլարային տանելու:

«Անդոր եմ Գյուլլարա, չեմ կարող չուտ վերա-
դառնալ» — շնչում էր Կիրբալայր, աչքերը փա-
կում և ճակատը դեմ անում արեւին:

Սակայն թոփալ Հասան վաճառականն այս
անգամ այլ մտքերով էր տարված: Ամեն անգամ ամ-
բողջ ճանապարհին նա ընկղմվում էր խորը հաշիփնե-
րի մեջ, թե վորքանով քաղաքում կծախի այսինչ
սպրանքը, ինչպիսի սպրանքներ պետք է գնի, վոր-
քանով կարելի յէ շահվել դրանից, յեթե ծախի այ-
սինչ դնով: Այս անգամ շահեկան մտքերը չբացել և-
սին նրա ուղեղից և նրանց փոխարինել սարսափելի
մի միտք, վորը վորոճել էր ամբողջ ճանապարհին:

Թոփալ Հասանը յետ շարտեց յերեսից սպիտակ
բողբ, նայեց յերկինքին ու տեսավ, վոր արեւին աքա-
բորեն փակչում է վրա հասնող մոռայլ ամպերից:
Հեռովից, շատ հեռովից վաղող ամպերը կամաց — կո-
մաց ծածկեցին հստակ յերկնափամարն իրենց մոռայ-
լությամբ: Տաք ու անչարժ ողն սկսեց խոնավանալ
և թեթեւ քամին շարժելով այն, խախեց անապատային
փխրուն ափաղին: Այլազը հանկարծակի դալով բարձ-
րացալ վեր և թափիկեց ուղտերի մեջքերին նստած
մարդկանց վրա:

— Կանդնել, — ձեռքը բարձրացնելով հրամայեց
թոփալ Հասանը:

Քարափանը կանդ առալ:

— Նստեցնել ուղտերը և դարկել վրանները:

Ուղտապահները զարմանքից չուէլ էլին աչքերը
և անչարժացել: Նրանց թվում էր, թե դա թմրա-
ծության տեսիլ է և վոչ թե թոփալ Հասանի անհաճո
ձայնը:

— Քարացել էք ի՞նչ է, նստեցնել ուղտերը:

— Հասան արդա, փոթորիկ է սկսվում, կանդ առ-
նելը վտանգավոր է, պետք է շտապենք ժամ առաջ
հասնենք իջեկանը:

— Բո գործը չե կայան: Յն հրամայում եմ նստեցնել ուղտերը և դարկել վրանները: Այս կլինի մեր իջնվածը:

Ուղտապահները հարվածներ տալով ուղտերի վզերին, սկսեցին նրանց նստեցնել: Ուղտերը գլխադնուցում էին վրանները և ամբողջ մարմնով թրմփացին ավազի վրա: Մարդիկ ցած թռան նրանց մեջքերից և մեծ վտթկոտությամբ սկսեցին դարկել վրանները: Յն վանապատի այն վայրում, վարտեղ վոչ մի քարավան սիրտ չեր ստել կանոյ անեղու, դարկվեց յերկու վրան:

Որը միջնաց: Բամին հետզհետև սաստկացավ: Ավազի հաստ շերտերը բարձրանում ելին վեր: Սուրյաներ հանելով քամին ցրում եր նրանց ու անաջ վազում: Վրանների շուրջը մեկը մյուսի հետևից նստել ելին ուղտերը և մաղվող ավազից աչքերը փակելով արոճ ելին անում:

Բայց ահա այն վրանում, վարտեղ իրար վրա կուչ են յեկել ուղտապահները, ինչ վար անհանգըստություն եր թազավորում:

— Սա ի՞նչ է, մինչև յե՞րբ պետք է յենթարկվենք այդ քավթառի քմահաճույքներին, — բացահան ինչեք յերեսունամյա վիթխարի հասակով Հեյդարը նայելով ուղտապահների մուռյլ յերեսներին:

Ապա պատասխան չստանալով, նա շարունակեց.

— Վերջապես մենք ել մարդ ենք, մենք ել մեր կամքն ունենք, չենք ուզում ես քամու ու փոշու մեջ նստել, յեթե այդ քավթառը ծերությունից հիմարություններ է անում, մենք ել անքան անասունի պես չպետք է յենթարկվենք նրան: Ի՞նչ է, չէյնք կարող ստել, թե չենք իջեվանի այստեղ, ի՞նչ կարող եր նա անել մեզ: Վոչինչ:

— Եղպես մի ասի, Հեյդար, — սոսց մի տարիքավոր ուղտապահ, — թո՞ւիալ Հասանը հարուստ է յեղ մեր աղան, ալլահն անգամ իր բարկության կրա-

կե շիթերը կթափեր մեզ վրա, յեթե մենք չկատարենք ինք թո՞ւիալ Հասանի կամքը, իսկ թե այս կյանքում նա մեզ նեղում է, ապա այն կյանքում ալլահն իր արժանի պատիժը կտա նրան:

— Հըմ, եղպես ես ասել Ասկյար ամի տարիներ շարունակ, դրա համար ե, վոր քառասուն տարի ուղտապահ ես յեղել ու թո կլինն ու յերեխաները չեն կարողացել իրենց մարմնի մերկությունը ծածկել փալասի կտորներով: Ալլահը, ալլահը, ամեն տեղ ալլահը, չկա ալլահ, հասկանո՞ւմ ես Ասկյար ամի չկա ալլահ:

— Սո՛ւս Հեյդար, այդպես մի ասիք, — վախեցած բացականչեցին մի քանի ուղտապահներ:

— Այո, չկա ալլահ Ասկյար ամի, — շարունակեց Հեյդարը, ուչք չդարձնելով ուղտապահների վախեցած ու միջնափունջն ժամանակ սպտանալից հասկանալիս, — յեթե լիներ ալլահը, նա կլսեր ձեր յացքներին, — յեթե լիներ ալլահը, նա կլսեր ձեր արթթի ձայնը, կողմեր ձեզ աղաովելու այս տանալութի ձայնը, կողմեր ձեզ արթթի ձայնը ե բերել թոտությունը, վորը մեր քրտինքով ձեռք է բերել թոտությունը, կրթածներ մեր մեջ, իսկ նրան կղրկեր փալ Հասանը, կրթածներ մեր մեջ, ինչ նրան կղրկեր դրանից: Նա յեղել է այրուղի և մեզ զրկել ամեն ինձեզ, քամել է մեր արյունը և մեզ զրկել ամեն ինչից: Չկա ալլահ Ասկյար ամի, — բացականչեց Հեյդարը և կայծեր թռան նրա սև աչքերից:

Մի քանի վայրկյան վրանում տիրեց կատարյալ լուռություն: Ապա մեկն անհամարձակ ձայնով խղից այդ լուռությունը:

— Հեյդարը ճիշտ է ասում. յես թո՞ւիալ-Հասանից վերցրած պարտքս տասն անգամ տվել եմ, ելի քանի դեռ եմ, այնքան շատանում է պարտքս: Յեթե ալլահ կա, ինչո՞ւ չի տեսնում սովից մահացող իմ յերեխաներին, չի լսում մեր ձայնը: Չե ջանք, ալլահը դուն ա, այ, մեր ալլահը թո՞ւիալ Հասանն ա:

— Իսկ իմ տան կառուրը թեքվել ա, ծակերից անձրեկը ներս ա թափվում, անակումնս պատկած են

Հիվանդ փոքրիկ յերկու յերևաստ նե ցավից ծանր անքում են: Կինս խնդրեց, վոք քաղաքում շաքարեղեն դեմ, բայց ինչո՞վ դեն, գրգռնուածս կոպիկ անդամ չկա:

— Այդպես ե յեղել յեվ այդպես ել կմնա, յեթև Ասկյար ամու նման ձեր հուշքը դենք ալլահի վրա: Թոփալ—Հասանի հարստությունը, դա մեր հարստությունն է, բայց նա ապագակի նման յսլել է մեզից մեն: Մենք հեշտությամբ կարող ենք յսլել նրանից մեզից համընտանիք: Բայց դուք վախենում եք ալլահից, այն ինչ ձեր պաշտամ ալլահը, պաշտպան է հանդիսանում անխիղճ կողոպտիչին: Քաղաքում նույնպես Թոփալ Հասանի նման զորքաներ կան: Նըրանք նույնպես սպրում են մեկ նման աշխատավորների հաշվին: Բայց այնտեղի աշխատավորությունն իր հուշքը չի գրել ալլահի վրա, նա պայքարում է հարստահարիչներին դեմ:

Հեյրաբի այս խոսքերի վրա բացվեց վրանի անցքը և քամու ու փոշու հետ ներս սողաց Մուխտարը: Նա կանգնեց, մի քանի վայրկյան աչքերը ձմռեց, թափ տվեց ունքերից ու ականջակոնքերից փոշին, ապա ասաց.

— Կիրբալայ, ազան քեզ կանչում է իր մոտ:

Կիրբալայը, վոքը կուչ էր յեկել վրանի մուկ անկյունում և ամբողջ խոսակցության ժամանակ մեծ ուշադրությամբ լսում էր Հեյրաբին, ցնցվեց:

— Ի՞նչ է ուզում ինձնից:

— Չգիտեմ, հրամայեց, վոք դաս իր մոտ:

— Հրամայեց, հը՛մ: Իսկ յեթև չզնամ, ի՞նչ կարող է անել նա ինձ, հը՞, Մուխտար:

Մուխտարը զարմանքից չուեց աչքերը:

— Գե լավ, գնա՛, գալիս եմ:

Մուխտարը դուրս գնաց: Կիրբալայը մոտեցավ Հեյրաբին, ձեռքը դրեց նրա ուսին, ապա ասաց.

— Հասարակ բաներ են ասում Հեյրաբ, և յես

զարմանում եմ, թե վո՞նց մինչև հիմա, մենք այդ հասարակ բաները չենք իմացել:

— Ահ՛ վոք ալլահը յերկնքից իր սարսափն եր փռել ձեզ վրա.— քրմ իմ իմպոզի պատասխանեց Հեյրաբը:

— Թճած ալլահի վրա, չկա ալլահ, Հեյրաբ, մեր քա կողմն է:

Հեյրաբը ժպտալով սեղմեց Կիրբալայի ձեռքը:

Կիրբալայը դուրս յեկավ վրանից: Քամին ազդե մի հաստ սյուն պատեցնելով ուղում, զարկեց նրա դեմքին և ցրեց շորս կողմը: Իսկ վրանում տիրող լուսթյան մեջ, քիչ հետո դարձյալ լսվեց Հեյրաբի հաստատուն ձայնը:

Յերեք տարի յեր, ինչ Հեյրաբը հայտնվելով այդ կողմերում, մտել էր վոքպես ուղտապահ Թոփալ Հասանի մոտ: Առաջին անգամը չէր, վոք նա այդպես յես խոսակցություն էր ունենում վոչ միայն ուղտապահներին, այլևս դյուղերում հավաքվող դյուղացիներին հետ: Ո՞վ էր նա, ունե՞ր նա ընտանիք, կամ ծանոթներ, վոչվոք վոչինչ չգիտեր այդ մասին: Ազնիվ և ճշմարտաստու մարդ էր Հեյրաբը: Այդ գլխավոր հատկության համար էր, վոք նա մեծ սեր և հարգանք էր վայելում դյուղացիներին և ուղտապահների կողմից: Այդ էր գլխավոր պատճառը, վոք աստիածս պաշտ ուղտապահներն այնքան էլ չնեղացան նըրանից, պաշտելի ալլահին իխտո քննադատելու համար:

Թոփալ Հասանը թիկն էր տվել փափուկ մինդարների վրա, ընկզմվել մոտամունքների գիրկը: Նա չէր լսում, թե փոնց է քամին դրսում ավազե հաստ յերտերը դարկում վրանի կողերին: Նա չէր լսում, թե ինչ էր նվազում դյուղաչարժ մասներով թափ վրա Մեհտին—վոքը կուչ էր յեկել վրանի հեռավոր անկյունում ու գողտաղողի հայացքով տիրոջն էր նայում: Նա նույնիսկ չորի վրա դարսած համեղ ուսե-

կեղևներն և ուստուն, վոր տեկեց ինքն ևր լցրել բաժա-
կի մեջ, դեռ ձեռք չեր տվել: Նա մտքով թուել, սլացել
ևր այն գեղեցիկ եյակի մոտ, վորը նրան այնպիսի
խայտառակ կերպով մերժեց, վորին ինքը սիրում է և
վորին ձեռք բերելու համար վրէժն չի առաջ կանոք չի
առնի ու չի խնայի վրէժնն, վրէժնն:

«Գու կլինես իմը, Գյուլարայ» — չնջում էր Թո-
վալ Հասանը:

Նրան ինչ, վոր Մեհտին նվազում էր անհաջող
սիրո մի յեղանակ, նրան ինչ, վոր դրսում վրոնում
էր քամին, մահաշունչ քամին ու ասում նրան. «Գու
ձե՛ր էս, դու արժանի չես Գյուլարային»:

Նրան ինչ, վոր ինչ վոր մեկը շարունակ տանջում
էր նրան, չնջում ականջին. «Գյուլարան Կիրբալային
և սիրում»:

— Գու պետք է լինես իմը, յես կխրեմ քեզ Կիր-
բալայից, — ցնցվեց Թովալ Հասանը և կատաղաբար
մեկ ումպով իմեց ուստով լիքը բաժանին ու զոտաց
Մեհտու վրա:

— Այդ ի՞նչ էս նվազում, չո՛ւն: Նվաղիր իմ յե-
ղանակը, իմ:

Մեհտին սկսեց նվազել մի այլ յեղանակ:

«Յեվ դու կխոնարհվես իմ առաջ

ու յես կլինեմ քո տերը...»

Այդ ժամանակ Մուխտարը ներս մտավ վրանը
Քիչ անց ներս սողաց նայել Կիրբալայը, վորին տես-
նելով, վաճառականի դեմքին հանկարծակի բռնապրո-
սիկ մի աշխույժ յերեկաց:

— Կիրբալայ, արի նստիր, յես կամենում եմ այս
դիչեր սեղան նստել քեզ հետ: Այբու Մուխտար բա-
ժակները ուստով, նվազիր Մեհտի մի ուրախ յեղա-
նակ: Այս դիչեր, յերբ ամեն մի դազան անապատում
վախից կուչ է յեկել իր վորջում, յես կամենում եմ
քե՛ք անել, լինել ուրախ, յերգել, նվազել ու պա-
րել: Նստիր Կիրբալայ, կյանքը կարճ է ամենքիս հա-

մար և թող այդ կարճ կյանքը ուրախ լինի:

«Քանի վոր կյանքն այսքան կարճ է

Թող վայելենք ցվախճան,

Յեվ ապրելով միշտ ծիծաղենք,

Ի՞նչու վատենք մեկ վայրկյան»:

«Ինչո՞ւ վատենք մի վայրկյան» — ասել է
հայտնի հին փիլիսոփաներից մեկը: Նստիր Կիրբալայ,
իմիր ուսխին և ուրախացիր:

Կիրբալայը, վոր մի քանի անգամ սեղան էր նստել
Թովալ-Հասանի հետ և ծանոթ էր նրա սովորու-
թյուններին, այս անգամ բնավ չլարմացավ նրա տա-
րորինակ խոսակցության ձեվի վրա: Նա նստեց ձեռ
վաճառականի դեմ ու դեմ և մի կուժով իմեց դառն
ուստին: Իսկ հետո լավաչի մեջ փաթաթելով յեկամ
սառը միտը, մեծ ախորժակով սկսեց ծամել:

— Ա՛յ, այդպես, կեցցես, Կիրբալայ: Սիրում եմ
քեզ: Յեվ միշտ ել քո ներկայությունը շատ եմ ցանկա-
նում մեռակությանս բողբոջներին: Խմենք:

Նա իր ձեռքով բաժակները լցրեց ուստով, մեկը
տվեց Կիրբալային, մյուսը պահեց իր մոտ: Կիրբալա-
յը վերցրեց իրեն մեկնած ուստով լի բաժակը յեվ
առանց նայելու Թովալ Հասանին մրթմրթաց:

— Սաղ լինես:

Ու դատարկեց մինչև վ հատակը: Իսկ Թովալ Հա-
սանն իր բաժակն աննկատելիորեն թափեց շորի տակ,
չոր ավազի վրա, ապա արագ-արագ միտն ու հացը
փաթաթելով իրար սկսեց ուտել:

— Փա՛, փա՛, ինչ դառն է այս անիրավ ուստին,
մարդկային կյանքի նման դառը, այնպես չե՞ Կիրբա-
լայ: Մենք բուրս ըմպում ենք այդ դառը կյանքն
այսպիսի փոքր բաժակներով ու չենք հաղենում: Մի-
թե՞ դառնությունն այդքան քաղցր կլինի Կիրբալայ:

Ապա թույլ չտալով, վոր Կիրբալայը պատասխա-
նի իր տված հարցին, նա զոտաց հավատարիմ ծառա-
ների վրա:

— Մեհտի, ի՞նչ ես ասանակի պես ականջներդ կախել, մի ուրախ յեղանակ նվագիր, իսկ դու Մուխտար, ինչո՞ւ արդպես մտամոլոր ու թմբած հայացքով ես նայում մեղ: Լցրու բաժակները սախով:

Դրում քամին այնպես սաստիկ դարկեց վրանի կողերին, վոր նրա ճեղքված քներով մանր ավազը թափեց նրանց գլխներին:

— Այս անիրավ քամին, վոր այժմ անապատում սարսափելի մահ է տարածում, ինձ չի վախեցնում: Այս գիշեր յես սիրեցն նրան, — ասում եր թոփալ Հասանը և նայում Կիրբալայի աչքերին: Կիրբալայը խմում եր դառը սախին բաժակը — բաժակի հետեից և յուրաքանչյուր մի բաժակից հետո մթնում էյին նրա աչքերը, առարկաները դառնում տարրինակ ու նա չէր կարողանում նկատել, թե խմո՞ւմ է թոփալ Հասանն իր բաժակը:

— Խմիր Կիրբալայ, նվագիր Մեհտի, յերգիր Մուխտար, — բացականչում եր վաճառականը և դարձյալ լցնում բաժակները:

Կիրբալայը չէր տեսնում վաճառականի խորամանկ ժպիտները, չէր լսում նրա կծու հեղնական խոսքերը: Նա խմում եր սախին, ու թվում եր իրեն, թե ինքը նստած է ուղտի վրա, իսկ քարավանն անուշ դանդակների դողանջների տակ անցնում եր անապատի միջով, խողաղ, աստղագարդ գիշերով: Յեղ բազմամրլին աստղերի մեջ ամենից վառ ու փայլուն — փայլում էյին յերկու հատիկ աստղեր, վորոնց շատ եր նայել Կիրբալայը, վորոնցով շատ եր դմայվել նա: Ծարունակ նրան թվացել էյին, թե դա իր Գյուլլարայի գույգ աչերն են, վորոնք վերեփից նրան են նայել գուրգուրանքով, ցույց ամեյ ճանապարհը:

— Յերգիր Կիրբալայ, ի՞նչ ես մտածում, — գոտայ թոփալ Հասանը:

Յեղ Կիրբալայը յերգեց:

«Ու գույգ աստղերի տեղ,

վորոնց պաշտում է ևս վազն յերկյուղած
«Քո գույգ աչերն են սրախ ուղեցույց
«Ու նրանց աստված»:

Մուսլվեյ թոփալ-Հասանը:

— Բախական է, ուրիշ յերգ յերգիր, — գոտայ նա: Կիրբալայը լսեց: Ասլա իր խառնված աչքերը հանելով Հասանի վրա, ասաց:

— Ինչո՞ւ, այն ինչ վոր յես յերգում ու հավանում եմ՝ ձեզ ահաճություն է պատճառում:

— Ձխոսներ սյղ մասին Կիրբալայ, դուցե այդ նըրանից է, վոր մենք տարբեր բնավորության սեր մարդիկ ենք:

— Վոչ. այդ դրանից չէ: Այլ այդ նրանից է, վոր մենք տարբեր ցեղերից ենք... Աշխարհիս յերեսին դոյություն ունի յերկու ցեղ: Մեկը հարուստների, ըզը նմանների ցեղն է, մյուսը ինձ, Ասկյար ամու, Մսոոյի նմանների ցեղն է: Յեղ ահա այն, ինչ սիրում է մի ցեղ, մյուսն ատում, արհամարում է այդ բանը: Մեկը կյանքի ամբողջ իմաստը դանում է վոսկու ու գոհարի մեջ, իսկ մյուսը՝ աշխատանքի և սիրո մեջ:

Կիրբալայը տեց: Ասլա այս անգամ ինքը լցնելով բաժակները, խմեց մինչև վերջին կաթիլը: Հետո նա վեր կացավ:

— Բախական է, ել չեմ կարող խմել, ամեն ինչ պատվում է գլխումս, — կորցնում եմ գիտակցությունս, վոտներս ել կամքիս հակառակ ծալվում են:

Նա յերկու քաջ արավ և ամբողջ հասակով փովեց գետին:

— Գյուլլարա՛, քարավանը դանդաղ է գնում, — ասաց նա:

Թոփալ-Հասանը բարձր-բարձր ըրջաց:

— Յերեկի դու այդ հասարակ բանն ել չդիտես, թե ինչու թոփալ-Հասանի քարավանն այնքան դան-

վոչ վոք նրանցից դուրս չեր յեկել ավազի տակից: Բայց ա՛հա այդպիսի մի բան, անսպասն առաջին անգամն էր տեսնում:

Մարդը, վոր դուրս յեկավ ավազի միջից, վեր կոցցավ: Նա մերկ սուրը դրեց պատյանի մեջ, դիտից հանելով վրախալը՝ թափ տվեց նրա վրայի վոռչին, սկսեց քայլել: Գեւ ս՞ուր էր տանում նրա բռնած ուղին: Նա չգիտեր: Անհայտ մի ուժ նրան առաջ էր հրում և ստիպում էր քայլել:

Քայլում էր Կիրբալայը տաք ավազի միջով: Նա հասկացավ, թե վորպիսի ծուղակի մեջ դեցեց իրեն խորամանկ թուփալ-Հասան խանը: Այժմ յերևիլի հստում է իր հայրթանակի վրա և յերազում վերադարձի մասին: Հասկացավ Կիրբալայը, վոր թուփալ-Հասանն այժմ կկարողանա Գյուլարային իր կինը դարձնել: Չե՞ վոր բնկերները կհաստատեն իր մահը: Իսկ ս՞ում մըտքով կանցնի, թե ինքը խաբերայության գոհ և դարձի ու գեռ կենդանի յե:

Քայլում էր Կիրբալայը:

Արևին այրում էր գլուխը: Ախաղը տաքացնում էր վտոները: Ամբողջ մարմինը մռմռում էր գոլոշիացող քրտինքի կաթիլներից: Քաղցը մի կողմից էր նեղում, ծարավը մյուս կողմից: Բերանը ամեն ինչ չորանում էր: Լեզուն անգորբար շարժվելով կոչում էր չորացած լողերքին ու ցավ պատճառում:

Կիրբալայը կանգ առավ: Սկսեց փնտրել մի հետք, կամ նշան, վորով կարելի կլիներ գուշակել, թե վոր կողմով էր գնացել քարավանը: Բայց ամբողջ գիշեր փչող ահեղ քամին ծածկել էր ամեն ինչ գեղնագույն ավազե շերտով: Չկար վոչ մի հետք: Չկար պատման վոչ մի հույս: Մահն անխուսափելի յեր: Մահը, տանջանքերով լի մահը գալու յեր դանդաղ, շատ դանդաղ, ինչպես քարավանի ընթացքը: Յե՛կ այդ մահը պիտի տար նրան արևը, վոր կյանք էր տալիս բազմահազար բույսերին, կենդանիներին, մարդկանց: Չար-

մանալի յե: Այ՛ն, խայտառակ մահ: Նրան թվում էր, թե ինքը մի մուկ է, իսկ անսպասը մեծ սկավառակ, վորին տաքացնում է արևի վերից ու տապալում... խայտառակ մահ: Վո՛չ, Կիրբալայն այդպիսի մահով չի մեռնի: Նա ունի քաջ աղամարդու արիւթ յուն: Նա վերջ կտա իր կյանքին: Կիրբալայը հանեց պատյանից սուրը, ծայրն ուղղեց իր սրտին և աչքերն սուրը փակեց: Մեռնե՞լ: Իսկ այդպիսի մահը միթե՞ թուլության և վախկոտության արդյունք չի: Չե վոր նա կարող էր յուրաքանչյուր մի բողբոջի վեր կյանքին վերջ տալ: Ինչո՞ւ չչարունակել փնտրել փրկության ուղիներ: Բացի դրանից, չէ վոր նա խտախտ ծարավ էր, չե՞ վոր նրա սկանջին հնչում է իրենց աղբյուրի էր, չե՞ վոր նրա ախանջին հնչում է իրենց աղբյուրի ստոր ջրի կարկաչը: Նա բացեց աչքերը և ո՞ գարմանք: Հեռվում տեսավ վշտացող մի գետ, վորն արամորեն հոսում էր և հոսում ուղիղ իր վրա: Նա սուրը գործն հոսում էր և հոսում ուղիղ իր վրա: Նա ամեն վշտյուններ համեյով շարունակում էր հոսել: Նրա ամեն վշտյուններ կանաչը մեղմորեն ոլորում էր ու Կիրբալային բուսած կանաչը գեղեցիկ էր: Կիրբալայն ուրախացավ: Նա լային քաշում դեպ իրեն: Կիրբալայն ուրախացավ: Նա ձեռքերն առաջ պարզեց և լեզուն քսելով շրթունքներին, սկսեց քայլել: Բայց վորքան նա արագացնում էր իր քայլերը, այնքան դետն արագորեն էր հոսում, այնքան տարածությունն իր ու գետի միջև մեծանում էր: Նա կանգ առավ: Մի վայրկյան նրա մթաղնած ուղիղով անցավ, վոր այդ խորուսիկ մի տեսիլ է, քայց գետը հոսում էր և համառորեն ցույց էր տալիս իր դոյությունը: Նա դարձյալ սկսեց առաջ գնալ: Այս անգամ գետի վշտյունների տեղ, լսեց ծանոթ գոմուլայակների ձայներ: Նա սարսափահար կանգ առավ և հայացքը շրջեց մյուս կողմը: Նա տեսավ ուզտերի յերկար մի շարան, վորոնց մեջքերին հոսել է յին մարդիկ և հանդիստ ծխամորճ է յին ծխում: Նա ստույգ ու

կանդնել եր: Նրան թիւում եր, յեթե ինքը վաղի գեպի քարալանը, սաբա տարածութիւնն իր և քարալանի միջեւ նույնպէս կ'յերկարանա: Հանկարծ նա կ'ուսնեց, վոր ինքը կարող է դոռալ առանց տեղից շարժվելու: Յեւ նա դոռաց վորքան ուժ ուներ:

— Ե՛յ, ողնեցեք:

Բայց նա չհամբերեց և սուս վազեց:

Քարալանը կանգ առավ:

— Ե՛յ, ողնեցեք:

Վրաները ծարվեցին ու նա փորի վրա վայր ընկավ: Իժվարութեամբ բարձրացրեց կապարե ծանրութիւնն ունեցող գլուխը ու մեկ անգամ ել դոռաց:

— Ե՛յ, ողնեցեք:

Քարալանի առջևի յերկու ուղտերի վրայից իջան յերկու զինված մարդիկ և զնացին գեպի Կիրբալայը: Նրանցից մեկը կոացալ նրա վրա, բարձրացրեց գլուխը և սուս ընկերոջը:

— Ուշաթիփվել է:

— Իսկ ո՞վ է, — հարցրեց մյուսը:

— Չգիտեմ:

Նրանք ձեռքերի վրա վերցրին Կիրբալային ու սարան:

Յերբ Կիրբալայը բացեց աչքերը, նա լսեց հետեւյալ խոսակցութիւնը:

— Ուտելու պաշարը վերջանում է, Հակոբ, աղերքն ուր-որի վրա իրենց դժգոհութիւնն են հայտնում: Յերկար այսպէս կանգ առնել չենք կարող, հարկավոր է կատարել մեծամասնութեան պահանջը:

— Ի՞նչ է այդ պահանջը:

— Հարձակվել վերջին անգամ: Կամ դուրս կրքչենք նրանց գյուղից, կամ ել չե... Գոնե պատվով կմեռնենք:

— Պատվով կմեռնենք: Ասա հիմարբար կմեռնենք: Չե՞ս համարձակվում այդ բառը դործածել, ամաչում ես: Ինչ մեկ անգամ զգացել ես նրանց գո-

րութիւնը: Հաստատ դիտես, վոր 35 հողով հարձակվել 150 լավ սպառազինված մարդկանց վրա, անհեթեթութիւն է: Նրանք մեկ ճանճերի նման կ'ուտրեն:

— Գիշերով կհարձակվենք, հանկարծակի ...

— Միամիտ յենթադրութիւններ մի անի:

— Լավ, քո կարծիքով ի՞նչ պետք է անենք: Այս արեւի տակ այրվելով, խո՞ւ չենք ստապակվի:

— Այ թե ինչ պետք է անել, յերկու ուր ևս կըստանանք: Յես հաստատ դիտեմ, վոր Կարմիր բանակի ուժերը շարժվում են մեր գյուղի վրա: Յերբ նրանք կհարվածեն գյուղում նստած սպիտակներին, վերջինների փախուստի միակ ճանապարհը կլինի այս անապատը, վորտեղ ժամանակավոր ապաստարան ենք գտել մենք: Այն ժամանակ տղերքն իրենց հունարը ցույց կտան:

— Ստոտմայի խելք ունես Հակոբ: Հարկավոր է տղաներին այդ մասին հայտնել: Թե չես սկսել են զժութիւններ անել:

— Շատ լավ, զնանք:

Նրանք դուրս յեկան վրանից: Կիրբալայը մնաց մենակ: Այդ յերկու մարդկանց խոսակցութիւնից նա համարյա վոչինչ չհասկացավ: Կիրբալային սպողեն գետեր, վոր այդ մարդիկ ազատել են իրեն, կյանք են տվել: Բայց ովքե՞ր էին նրանք: Ի՞նչ կարմիրների տվել: Բայց ովքե՞ր էին նրանք: Խոսքը, նա ըմբռնել կամ հարձակումների մասին եր խոսքը, նա ըմբռնել չէր կարողանում: «Այսպէս կ'ընեն» — անցավ նրա մտքով: Կիրբալայը վեր կացավ ու նստեց տեղում: Կիրբալայը վեր կացավ մի խարույկ, վորի վրա վրանի բաց դռնից նա տեսավ մի խարույկ, վորի վրա կախված մեծ կաթնայից գոլորշին վեր եր բարձրակալված մեծ կաթնայից գոլորշին պատվում էին մի քանի նուս: Խարույկի շուրջ կարող էր պատվում էին մի քանի մարդիկ: Բառականներ հեռավորութեան վրա ման էին գալիս ուղտերը և կրճում անապատային չոր փշերը: Ուղտերից գենը հրացաններն ստուր սեղմած ձեռնե-

լին՝ այս ու այն կողմն էլին դնում դայիս ինչ վոր
մարդիկ:

Կիրբարայը պատրաստում էր դուրս գնալ, բայց
այդ ժամանակ վրանը մտան Հակոբն ու Արզուլը:

— Արդեն դարթնե՞լ եք, ինչպե՞ս եք ձեզ զգում:
Ինչու յեք վեր կացել—ասաց Հակոբը և հրացանը դը-
րեց վրանի հեռավոր անկյունում:

Կիրբարայը մարմնով մեկ թուլութուն դգաց և
նորից պառկեց:

— Յես չատ լավ եմ: Ինձ հետաքրքրում է, ով-
քեր են իմ ադատիչները:

— Հասարակ չարքաչ գյուղացիներ մտառակ գյու-
ղից, վորոնք ազատամբվեցին ազաների դեմ և վորոնց
գյուղից քչեցին սպիտակ զվարդկահանները: Իսկ
դուք ո՞վ եք: Յեվ ինչո՞ւ յեք մենակ թախառում ա-
նապատում:

Կիրբարայը մանրամասն պատմեց այն բոլորը,
ինչ կատարվել էր իր հետ: Յերբ նա իր պատմու-
թյունը վերջացրեց, Հակոբը հարցրեց.

— Ասում ես թուխալ-Հասանի քարավանը հե՞տ է
դառնալու այս ճանապարհով:

— Այո:

— Հրաչալի յե: Մենք կհարձակվենք նրանց
վրա: Իսկ յե՞րբ է նա վերադառնալու:

— Այսօր, կամ վաղը:

— Պահակներին հարկազուր և ստել, վոր աչա-
լուրջ լինեն:

Արզուլը դուրս գնաց:

— Ուրեմն դուք կամենում եք հարձակում գոր-
ծել թուխալ-Հասանի քարավանի վրա՞, — հարցրեց
Կիրբարայը մտածմունքի մեջ բնկած:

— Այո:

Ներս մտավ պահակներից մեկը:

— Արզուլն ուղարկեց: Հեռավոր յերեվում է ան-
ձանթ մի քարավան:

— Այդ նրանք են, — բացահանչեց Կիրբարայը և
վերցնելով վրանի անկյունում դրած Հակոբի հրացա-
նը՝ կայծակի արագությամբ դուրս նետվեց:

Հեռվում յերեվացող քարավանը կանգ առավ:

Հեռադիտակը գնելով աչքերին, Հակոբը տեսավ,
թե ինչպե՞ս մարդիկ հարվածելով ուղտերի վզերին,
նստեցրին նրանց: Հակոբի կողքին կանգնած Արզուլը,
վոր հեռվում նշմարվող ու չարժվող կետերից զատ ել
վոչինչ չէր տեսնում, անհամբեր հարցրեց.

— Հը, ի՞նչ են անում նրանք, կա՞նդ առան:

— Նրանք հավաքվել և յինչ վոր խորհում են, —
ասաց Հակոբը:

— Թույլ տուր հարձակվենք, թույլ տուր — բա-
ցահանչեց մյուս կողքին կանգնած Կիրբարայը:

Հակոբը նայեց Կիրբարային ու թեթևակի ժղո-
տաց:

Նրանց հետևում, հրացաններն ամուր սեղմած
ուժեղ ձեռներում, կանգնել էլին յերեսունհինգ առողջ
և ուժեղ, արեվից սեվացած մարտիկներ, պատրաստ
Հակոբի հրամանով նետվելու պայքարի գիլով: Նը-
րանք մեկ անգամ կռվել են առյուծների պես, ցույց
տվել յրե՛նց քաջությունն ու համատարմությունը գե-
պի հրամանատարը և այժմ անհամբեր սպասում են
նրա մեկ խոսքին: Իսկ Հակոբը նայում էր հեռադի-
տակով դեպ հեռուն ու վոչ մի բառ չէր արտասա-
նում:

— Հը, ի՞նչ յեղավ, դե մի բառ ասա, — ստում էր
Արզուլը:

Հակոբը հեռացնում էր հեռադիտակն աչքերից,
մի պայրիկյան աչքերը միկոցում, ապա հեռադիտակը
նորից դնելով աչքերին, դարձյալ նայում:

— Հը՞, — անհանգստանում էր Արզուլը:

Հակոբն այս անգամ հեռադիտակը կախեց վը-
ղից և ասաց լինկերներին:

— Չորս հողի բաժանվեցին նրանց իմբից յեվ
դեպի մեզ են դալիս:

Հեռվում յերեվացին շտապ կերպով մոտեցող չորս մարդկային մարմիններ: Նրանց առջևից քայլում էր հսկա հասակով մեկը: Ամեն ինչից յերեվում էր, վոր նա յեք կանգ առած քարտվանի առաջնորդը: Կիրբալայը անթարթ աչքերով նայում էր հենց այդ մարդուն, հետո իր հայացքն ուղղում մյուս յերեք ծերունիների վրա: Նրան թվում էր, թե դա յերայ է: Նա չէր հավատում սեփական աչքերին: Նա չգնեց ու կանգնեց էր: Մի՞թե այդ նրանք են: Բա ո՞ւր է Թովալ Հասանը: Մի՞թե նա մնաց քարտվանի մոտ: Յերբ չորս հոգին բավականին մոտեցան, Կիրբալայն էլ իրեն չկարողացավ սրահել: Նա ընդառաջ վազեց և համարյա խելագարի նման գոռաց:

— Հեյդար, այդ դո՞ւք եք: Ասկյար ամի այդ դո՞ւն ես:

Չորս հոգին դարձացած կանգ առան: Ասկյար ամին սարսափած մի քանի քայլ հետ դնաց:

— Կիրբալայը, — ահով արտասանեց նա:

— Այո, յես եմ, Կիրբալայը, բա ո՞ւր է Թովալ Հասանը:

— Թովալ Հասանը մյուս աշխարհումն է Կիրբալայ: Մենք կարծում էյինք, թե դու նրան այնտեղ կտեսնես, — ստաց Հեյդարը ժպտալով:

— Ափսո՞ս, — արտասանեց Կիրբալայը:

Իսկ Ասկյար ամին մոտենալով նրան, շոշափեց նրա դեմքը, ապա վախեցած ձայնով հարցրեց.

— Ասա, դու սատանա՞ յե՞ս, թե իսկական Կիրբալայը:

— Կիրբալայն եմ, Ասկյար ամի, Կիրբալայը:

Հեյդարը, վորը մինչ այդ չէր կարողացել զննել մյուսներին զբիմագծերը, այժմ յերբ հայացքը դրեց Հակոբի ժպտացող դեմքին, դարձացած բացականչեց.

— Վա՛հ, Հակոբ...

— Հեյդա՛ր...

Յեկ նրանք առաջ վազելով ամուր դրվախառնվուցին:

— Քանի՞ տարիներ են անցել, Հակոբ:

— Քանի տարիներ ենք չափելի այս անասպար և առաջին անգամն և ինչ հանդիպում ենք:

— Այդ վո՞նց, Հեյդար:

— Մենք յեկանք կարմիր բանակի հետ, ջարդեցինք ձեր դյուղում նստած սպիտակ գլխադիակահանքին, մեզ ստացին, վոր դուք յեկել եք անասպար: Վորպեսզի թյուրիմացաբար արյունահեղություն չառաջանա, մենք առանց դենքի չորս հոգով մոտեցանք ձեզ: Այժմ թույլ տուր մեր քարտվաններն իրար մոտեցնելու: Այս գիշեր կանցկացնենք միասին, իսկ վաղը կշարունակենք մեր ճամբան: Գեմ չե՞ս, Հակոբ:

— Համաձայն եմ, մեծ ուրախությամբ:

Ծ Ո Վ Ը

Յերկու կայմանոց, հսկայական «Աշխատանք» նա-
վը, վորը կանգնած էր Մտխաչ-Կայա նախահանդու-
տում, արագորեն բեռնվում էր:

Բեռնակիրները կոնսլեյերի նման, սլահեստից ան-
ընդհատ իրար հետեւից բերում էին շաքարով լիքը
ծանր քսակները և դարսում տախտակամածում փոփած
յերկու տակ հաստ սպարանի վրա: Յերը քսակների
թիվը հասնում էր տասի կամ տասներհինգի՝ յերկու
յերիտասարդ բեռնակիրներ կապում էին դարսած
քսակները, սպարանի ծայրը հազցնում կրանի վրաս-
ողակին և ամբողջ կոկորդով բղավում:

— Վիրա՛... .

Փոքրահասակ և չափազանց ուրախ դեմքով,
ստախտակամածային նախատի Կուզման, աջ ձեռն
չարժումով գործի յեր դնում մեքենան, վորը հար-
յուր քսան փթանոց ծանրությունը բարձրացնում էր
վեր և այն իջեցնում նավի տրյումի մեջ:

Մեծ էր տրյումը, վորի մեջ աշխատում էին
քսան բեռնակիրներ: Նրանք մեծ յեռանդով հարձակ-
վում էին ամեն մի իջեցրած հակի վրա, ու մի ակըն-
թարթում տեղավորում տրյումի բազմահազար կիտա-
մութ խոռոչներում:

Ժամը յերկուսին նավը սկսեց և ճանապարհվեր
դեպի Կրասնավոդսկ: Իսկ այժմ ժամի մեկին էր, սա-
կայն միջին տրյումը դեռ կիսով չափ չէին լցրել: Յե-
րեք-չորս ժամվա աշխատանք էր սլահանջվում, մին-
չեվ տրյումը լցնելին ու բերանը տախտակներով ծած-
կեցին: Կնչանակե՛ նավը ուշացման վտանգի տակ էր

դանթում: Իսկ ուշանալ՝ Կուզման չեր սիրում: Նա
ցանկանում էր ժամ առաջ ճանապարհվել, ժամ առաջ
տեղ հասնել: Նա իրեն շատ անհարմար դրության մեջ
էր պլում, յերը նախահանդսաներում սե տախտակների
վրա կապիճով դրում էին—«Աշխատանք» նավն ուշա-
ցավ մեկ ժամով:

Կուզման շատ լավ էր հատկանում նայել այն, վոր
ամեն մի ուշացում մեծ հարված է հասցնում սպ-
րանքների տեղափոխման սլանների կատարմանը: Ահա
այդ էր սլատճառը, վոր նա իր ծղրտուն ու միեկնույն
ժամանակ վորեկտրություն առաջացնող ճայտով, շա-
րունակ քաջալերում էր բեռնակիրներին:

Ծովի ալիքներն աննկատելի կերպով ճոճում էին
նավը, իսկ այդ ճոճվող նավի կողին հեղել էր լայ-
նաթիկունք նորեկ նախատի Պոտապն ու կապտադույն
աչքերը հառել դեպի անհուն հորիզոնը: Այնտեղ, հո-
րիզոնի վրա, յերեւում էր հեղահետե հեռացող նավի
բարձր կայմը, իսկ կայմի շուրջը սլատվում էր ծըր-
նելույցից բաց թողնված սեվ ծուխն ու քուլա-քուլա
վեր բարձրանում և դեռ չհասած կայմի բարձրու-
թյան՝ ցրվում, անհայտանում... Հորիզոնից դետը,
իրար հետևալից, վազում էին այլեքները, խփում «Աշ-
խատանք» նավի յերկաթյա հաստ մեջքին ու ծփում:
Ա՛խ, այդ այլեքները, վոր յերբեմն ահռելի տեսք էին
ընդունում, ծանոթ էին Պոտապին, յեղել էին նրա
մանկության՝ և զվարճության ընկերները, նրանց հեռ
էր նա խաղացել, նրանց դեմ սլաքարել:

Բայց դա վազու՛ւց, շատ վազուց էր, յերը նա
նստում էր դեկի մոտ, իսկ հայրը բացում առադասու-
ները, կանգնում նավակի քթին ու հրամաններ նետում
վորդուն:

— Դեպի ձա՛խ, Պոտապչիկ, հոգիս:

Պոտապը կատարում էր հոր հրամանը և առա-
դատանավը մեղմորեն թեքում էր ուղղությունը դե-

պի ճախ ու հանդարտարեն ատաջ սահում՝ ճախի հարկի մակերեսի վրայով:

Գուրս եր դալիս լիալուսինը մնւթ ամպերի տակից, փշում եր մեղմ գեփյուսը, ուռեցնում ատաղասորն ու ատաջ սահեցնում նախալը:

Յեկ ատատ եր լինում նրանց վարսը լուսնկա ու հանդարտ գեղեցիկներին: Ու չառ եր սիւմ՝ աշղպիսի գիշերները Պոտասը, չա՛ա...

Բայց լինում էին զեպքեր, յերբ լուսինն արագորեն թափնում եր, մեղմ գեփյուսը փոխվում սարսափելի մրրիկի, ալիքները մեծանում ու դառնում ասեղի: Այդպիսի րոտներին հայրը հերկուշայան ջանք թափելով, ամբացնում եր կորատվող պարաններն ու հրամաններ արձակում արագ-արագ ու բարձր:

— Զախ, ա՛ջ, ա՛ջ, ճախ:

Ել չեր ասում «Պոտասը», «Պոտասչիկ», ել չեր կրկնում «հոգիս» բառերը: Յեկ Պոտասն ամուր կպչելով նախակի տախտակին իր մանկական ուժով չըջում եր զեկը հոր հրամանի համաձայն: Կատաղի աղմկով ու փոռնոցով հարձակվում էին ալիքները նրա վրա, ծածկում նրան ու ամբողջ ուժով քաշում զեպի ծովի խոր ու մութ հատակը: Իսկ Պոտասը լուռ, կապիկ պես ատամներն իրար սեղմելով, չըջում՝ եր զեկը նույնիսկ ջրի մեջ:

Անվախ եր Պոտասը, քաջ եր նրա հայրը: Յերբեք նրանք չէին շիտթվում այդպիսի ասեղի յեղանակներին:

Հայր ու փորդի դուրս էին դալիս փորսի նույնիսկ այնպիսի կատաղի յեղանակներին, յերբ ծովն այնքան սոսկալի յեր դառնում, փոր ձկնորսներն իրենց խրճիթի պատահաններին զեմ անելով վախեցած զեմքերը, սարսափահար աչքերով նայում էին նրա հսկայական ալիքներին ու մտքներում աղոթում ատածուն, փոր անցնի մրրիկն ու ծովն ընդունի իր խաղաղ տեսքը:

Բայց մրրիկը տեփում եր ժամեր. ժամեր անընդհատ այս ու այն կողմն եր շարվում ատաղասահալը. փորի մեջ նստած էլին հայր ու փորդի՝ արհամարհական ժպիտները զեմքներին:

Ո՛ր, ալիքիս յեղանակներին փորքան զեղեցիկ եր դանում Պոտասի հայրը, փորքան եր մեծանում սեյր փորդու կրճբում զեպի հայրը և ինչպիսի՞ սրբությամբ եր փորդին կատարում հոր պարզ, համատու ու հասկանալի հրամանները: Յեկ թվում եր Պոտասին, փոր փոշ մի մրրիկ, փոշ մի տարերք չեր կարող ընկճել կամ կրճանել իր հորը:

Բայց որբից մի սր հայրը կրճանակեց...

Գիշեր եր: Ամենամութ գիշերներից մեկը: Ծովը հուզվել էր գարնուրեղի կերպով: Նրանք գուրս էին յեկել վորսի Հայրը սովորականից սրախ եր ու հանգուցն: Հրամաններն արձակելիս ծիծաղում եր, յերբեմն ամապան եր կպցնում փորդուն:

— Պոտաս, զեկը չըջիր զեպի ճախ:

Ասադաստանալը խելազարի պես կոհակից-կոհակ եր թռչում, յերբեմն թափվում խոր ալիքների տակ, մինչև փոսկորները թրջում ատանց այն ել թրջված հայր ու փորդուն: Իսկ յերբ նախալը դուրս եր դալիս ալիքների տակից, շարունակում եր թուխքները, այդ ժամանակ հայրը թափ եր տալիս յերկար մայելով ծածկված գլուխը, թքոտում և ծիծաղելով բացականչում խափարի մեջ, խոսքերն ուղղելով փորդուն.

— Թյու, աղի յե ջուրը չե՞, Պոտաս:

Յերբ փորդին փոշինջ չեր դանում պատասխանելու, հայրը ծիծաղը քրթելի փոխարինելով, հարցնում եր.

— Հը, լեղիդ խո՞ւ չե՞ ճաքել:

— Զե—ատամներն իրար գարկելով, պոտասխանում եր փորդին:

— Հա՛, հա՛, հա՛, թրջվել ես միան պես ու վախից դողդողում ես, բիշ ել գիժացիր Պոտաս, զեկ յե՛ս

կրթարձնեմ ծովի սարսափները հաղթահարող հերոս: Ծովը շատերի գլուխն է կերել, շատերով գվարձացել, բայց դու պետք է ընկճես նրան:

Բայց ահա բարձրացավ ալիքը, մեծ ու զարհուրելի, խոհեց առաջատանավի կողին այնպես ուժեղ, վոր Պոտապը հավասարակշռությունը կորցնելով, ղեկը ձեռից բաց թողեց և ընկավ սառը ջրի մեջ:

Իսկ յերբ գլուխը ջրից հանեց, նախկը շրջված տեսավ:

— Հա՛յր, — ծվաց նա աղիողորմ ձայնով:

Չարնից ալիքը նրա գեմքին, բաց բերանը ւղիկն աղի ջրով:

— Հա՛յրիկ

Ալիքը նրան նավակից շարտում էր հեռուն, բայց նա համառությամբ պայքարելով նրանց դեմ, նորից լողում էր դեպի շրջված նավակը: Մի կերպ հասավ նավակին, ամուր բռնեց նրա քթից և աշխատում էր բարձրանալ վրան: Բայց ո՞ւր է հայրը, ինչո՞ւ չի լսվում նրա ձայնը, մի՞թե ընկղմվել է ծովի հատակը:

Նա սուգվում էր ջրի մեջ խորը, շատ խորը, ձեռքերով շոշափում էր հատակը, բայց չգտնելով փնտռածը, նորից դուրս էր գալիս ջրի յերեսը:

— Հա՛յրիկ, վորտե՞ղ ես . . .

Չկա հայրը: Յեթե լիներ, նա անշուշտ պետք է պատասխաներ իր կանչին: Ի՞նչ անել: Նա սկսեց լողալ դեպի ափը, հույս ունենալով, վոր կգտներ հորն ափում: Բայց թեվերը հոգնել էյին, նրանք շատ գանդազուրկյամբ էյին շարժվում, իսկ գլուխն այնքան էր ծանրացել, վոր յուրաքանչյուր մի բուդելից հետո թաղվում էր ջրի մեջ:

Սակայն տիրում յերեկում էյին լույսեր: Այլ լույսերը դեպի իրենց էյին բաշում Պոտապին: Յեվ նա թափահարելով հպնած ձեռքերն ու վրաներն ստաջ էր լողում:

Իսկ յերբ ափ դուրս յեկավ, նա անշունչ փռվեց դեպին:

Ու գառավ Պոտապը ծովի վրեսերիմ թշնամին:

Ծովը խոհեց նրանից սիրելի հորը, իսկ նա ւղիկն դեպի ծովը կատապի ատելությամբ: Այնուհետև մենակ էր նա դուրս գալիս վորտի: Վոչ մի սարսափելի յեղանակ նրան վախեցնել կամ կանգնեցնել չէր վարող: Նույնակ պառավ մայրն էր լացով ու աղաչանքով չէր աղդում վորդու վրա:

Վորդին ցանկանում էր լուծել հոր վրեժը: Նա լուծում էր իր վրեժն արհամարելով ծովի վրանդալից կատապուժյունը: Նա իր նավակով բարձրանում էր բարձր կոհակների վրա, իջնում դեպի ջրային խոր անդունդներն ու նորից առաջ սրանում:

«Վերադարձրու ինձ իմ հորը, անիրավ» — մրմնջում էր նա անիերջ:

Սակայն ծովը չվերադարձրեց նրան հորը: Նա քաջ ձկնորսին թաղեց իր խոր հատակում:

Յեվ այդ որվանից մեռավ ծիծաղը Պոտապի դեմքին, իսկ ծաղիսը, դառը հեղնական ծաղիսը՝ դառավ լացին փոխարինողը:

Յեվ այսպես անցյալի դառը հիշողությունները գալիս, աղաչարում էյին Պոտապին ու նրա սիրտը լցնում կորստի մեծ ցավով:

Այո, կոյում էր նա մենակ ծովի ալիքների դեմ, մինչև մի սարսափելի դեղեր, նրա նավակը զարնվեց խուժերին ու ջարդ ու փշուր յեղավ: Ինքն էլ մի քանի տեղից վերադարձված, մեծ հրաշքով կարողացավ փրկվել:

Այնուհետև նրառավ մոր սիրտն ընկավ միակ վորդուց զրկվելու մեծ վախը, և այլ պատճառով էլ նա թուճ չէր տալիս վորդուն անից դուրս գալու:

— Ել չեմ գնա ծովը, մայր, — առում էր Պոտապն ու վերկենում, մոտենում էր սան դռանը:

Մայրը վեր եր թռչում տեղից, կանգնում շեմքին ու յերկու ձեռքով ամուր դրկելով վորդու իրանը, դողդոջուն ձայնով աղաչում .

— Մի դնա Պոտապ . . . Չեմ թողնի վոր դնա, սուտ ես ասում, չեմ հավատում քեզ : Նա իրից ինձնից հորդ, կխլի և քեզ, թույլ չեմ տա, մի դնա . . .

Մայրը սխտամ էր սրտմաշուկ արցունքներ թափել : Յեկ ինչպիսի մարդկային սիրտ կարող էր ընդհանալ պատախ մոր արցունքներին :

Ու հրաժարվեց Պոտապը ծովից :

Յերկար ժամանակ նա վորպես նավամատուցյալին բեռնակիր, աշխատեց նավահանդատում : Իսկ հետո պատահեց նրան հոր հին բարեկամը՝ «Աշխատանք» բեռնատար նավի բոցման Տիմոֆեյը ու հրավիրեց իր նավի վրա աշխատելու :

Հրավերը Պոտապն ընդունեց մեծ ուրախությամբ, կարծես թե նա դրան էր սպասում :

Ճոճվում է նավը յեկ՝ վորք՛ան մեծ է նա : Քանի ձկնորսական առագաստանավեր կղզուի, Պոտապը յերե-
վակայել անդամ չի կարող : Միթե՞ կպչելով խոթե-
րին սա յել կարող է քարդ ու փշուր լինել, ինչպես կործանից իր հոր փոքրիկ առագաստանավը : Ա՛, այդ յերբեք չի կարող պատահել : Յերեսունհինգ ասուղձ ու անփախ մարդիկ են դեկավարում այս հակալահան նավը : Միթե՞ նրանց ուժեղ ձեռքերը թույլ կտան, վոր նավը կպչի խոթերին :

Այսպես էր մտածում Պոտապն իր կարգապահին աչքերը հառելով դեպի հորիցոնը, մինչև վոր նրան մտանցավ բոցման Տիմոֆեյը :

— Պոտապ . . .

• Պոտապը շքվեց գեղի բոցմանը և իր հարցական հայացքն ուղղեց նրա դեմքին :

— Պոտապ, վաղիր վերցրու Վասիլենկոյին յեկ էլի մի յերկու հոգի, հանեցիր պահեստից շրտոնն ու բակե-

րը քրեք խմելու ջրով : Տասնըհինգ բոցեյվա դործ է, խո՛ւմ ես :

— Խո՛ւմ եմ, կկատարենք ձեր կարգադրությա-
նը, — պատասխանեց Պոտապը և արագորեն հեռացավ :
Բոցման Տիմոֆեյը մնաց մենակ :

— Ի՞նչ անել, նավապետը դարձյալ պետք է հան-
դիմանի, այնինչ յես բոլորովին մեղք չունեմ : Միթե՞
յես եմ մեղավորը, վոր պահեստի դռները յերկու ժա-
մով ուչ բացին, վար բեռնակիրները շատ դանդաղու-
թյամբ են աշխատում . . . Շտապ թող դա ինձ մտն :
Առանց դալու յել դեռեմ, թե ինչ պետք է ասես,
ընկեր նավապետ Գրիշին :

**

«Աշխատանք» նավի պետ Գրիշինը վրդովված հայ-
հոյում էր իր ողնակամներին, բոցմանին յեկ նավա-
հանդատի բուրբ աշխատակիցներին : Թեպետ նրա կա-
յուտը շատ փոքր էր, բայց նա ջրայնաբար աչնպես
արագորեն էր հեռ ու դարձ անում, վոր սեղանի մոտ
նստած յերիտասարդ շտաբման Ուրբանը դարմանքը
գեմքին, հարցնում էր ինքն իրեն . «սատանան տանի,
միթե՞ այդպիսի պարարտ մարմինը կարող է այդքան
դյուրաշարժ լինել» :

Ի միջկայրոց, Ուրբանը նավապետի պարարտ
մարմնի դյուրաշարժությունն առաջին անգամը չէր,
վոր անհնում էր : Բայց այս անգամ սպասածից ավե-
լին էր :

— Ա՛, դու արդեն այսան՞դ ես, սիրելի բոց-
ման, — հանկարծակի տեսնելով բոցման Տիմոֆեյին,
չացականչեց նավապետ Գրիշինը :

Տիմոֆեյը թուրք կուլ տալով, ցածր ձայնով պա-
տասխանեց :

— Այո, այստեղ եմ նավապետ :

Նա վախենում էր : Ավելի շուտ պարտասխանու-
թյունը ժամանակին չկատարելու ամոթն էր, վոր
նրա մեջ ներշնչել էր այդ թեթի վախը :

— Ապա ասա, թանգակիրն բոցման, ժամը քանի-
սի՞ն նավը պետք է հանդիս խարխախցից:

— Հաստատ ասել չեմ կարող, նավապետ, յերբ
վերջացնենք բեռնումը, այն ժամանակ ել կճանա-
պարհվենք:

— Հաստատ ասել չես կարող, իսկ կարող ես
ասել, թե վոր ժամին պետք է ճանապարհովն յլենք:

— Ժամը յերկուսին:

— Իսկ այժմ ժամը քանի՞նն է:

— Յերեքը:

— Ուրեմն ուշացանք, ինչո՞ւ:

— Դե մենք ինչ մեկը ունենք, ընկեր նավապետ,
յերբ...

— Դու դեռ համարձակվում ես արդարանալ յեկ
մեկքը բարելու ուրիշների շնքների: Յեթե դուք
լերյոդկան նորոգելիք, ժամանակին մաքրելիք աքր-
յումները, ժամանակին կարգի դցելիք կարեները,
սի՞ թե նավը կուշանար, բոցման:

Բոցմանը խնցղեանի պես կարմրել եր ու խոտը
չեր դանում արդարանալու: Նրա լուսթյունը կա-
մաց — կամաց իջեցնում եր նավապետի բարկության
աստիճանը:

— Դու լսում ես, Բոցման, քեզ մեղավոր ես զը-
զում, նո՛ւ, այն ժամանակ յես քեզ տալիս եմ խիստ
հանդիմանություն: Իսկ այժմ հրամայում եմ, յերբ
ժամվա ընթացքում ամեն ինչ պատրաստել ճանապարհ
ընկնելու համար, լսում ես:

— Լսում եմ, նավապետ:

— Այժմ կարող ես գնալ:

Ամբողջովին կաս-կարծիք կարած, բոցման Տիմո-
ֆեյը դուրս յեկավ նավապետի կայտուից:

* * *

— Դե՛, տղերք, մի քիչ ել արագ շարժվեցիք և
տրոյումը կլցվի մեշտկներով, — բացականչում եր Կուզ-
ման ու ծանր հակերն անընդհատ իջեցնում ցած:

Վո՞ր մի բեռնակիրը նայելով Կուզմայի ուրախ
դեմքին ահամա չեր արագացնի իր վտաքերի քայլ-
վածքը:

— Շարժվում ենք, շարժվում, — պատասխանում
էլին բեռնակիրները ու ծանր մեշտկները ցած դնելով
նորից վազում պահեստը:

— Վերբա՛հ...:

— Վերբա՛հ...:

— Ձան, ջան, — պատասխանում եր Կուզման,
յերբ տեսնում եր, վոր «վերբա» բացականչություն-
ները հաճախակի յեն կրկնվում:

Իսկ խնցղեանի նման կարմիր, այս ու այն կողմ
վաղվող բոցման Տիմո էյն ամեն անգամ անցնելով
Կուզմայի մոտով, շարունակ զգուշացնում եր նրան:

— Արագ աշխատի, Կուզմա, միայն վերյոդկան
չիջացնես, մեկ ել բորտերը չջարդոտես հա՛, թե չե
դարձյալ սեմոնտի կեստենք:

— Յես յերեխա չեմ, ընկեր բոցման, դիտեմ ինչ-
պես կվարվին վերյոդկայի հետ: Իսկ ձեր զգուշաց-
ման համար շտրհակալություն — այս վերջին բա-
սերը նա հեղնորեն արտասանեց և բոցմանը հասկա-
ցավ այլ:

Սակայն նա Կուզմային ել ավելի չզրոյակելու հա-
մար լուսում եր, վաղինչ չեր ստում: Նա արագորեն
բարձրանում եր սպարդեկը, շտապեցնում այնտեղ
աշխատող նավաստիներին, վորպեսզի նրանք շուտ
վերջացնեն տախտակածածի ու պատուհանների լվա-
նալը: Հետո իջնում եր ցած, մտնում դեկային բա-
ժինը ստուգելու, թե դեկակալ Ֆիլիպշեկը վոնց և
յուզել դեկը:

— Բոցման, բոցման, — բղավեց շտուքման Ուր-
բանը դուրս դալով նավապետի կայտուից:

— Բոցման, բոցման, այլ ո՞ւր ես կորել:

Լսելով վոր իրեն մն կանչում, բոցման Տիմոֆեյն
տախտակ — թախտակ իր մարմինը դուրս նետեց գեկային
բաժնից ու կանոնեց Ուրբանի ստեղ:

— Ի՞նչ է պատահել, ընկեր Ուրբան:

— Բոցման, ի՞նչու չես դանդաղ ապրիս, չես վոր ճաշի ժամն անցել է:

Բոցմանը սարսափը դեմքին հանեց գրպանից ժամացույցը ու տեսավ, վոր ինքը չինոց բողբոջի չափ ուշացրել է զանգը:

«Անշուշտ նախապես դարձյալ պետք է հանդիմանութիւն անի» — անցավ բոցման Տիմոֆեյի մըտքով:

— Դե, վաղիր զանգը աուր, ել ի՞նչ ես անչարժացել, — ծղրտաց Ուրբանը բոցմանի վրա:

Բոցմանն ուշքի գալով և տեսնելով, վոր հանդիմանութիւնից ազատվելու հնար չկա, թքեց մի կողմ, ապա առամենքի արանքից ինքն իրեն մի լավ հայհոյելով վաղեց դեպի նախի քիթը:

— Զրբընդ, գրբընդ, գրբընդ...

Նախաստիները հավաքվեցին ճաշարան: Առաջին տեսակի կերակուրն ուտելուց հետո, նրանք սկսեցին յերկրորդն ուտել, յերբ ներս վաղեց Կուզման:

— Կուզմա, աչտակ արի...

— Կուզմա, ինձ մտա նստիր...

— Կուզմա աչտակ լավ է...

— Կուզմա'...

— Մպասեցե՛ք, սպասեցեք, — ականջները փակելով ծղրտաց Կուզման, — յես պետք է նստեմ բոցմանի կողքին:

Բոցման Տիմոֆեյը խոտոված յերեխայի նման գլուխը թեքել նր ամանի վրա ու անձայն, կարծես ինչ վոր մտքերի մեջ խորատուզով՝ իր ճաշն եր ուտում:

— Հը, ի՞նչ ես մոտեց կախել, չլինի նախապես ար դարձյալ հանդիմանել է քեզ:

— Եդ քս դարձը չե, — մրթմրթաց բոցմանը հաստ րեխերի տակից:

Կուզման տեսնելով, վոր բոցմանը բնավ կատակելու արամադրութիւն չունի, դարձավ դեպ խոհարարուհին:

— Դե, մորաքույր Յելիզավետա Կուզնեցովնա, դու ներքի ուշանալուս համար, յեթե բանե մնացի ուտելու, ապա խնդրում եմ:

Խոհարարուհին, վոր բառասունամյա հասարմարմին, լիքը դեմքով մի կլին եր, առանց պատասխանելու, գլուխը հանեց խոհանոցի փոքրիկ պատուհանից և կանչեց:

— Նաստյա'...

— Ի՞նչ է, աչտայ Յելա...

— Կուզմայի համար կերակուր բեր...

Կարմրաթուշ, դեղնեկադեմ Նաստյան, յերկու տեսակի կերակուր բերելով, գլեց Կուզմայի առաջ ու հետո սկսեց սեղանի վրայից հավաքել դատարկ ամանները:

— Աղափնյակիս ձեռքով բերած կերակուրը պետք է վոր համեղ լինի, — ասաց Կուզման և սկսեց ազահոլթյամբ ուտել, մերթ րնդ մերթ աչքով անելով ամանները հավաքող Նաստյային:

Նաստյան կարմրեց:

* * *

Յերեկոյան դեմ, յերբ արեւը մայր եր մտնում, ծովը հրաշագեղ եր: Նա բոլորովին խաղաղ եր: Նրա հարթ փայլուն մակերեսի վրա ալիքային կնճիռներ չէին յերեվում: Այդ ժամանակ նախն աչքայես հանդարտորեն ու զուրալի կերպով է առաջ աահում, վոր կուրբիկներում ու կայուտներում նախաստիները քնում են ինչպես ցամաքի վրա—խաղաղ ու անդորր քնով:

Ահա աչքայեսի մի հանդարտ յերեկո յեր, վոր «Աշխատանք» նախը դուրս եր յեկել Մախաչ-Կալա նավահանգստից, կտրում եր ծովի հարթ մակերեսը, իր հետեվից թողնելով — ջրային յերկար ու հեռոցհետ լաջնացող ժապավենը:

Նալի վրա ջերին յերեւում վնճ նախաստիները, վնճ հաստամարմին բոցմանը և վնճ էլ նախաստինն իր սննդանոցներով: Միայն ստաբիլի վրա, հեռավարակը ձեռքին, կանգնել էր նախաստին յերկրորդ սննդանոց վան Սերգեյեվիչը ու նայում էր դեպ հեռուն: Յերբեմն նա մոտենում էր դեպի յերկինք ցցված խողովակին, բերանը մոտեցնում նրա լայնացրած անցքին ու կարճ հրամաններ նետում դեկապարին:

— Տասնութ աստիճան դեպի ձախ:

— Կա, ասանութ աստիճան դեպի ձախ—կրկնում էր կայտառ ձայնով դեկավար Ֆիլիպչիկը և վարդատորեն կատարում հրամանը:

— Այժմ ընթացքը պահել ուղիղ:

— Կա, ընթացքը պահել ուղիղ:

Յեվ լողում էր հսկա նախն ուղիղ, առանց այս ու այն կողմ թեքվելու, առանց որոտվելու:

Արեվը մայր մտավ:

Սեվ գերեզման գրեզեց ծովի գեղեցիկ յերեսը:

Նալի վրա վառվեցին երեքտրական յուշերը: Նա նմանվեց մի հրեշի՝ վառվումն աչքերով, վորը փրնչոցներ հանելով իր հուժկու կրծքով պատում էր հետըհետե հոխորտացող ալիքները և առաջ ընթանում:

Փչում էր թեթեվ, սառը քամին:

Նախաստին Գրիշինը սպարդեկի վրայից համառորեն նայում էր դեպի առաջ: Մավարի մեջ նա վոչինչ չէր տեսնում, բացի այս ու այն կողմ գլորվող վարկանապես ծնվող և մարող կետերից: Այդ ալիքների իրար գառնվելուց առաջացած փրփուրներն էին: Ինչ վոր վատ նախագագումներ պաշարեցին նախաստին: Յերկար տարիների փորձերից նա գիտեր, թե վորքան սարսափելի պետք է դառնային այդ սպիտակ կետերը մեկ կամ յերկու ժամից հետո: Գրիշինը նայեց դեպի վերել: Չկար վոչ մի փայլող աստղ: Մո՞ւթ, խավար... Նա իր սրտուեց աչքերով ջկարողացավ տես-

նեկ, բայց դեպ, ինչ վորպիսի արագությամբ էր քամին քշում սեվ ու մոռյլ ամպերը յերկինքի վրայով:

Գրիշինը մոտեցավ դեպի դեկավար բաժինն անցնող խողովակը:

— Կանչել բոցմանին:

— Կա, կանչել բոցմանին, — ասաց նախաստիներից մեկն արագորեն դուրս վաղելով:

Չունցած մի քանի րոպե, բոցման Տիմոֆեյն արդեն կանգնած էր Գրիշինի առաջ:

— Բոցման, ծովն ինչ վոր սյուրբոլից է պատրաստում մեկ համար, այնպես չէ՞:

— Այո, նախաստին, յես էլ եմ այդ դրում:

— Դու, բոցման, գիտես նայել այն, վոր նալի տրյումներն իրենց մեջ պարունակում են 600 հազար փուլթ չափարեղեն:

— Դա ինչ հարց է նախաստին, ի հարկե գիտեմ:

— Այլևի լավ: Դու, իհարկե, գիտես նայել այն, վոր յեթե ծովը մեկ հրամանի յուր սյուրբոլիով ու յեթե մենք էլ նախորդ միջոցներ ձեռք չառնենք ապա այդ 600 հազար փուլից մեկ մտխալ ել չի մնա:

— Այդ էլ գիտեմ:

— Վորպեսզի այդ չպատահի, հարկավոր է սըրյումները ծածկել բերդեհաններով, հիմիկվանից, լսում ես:

— Լսում եմ:

— Կարող ես գնալ:

Նախաստիններն ի մի հավաքված նվազում, պարում, յերդում, ուրախանում էին: Կուրբիկի դուրը բանալով ներս մտավ բոցմանը:

— Տղերք, բոցմանին ու տյոտա Յելային մեջ տեղ քաշեցեք, — բղավեց Կուրմանը:

Նախաստիններից վոմանք վաղեցին դեպի բոցմանը, վոմանք էլ դեպի հաստամարմին խոհարարուհին:

Քրքըջարով և ուրախ լացականչությաններ ար-
ձակելով՝ նրանց իրար մոտեցրին: Բոցման Տիմոֆեյը
ձգնեց ինչ վոր բան ասել իրեն բռնող նախաստիներին,
բայց հետո նրա աչքին ընկավ խոհարարուհու գոր-
ցիքած կուրծքը, ախամա տռաջ մաղեց և ամուր ի-
րեն գրկելով, Յելիզավետա Կարպովնային սկսեց պը-
տույաներ գործել:

— Ապրես բոցման, աչդպես: Այժմ պտտվիր
Նաստյա: Մենք մենակ չենք,—բացականչում էր ան-
ընդհատ Կուզմանը:

Բոցմանը յերջանիկ ժպտաը դեմքին, հնդկահասակի
պես հպարտ, գլուխը վեր ցցած պարուժ էր հաստա-
մարմին խոհարարուհու հետ: Նախաստի Տիաը դըր-
կեց չեչոտ Վասյուսկային ու բոցմանին տնազ տալով,
սկսեցին պարել: Նախաստիները բարձր-բարձր քըր-
քըջացին, այնպես վոր դարձուկայի ձայնը թուլա-
ցավ: Բայց հիպնոսացնող պարն ախամա վարակեց
մյուսներին և մյուսները դույզ-դույզ անպարեկ մը-
տան:

— Պտտվիր Նաստյա, վերջին անգամ պտտվիր
ինձ հետ և թող այս պտույտները յերկար մնան քո
հիշողության մեջ: Գիտեմ, մի որ այս անիրավ ծովը
քաշելու յե ինձ իր հատակը: Փուլթ չե, յես ակուլա-
ների հետ հարսանիք կանեմ, կապրեմ նրանց հետ
յերջանիկ, ուրախ:

Հայացքն հատելով Նաստիայի կուրուցտ աչ-
քերին, Կուզման ժպտում էր: Նաստիան ամուր կպել
էր նրա կրծքին, պտտվում էր, լսում նրա խոսքերն
ու յերբեմն վախեցած բացականչում:

— Դադարիր, աչդպես մի խոսիր:

— Վախենո՞ւմ ես:

— Այո վախենում եմ:

Կուզման լսում էր: Ել ի՞նչ ասել նրան: Նա չէր
ուզում լսել իրեն: Իր խոսքերը նրա վրա տարսառ
էին ազդում:

— Ամուր մի՛ սեղմիր, Կուզմա:

Նաստիայի ձայնը սթափեցրեց Կուզմային: Նա
թեթևորեն ծիծաղեց ու հետո բղավեց:

— Տղերք, պարեցեք մինչև առավոտ:

Հանկարծ, թե պարող, թե նվագող և թե նայող
նախաստիները զգացին, թե ինչպես բարձրացավ նավի
հատակը, հատակի հետ և իրենք, հետո հատակը

չբջվեց կողքին ու բոլորը թափվեցին միմյանց վրա:
Շրխկոցով բացվեց կուրբիկի դուռը, ներս մտավ
հակա հատակով ու թրջված շորերով Պոտապը: Նա էր
ուժեղ բազումներով մարդկանց տակից հանեց ու
վտռեց վրա կանգնեցրեց Կուզմային և Նաստիային:

— Պոտապ, ի՞նչ է պատահել, — հարցրեց վա-
խից սպրթնած Նաստիան ու կպավ Կուզմային:

— Վոչինչ, բարձրացել է մի փոքրիկ փոթորիկ:

Այդ բուպեյին կլոր, բաց պատուհանից վչչոցով
ու փրփրալով ներս թափվեց ջուրը յեվ թրջեց նա-
վաստիներին:

— Կուզմա, — ձչաց Նաստյան ու համարյա ան-
չունչ կախվեց նրա վզից:

Չեչոտ Վասյուսկան կողպեց պատուհանն ու հե-
տո բարձր ձայնով ասաց:

— Եհե՛ տղերք, ծովը կատաղել է:

Կուզման բարձրացրեց կիսաչունչ Նաստիային
բայց հատակը դարձյալ թեքվեց և նա իր բեռան հետ
վայր ընկավ: Պոտապը փետուրի պես իր թեփերի վրա
առավ Նաստիային ու հաստատուն քայլերով տարավ,
պտուկեցրեց իր կոյկայի վրա:

— Կուզմա չգնաս, մնա ինձ մոտ, յես վախենում
եմ,— ամուր բռնելով Պոտապի ձեռքից՝ ասաց Նաս-
տյան առանց աչքերը բանալու: Պոտապը խլեց
ձեռքը և հետ քաշվեց, իր տեղը տալով մոտեցող
Կուզմային:

Կուզման Նաստիային ծածկեց վերմակով, ինչ
վոր խոսք ասաց նրան և կամեցավ դուրս գնալ:

— Մի դնա Կուզմա, աղաչում եմ, — աչքերը
բանալով վեր թռավ Նաստիան:

նա հետեվի կողմնացույցին, ինքն արագորեն ցած լե-
ջավ սուլարդեկից: Իսկ Բոցման Տխոֆեյն արդեն մի
քանի նավաստիների ուղնությամբ բացում էր կուրբի-
կին վրած արկղների բերանները: Լայն ու հաստ, ծա-
նրը բրեզենտները նրանք հազիվ հազ կարողացան
հանել: Քամին թույլ էր տալիս բանալ բրեզենտները:
Չարաճճի յերեխայի նման, նա մերթ սրան էր վայր
դցում, մերթ նրա ձեռքից էր խլում բրեզենտի ծայրն
ու այդ ժամանակ մյուսներն ստակալի ջանք էյին
թափում իրենց պահելու փութերի վրա: Յերբեմն
ալիքներն այնպես ուժեղ էյին զարկվում նավի կողե-
րին ու ցնցում նրան հանկարծակի թեքելով մի կողմի
վրա, վոր նավաստիներից շատերը վայր էյին ընկ-
նում, բայց յերեք ձեռքից բաց չէյին թողնում բրե-
զենտի ծայրերը:

— Կուզմա, բերել յերկաթե ձողերը, — հրամայեց
նավապետը:

Կուզման, վոր նաստիայի հետ բռնել էր բրեզեն-
տի մի ծայրից, կայտառ ձայնով պատասխանեց:

— Կա, բերել յերկաթե ձողը:

Ու չանցած մի քանի վայրկյան, նա ճոճվելով և
հավասարակշռությունը հազիվ հազ պահելով, յերկա-
թե յերկար, ծանր ձողն ուսին դրած բերեց և վայր
ձգեց արյունի մոտ: Նավաստիները, վորոնք ամուր
բռնել էյին բրեզենտի ծայրերը, նավապետի կարգա-
դրությամբ սկսեցին իջեցնել բրեզենտի մի կողմը:

— Իջեցնել ձախ կողմը, բոցման՝ լսում ես,
իջեցրեք ձեռ կողմը:

Բոցմանի խումբը կամաց-կամաց իջեցնում էր
բրեզենտի մի կողմը արյունի ձախ կողմի վրա:

Քամին ուռեցնում էր բրեզենտը, նրա հետ միա-
սին ող բարձրացնում նայել նավաստիներին:

— Անց կացնել ձողն անցքի մեջ:

Կուզման բերած յերկաթե ձողի մի ծայրը սկսեց
մտցնել արյունի ձախ կողի անկյունում գտնվող անց-
քի մեջ: Յերկաթե ձողը ծանր էր. մեծ սովորություն

էր հարկավոր, կատարելու այդ աշխատանքը: Բայց
Կուզման մենակ էր, նրան ողնում էր Նաստյան:
Աղջիկը Կուզմայի հետ միասին բարձրացրեց յերկաթե
ձողի ծայրը և այն անց կացրին անցքի մեջ: Մնաց
մյուս ծայրը:

— Նաստյա, խնդրում եմ, հեռացիր դու այստե-
ղից, — շնչաց Կուզման, սղջկա հետ սողալով դեպի
մյուս անկյունը:

— Վո՛չ, չեմ հեռանա, քեզ մենակ չեմ թողնի:

— Նաստյա, քո ներկայությունը ավելի յե դեմ-
վարացնում իմ աշխատանքը...

— Կուզմա, շուտ արա, — բղավեցին մի քանի
նավաստիներ, վորոնք դեռ պահում էյին բրեզենտը,
թույլ չտալով, վոր քամին նրանց դես ու դեն շարաի:
Կուզման ամբողջ ձեռք թափելով սկսեց ձողի ծայրն
անց կացնել յերկաթե անցքի մեջ, բայց անիրավ ձո-
ղը էր մտնում անցքը:

— Մի քիչ բարձրացրու ծայրը Նաստյա, — ասաց
Կուզման: Նաստյան թուլացած ձեռքերով ձողի ծայրը
վեր բարձրացրեց:

— Իջեցնել մյուս կողմը, — հրամայեց նավապետը:

Սակայն բրեզենտի մյուս կողմն իջեցնելը դժվար
էր: Քամին ամբողջովին մտել էր բրեզենտի տակ ու
մեծ ուժով քաշում էր վեր:

Մարդիկ հազիվ հազ էյին կարողանում իրենց
պահել վտանների վրա: Ամեն րոպե քամին կարող էր
նրանց բրեզենտի հետ բարձրացնել ու նետել վատաղի,
նրանց բրեզենտի գլխերի վրիկը: Իջեցնել բրեզենտի ամ
փրփրալից այլքների գլխերը: Իջեցնել բրեզենտի ամ
կողմն ու ամբացնել յերկաթե ձողով անհնարին էր:
Նավապետն այդ խնդրին հասկացավ:

— Բոցման, կանչել Պեդրոյին իր խմբով:

Բոցմանն արագությամբ վազեց նավի քիթը:

— Տղերք, քիչ դիմացեք, շուտով ողնող ձեռքեր
կզան, — խորախուսեց նավապետն ու ինքը գրավեց
բոցմանի տեղը:

Բայց հանկարծ ուժեղ մի ալիք ամբողջ թափով մոխեղեաբար զարկեց նալի կողին, ցնցեց այն և բարբ սափապաններին այս ու այն կողմը շարտեց: Քամին ուրախ վրոճնոցով նախաստիներ ձեռքից բաց թողնված ծանր բրեզենտոն այնպես շրջեց ձախ կողմի վրա, վոր իր տակն առավ այնտեղ աշխատող Կուզմային և Նաստյային:

— Նաստյա, — շնչաց Կուզման յերբ բրեզենտի ծանրությունը ծածկեց նրանց:

— Նաստյա, — մեկ անդամ ել ձայնեց Կուզման: Նաստյան չէր լսում Կուզմայի կանչերը: Նա անշունչ փոփել էր թաց բրեզենտի տակ և անձրեփի ջուրը, վորըն աղատարեն հոսում էր տախտակամածի վրայով, կիսով չափ գրկել էր նրա մարմինը: Կուզման մի ձեռքով ամուր բռնել էր ձողի ծայրը, իսկ մյուսով շոշափում էր այլևս մարմինը: Մարմինը տաք էր, իսկ սիրտը դանդաղ բարասում էր: Ի՞նչ անել, բարձրացնել ծանր բրեզենտը և դուրս գալ նրա տակից՝ Կուզման չէր կարող: Թողնել յերկաթե ձողն ու սողունի նման դուրս սողալ՝ նույնպես չէր կարող: Այդ Ժամանակ կը վռնչեանա 600 հազար փութ շաքարեղենը: Հայրենիքի առաջ ունեցած պարտքը ստիպեց նրան ամբողջ ուժը թափել, ձողի ծայրը խոթելու անցքի մեջ, վրկել շաքարեղենն ինչ զնով ել վոր լինի: Բայց ինչո՞ւ յեր ձախասն այդպես այրվում: Այդ ի՞նչ տաք հեղուկ է, վոր հոսում է ձախասից ներքև, վորոգրում աչքերն ու բռնանը, Կուզման վռչինջ վորոջել չէր կարողանում: Նա մի ձեռքով շոշափում էր ձողի անցքը, մյուսով ձողի ծայրն ուղղում նրա մեջ: Ծնչելը նրա համար դառնում էր անտանելի: Ող չկար: Այդ վո՞նց պատահեց, ո՞ւր կորավ ծովի մաքուր ողը:

Կուզման կորցնում էր գիտակցությունը, բայց նա մի վայրկյան անգամ չէր դադարեցնում աշխատանքը:

Հանկարծ Կուզման գլխից, թե ինչպես բարձրացավ իր վրայից բրեզենտի ծանրությունը, ինչպես քամին կատաղի վրոճնոցով իր թոքերը լցրեց մաքուր ողով:

Կուզման նույնիսկ լսեց, թե ինչպես մեկը բացականչեց:

— Ե՛հե՛, այստեղ մեկն անչնչացել է:

Կուզման ճանաչեց այդ ձայնը: Պոտապն էր, այդ միշտ մռայլ, միշտ տխուր հսկա մարդը:

— Տանել կայուտը, — բռնաձայն մյուսը: Կուզման նրան ել ձայնացեց: Դա նավապետի առաջին ողնական Պեղրոն էր, վոր ուներ յերկար, սև միրուք:

Կուզմային վերջապես հաջողվեց ձողի ծայրն անցկացնել անցքի մեջ: Նա որորվելով բարձրացավ, յերկու քայլ հեռացավ տրյումի մոտից: Վրոճները չեկին հնազանդվում նրան, իսկ գլխում ամեն ինչ պարում էր: Նա ձեռքը տարավ դեպի այրվող ձախատը: Ձեռքը թաթախվեց ինչ վոր տաք ու լարժուն հեղուկով: Նա ձեռքը մոտեցրեց աչքերին, բայց վորոջել, թե այդ ինչ հեղուկ է, նա չկարողացավ:

«Յերեի արյուն է» — անցավ նրա մտքով:

Նա յերկու քայլ ել առաջ անցավ ու հետո գրկեց ինչ վոր սյուն: Վո՞չ վոք նրան չէր նկատում, բորբը տարված էլին աշխատանքով, իսկ նա չէր կամենում նրանց կանչել: Թող աշխատեն, թող փրկեն շաքարեղենը: Նա կատարեց իր բաժին պարտականությունը: Իսկ այժմ վրոճներն ու ձեռները, դուրսն ու գիտակցությունը չէն հարստակրում իրեն: Ինչո՞ւ, այդ վո՞նց պատահեց: Հաշիվ տալ իրեն, նա չէր կարող: Հանկարծ նա հրեց Նաստյային: Ո՞ւր է հիմա նա: Քնած է:

Կուզման փակեց աչքերը: Նա լսեց, թե ինչպես բարձրացավ մի վշտոց ու հետո զգաց, ինչպես ջուրը ծածկեց իրեն մինչև ծնկները: Նա լսեց թույլ, շատ թույլ մի ձայն, վորը կանչում էր:

— Կուզմա՛...

Լսե՞ց, թե նրան այդպես թվաց: Բայց նա ուժ չունեցավ պատասխանել այդ կանչին: Հետո նա զգաց, թե ինչպես ցնցվեց նավը, ինչպես ավելացավ տախտակամածի ջուրը, վորը բարձրացնելով Կուզմային՝

սկսեց քնքշորեն տանել, ինչպես քնքշորեն տանում է մայրն իր քնած դավակին:

Պոտապը հոգնեց եր:

Նա նավի անկյունները մտավ, շոշափեց ամեն մի իր, կանչեց կոկորդը հոգնեցնելու չափ — բայց գլուխն նրան չկարողացավ: Նա հասկացավ, վոր իր փնտրածն այլևս չկա նավի վրա, վոր նա այժմ լուրում է ծովի փրփրալից այլքնների մեջ, լողում է յեվ կամաց-կամաց ընկղմվում հատակը: Այժմ նրա իրատեղվող մարմնի շորս կողմը շուրջ պար են բռնել ձկները, ու նրա հետ միասին դանդաղորեն ցած են իջնում դեպի ծովի հատակը: Այստեղ նրան, նա էլ չէր կարող:

Պոտապը կանգնել եր բորտի մոտ, ամուր բռնել յերկաթե ճաղերից ու նայում եր դեպի մութ, վտանոցող ջրային տարածութունը: Անձրեվը վերելից թափվում եր նրա բաց գլխին ու յերկար սեվ մազերը կախվելով՝ ծածկել էյին դեմքը:

Նա կրկին պատկերացրեց, թե ինչպես դեղեցիկ աղջկան դրեց մահճակալի վրա, ինչպես աղջիկն աչքերը բանալով, գոռաց սիրտ կտրատող ձայնով:

— Կուզմա՛ս, ո՞ւր է Գուզմա՛ս...

Նա ուզեց դուրս վազել, բայց Պոտապն իր ուժեղ ձեռքերով պահեց աղջկան:

— Յես իմ Կուզմային եմ ուզում, տվեք ինձ նրան...

Լաց եր լինում աղջիկն ու հուզում Պոտապի սիրտը: Նա խոտաացավ բերել կուզմային և աղջիկը համատարով նրան, աչքերը փակեց ու քուն մտավ: Նա դուրս յեկավ կայտառից:

Անձրեվը թափվում եր նրա բաց գլխին, մտնում ոձիքի մեջ, ատեցնում մարմինը, քամին ծածանում եր թրջված, յերկար սեվ մազերը, իսկ նա փորպես դիշերային արձան՝ վտռեբը լայն չոած, կանգնել եր ու նայում եր փրփրալից մեծ ալիքներին:

— Անիրա՛վ ծով:

Առավոտյան դեմ, վախճիտով դուրս յեկավ արեվը: Ծովը դարձյալ ընդունեց իր խաղաղ տեսքը: Անձրեվը դադարել եր, ու նավի թրջված տախտակամածը կամաց-կամաց չորանում եր արեվի ճառագայթների տակ:

«Այսաստանք» նավն իր սուր թթով կարում եր խաղաղված ծովի հարթ մակերեսն ու հպարտ-հպարտ առաջ լողում: Կարծես նա չէր, վոր մի քանի ժամ առաջ վորպես փոքրիկ չնչին խաղալիք, այս ու այն կողմն եր շարժվում՝ կատաղած ալիքների քծահաճույքներին յենթարկվելով:

Նավի թթին ծածանվում եր մի սեվ դրոշ: Գրոշի տակ բաց գլխով նստել եր Նասոյան ու գլուխը թեցելով, մեղմորեն արտասվում եր: Նրա դիմաց կիսաքեղով, մեղմորեն արտասվում եր Պոտապն ու տխուր աչքերով նայում եր աղջկան:

— Չկարողացա՞ր ազատել դու նրան, Պոտա՛պ...

Պոտապը գլուխն ուրիշ կողմ շրջեց ու վոչինչ չասաց:

Կուրբիկի դուռն մոտ նստած բոցման Տիմոֆեյի շուրջն էյին հայաքվել նավաստիներն ու լուռ հատակին էյին նայում: Տխուր էյին նրանց դեմքերը:

— Այո, տղերք. իմ անիթության շնորհիվ կործանվեց մեր սիրելի կուզման, — ասաց Բոցմանը յեվ գլուխը բարձրացնելով վեր, հանդիպեց նավաստիների հայացքներին: Նա իսկույն խոնհարեց գլուխը:

— Յես նրան ամենից շատ էյի սիրում, սիրում էյի վորպես 7 տարեկան փոքրիկ յեղբորս, բայց նա իմ հիմարթության զոհը դառավ: Ո, տղերք յես մեղավոր եմ, յես արժանի յեմ պատժի:

Բոցմանը դարձյալ գլուխը վեր բարձրացրեց: Այս անգամ բոլորը տեսան, թե ինչպես նրա խոտաախրոտ աչքերից հոսեցին արցունքների կաթիլներն ու մեկ — մեկ վայր ընկան գետին:

— Իսկ շաքարեղենը փրկված է, ընկեր նախապետ, — հարցրեց նավաստիներից մեկը:

— Շաքարեղենը փրկված է: Յես ու Պեդրոնը նոր նայեցինք: Միայն վերեվից մի քանի մեշուկ է թրջվել: Տղերք, մենք սոցիալիստական սեփականուն թյունը կարողացանք փրկել շնորհիվ մեր թանգագին ընկերոջ Կուզմայի անձնազոհության: Ի պատիվ ընկած ընկերոջ, խնդրում եմ հանել դիտարկները:

Նավաստները մերկացրին իրենց գլուխները: Փլուզող դեփյուռը խաղաց նրանց շեկ մաղերի հետ: Յեվ այդ ժամանակ հանկարծ բավեց տխուր թաղման նվազը: Բոլորի մարմնով հանկարծակի մի սառսուռ անցավ: Նրանք շրջեցին իրենց դեմքերը դեպի Կուբրիկի դուռը: Գարմոշկան ուսովը պցամ՝ այնտեղից դուրս յեկավ Կադաշենկոն — ցրված մաղերով, արցունքից թրջված աչքերով: Նա նվազում էր տխուր, շատ տխուր մահվան քայլերքը:

— Կուզմայի հիշատակին, տղերք, — ասաց նա ու կանգ առավ:

— Բավական է. — ասաց նախապետը, — թող Կուզմայի հիշատակը վառ մնա մեր հիշողության մեջ. թող նրա քաջարի անձնազոհությանն որինակ ծառուսի մեզ ամեն մի վտանգավոր դեպքում: Նորից յերդվենք, տղերք, վոր նրա պես քաջ ու անձնազոհ կլինենք սոցիալիստական սեփականությունը պահպանելու գործում:

— Յերդվում ենք:

— Իսկ այժմ բավական է սգալ: Անցնենք գործի և մեր յեռանդուն աշխատանքով հավերժացնենք Կուզմայի հիշատակը:

Նավաստները կամաց-կամաց սկսեցին ցրվել:

Ց Ա Ն Կ

	Եջ
Կղզին	3
Մահվան կիրճը	20
Շայքն ու Ռիխարդը	32
Աղջիկը	40
Հանդիպում	54
Հաղթանակի լեռը	74
Յերեֆի մահը	88
Դարմոն	102
Քառավանք	113
Ծովը	146



Պատ. խմբագիր՝ Գար. Սեվոստիան

Տեխ. խմբագիր՝ Զ. ԱՂԱՅԵՎ,
Սրբագրիչ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Сдано в набор 22/X-38 г. Под-
писано к печати 28/XII-38 г.
Печ. листов 5^{3/8} Колич. печ.
зн. 315.276. Ст. 364 Б.6 Зак. № 4054
Тир. 2000. Главлит № 4394. Тип.
„III Интернационал“ Баку, ул.
Саратовца- Ефимова, 29.

ՀՀ Ազգային գրադարան



NL0361072

50704

2 m. 50 q.

Çildi 50 q.

350

GEVORQ PETROSJAN

HEKAJƏLƏR

AZƏRNƏŞR

Bədii ədəbiyyat şöbəsi

Вакъ 1939

891.99
7-50